

116

116

116





ՈՅՂԵ

ԳՆԱԿ

ԿԵՐՐԼԱՐ - ԵԱՐԿ

ԼՍՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԲՈՌՈՅ
Ա. Է. ԶԱՄԻՆՇԵՆԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Էռնդակը պ. Ռ. Նսայանին . . .	3
2. Դեպի Երկիր	4
3. Մ. ՔՀ. ՈՍԿԵՐԻՉՅԱՆ.— Ուրախ է հայ ժողովուրդը	8
4. Ամենուրեք հնչում է կանչը ներգաղթի	9
5. Խրիմյան Հայրիկը և ներգաղթը	24
6. Մայր Աթոռ	26
7. Գահակալություն Երուսաղեմի Պատրիարքին	27
8. Պոլսի Ազգային Պատրիարքարանի պաշտոնական հայտարարու- թյունը	28
9. Հարգանքի Երեկո	29
10. Վ.— Վարդանանք	31
11. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ.— Ազգային հեղեղեցական ժողովը և նրա նշանակությունը	36
12. Ե. ՇԱՀԱԶԻԶ.— Միֆայել վարդապետ Սալլանքյան	41
13. Ն. ՄԱԳՍՈՒՏՅԱՆ.— Երդուժը ու աճող սովորությունը հին հա- յոց մեջ	48
14. Ս. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ.— Մեսրոպ Մաշտոցի ծագման մասին	55
15. Պրոֆ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Նոր վավերագրեր Պետրոս Մեծի ժամանակաշրջանի հայ-ռուս բարեկամական հարաբերություն- ների մասին	59
16. Օտարները հայերի և Հայաստանի մասին	71
17. Սովետական Հայաստանում	75
18. Գաղութահայ կյանք	79



Պատվեր 950

Հայկական ՍՍՌ Միճխտորների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ.
վարչություն № 2 տպարան, Երևան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ՔԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ
ԵՎ ՔԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ**

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՅՈՒ

**ԷԶՄԻԱԾԻՆ, „ԷԶՄԻԱԾԻՆ“ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
Redaction of the magasin „Echmiadzin“, Armenia, USSR**

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. Գ Է Ո Ր Գ Ա Յ Զ

**ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ
Պ. ՌՈՄԱՆ ԵՍՍՅԱՆԻՆ

Դերամեծար ՌՈՄԱՆ ԲՈՂԴԱՆԻ ԵՍԱՅԱՆ հարազատ որդի Մայր Աթոռ Սրբոց Կաթողիկէ Էջմիածնի Ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական:

Դոհովթյամբ սրտի իրագեկ եղանք Առաջնորդն Հայոց Իրանա-Հնդկաստանի ի Դերապատիվ Տ. Վահան Եպիսկոպոս, եթե Դուք ի վաղուց հետե հանապազ ցուցայ եր զմարդասեր ոգի Փրկչին մերո, քաջ գիտելով զքարոյական պարտիս Ձեր առ Ազգն մեր եւ առ Հայաստանյայցս Ս. Եկեղեցի առատածեռնությամբ մասն եւ թափն հանյալ եր հարդար վաստակոց Ձերոց հօգուտ եւ ի շինութիւն կրթական, քարեգործական եւ ազգային-եկեղեցական հաստատութեանց մերոց: Եւ զարդիս ոչ միայն ականջալուր եմք քարյաց գործոց Ձերոց, այլ ականատեսս վկա առատածեռն նուիրացն, զորս մատուցեք Ս. Էջմիածնի եւ Դահակայի Դորին ի հիշատակ անձին Ձերո եւ ծնողաց Ձերոց:

Արդ ի նկատի առյալ Մեր զառաքինի ընթացս եւ զարի գործս Ձեր այսու Հայրապետական Կոնդակալս, ի նշան Հայրական սիրո եւ գոհունակութեան, շնորհեմք Ձեզ զականակուտ ոսկյա Շքանշան առաջին աստիճանի հանուն Սրբո Հորն մերո Դրիգորի Լուսավորչին, որ լիցի Ձեզ մշտա-յուշ հիշատակ ի Մայր Աթոռոյս Սրբո Էջմիածնի եւ Մենջ:

Օրհնեմք զՁեզ եւ մաղթեմք ի Տյառնե պարգեւել Ձեզ եւ ընտանյաց Ձերոց Կյանս քարեքատիկս եւ երջանիկս ընդ համոյր ամս:

Ողջ լերուր զորացյալ ի Տեր եւ հավետ օրհնյալ ի Մենջ:

ԳԵՎՈՐԳ Զ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Դ Ե Պ Ի Ե Ր Կ Ի Ր



նշում է զիւ, հնշում ուժգին կանչը ներգաղթի: Հնշում է նա Հայոց շնաշխարհիկ երկրի հզոր կրծքից, հնշում ալեգարդ ու նվիրական Մասիս լեռան ստորոտից, քառագագաթ Արագածի երկնահուլ դագաթներից, Լավաւրի թափալատ լանջերից: հնշում է նա Հայաստանի էներգիայի մարգարիտ կապուտաշյա Սևանի փեշերից, մայր-Արաքսի ափերից, Արարատյան լայնանիստ ու մրգառատ դաշտավայրից, Լոռվա անդնդախոր ձորերից, խոլ Դերեղի կիրճերից: հնշում Շիրակի բերրի դաշտից, Հայաստանի էներգիայի երակ, կյանքի՝ անսպառ աղբյուր Հրազդանի զրնգուն ալիքների միջից, Զանգեզուրի լեռնաշխարհի քարանձավներից ու կուսական, մթին անտառներից:

Հնշում է նա ծաղկուն Հայաստանի լեռնահանքերի ընդերքից, հնշում հարյուրավոր պործարանների շշակներից, կոլխոզային բերքառատ դաշտերից:

Այդ Հայրենիքն է կանչում, կանչում տիրաբար իր պանդուխտ, տառագիր հայրենաբաղձ զավակներին, օտար հորիզոնների տակ դեգերող ու կարոտակեզ սրտերով սպասող իր սիրասուն որդիներին: «Դարձե՛ք որդիք իմ, դարձե՛ք տունը ձեր հայրական. ջարդեցե՛ք ընդմիջտ օտար ժայռերի վրա գաղթացուլը ձեր դարավոր ու վերադարձե՛ք շենջող հայրենիք մեր»:

Հայրենագուրկ, տարագիր, սփյուռքով մեկ ցրված տաղանդավոր հայ ժողովրդի զավակները իրենց սեւեռուն հայացքը միշտ Հայոց աշխարհի բարձրաբերձին՝ Մասսին ուղղած թախիծով ու կարոտով տարինեղ շարունակ սպասում էին ներգաղթի ավետիսին, այդ կենսաբեր ու թովիչ կանչին: Եվ ահա հնչել է արդեն այդ վաղուց սպասված հայրենադարձի կանչը:

Հայոց լեռնաշխարհից հնչող այդ կանչի ձայնը արագորեն տարածվեց սփյուռքի բոլոր այն անկյունները, ուր հայրենաբաղձ հայերի սրտերն էին բաբախում: Հայրենիքից հնչող կանչի արձագանքները տարածվեցին Իրանի սարահարթից մինչև Նեղոսի

կիզիչ հովիտը, մարդկության վաղեմի շրթան Միջագետքից մինչև Նոր Աշխարհը, Սիրիայից, Լիբանանից մինչև Բալկանները, Արաքսի ափերից մինչև կապուտակ Դանուբի, ջրառատ Ամազոնի ափերը, Հնդկական օվկիանոսի, գեղածիծաղ Բոսֆորի ափերից մինչև Խաղաղականի ու Ատլանտականի ափերը:

Ամենուրեք հնշում է կանչը ներգաղթի. «Դեպի երկի՛ր, դեպի երկի՛ր, Մայր Հայրենիքն է կանչում մեզ»:

Հայրենադարձի տենդագին նախապատրաստություններ են սկսվել ամենուրեք. թե Մայր Հայրենիքում և թե գաղութներում:

Մայր Հայրենիքը հզոր Միության ժամանակությամբ նախապատրաստվում է արժանավայել դիմավորելու գրկաբաց ընդունելու իր սիրասուն և պանդուխտ զավակներին. նա իր դուները լայն բացել է երկիր փութացող հայրենակարոտ որդիների առաջ: Քաղաքներում, ավաններում, գյուղերում Հայաստանի ողջ աշխատավորությունը՝ բանվորները, կոլխոզնիկները, ինտելիգենցիան ճիգ ու ջանք չեն խնայում հայրենիք դարձող իրենց հարազատ եղբայրների համար ստեղծելու կյանքի ու աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր նախապայմանները, որպեսզի նրանք հայրենի կտուրի տակ իրենց երջանիկ ու ապահով կյանքը կոփել ու վառ պապաքան կերտել կարողանան:

Հայրենադարձության նույնպիսի եռանդուն նախապատրաստական աշխատանքներ են սկսվել նաև գաղութներում: Աննախընթաց խանդավառություն ու ոգևորություն է տիրում գաղութահայ աշխարհում, սփյուռքի բոլոր անկյուններում ծուարած հայությանը գիշեր ցերեկ մի խնդիր է միայն զբաղեցնում—ներգաղթը. ամենքը, ամենուրեք ներգաղթի մասին են խոսում: Ամենուր մեծ ու փոքր, ունեւոր ու չունեւոր, արհեստավոր ու արվեստագետ գունդ գունդ արձանագրություն վայրերն են շտապում, անհագ կարոտով՝ սպասելով ներգաղթի քարավանի շարժման օրին. նրանք անհամբեր են և արբեցած մոտալուտ երջանկությունից շտա-

պում են կարողակեց սրտերով օր առաջ ոտք դնել դարերով երազած ավետյաց երկրի, դրախտավայր Հայաստանի հյուրընկալ հողի վրա: Օտար երկրներ ասպաստանած ողջ հայութիւնը կյանքի ապահովութիւն ու խաղաղութիւն գտնելու հույսով այսօր իր հայազն ուղղել է դեպի հայրենիք, դեպի Սովետական Հայաստան, ուր իր եղբայրները երջանիկ ու ապահով կյանքի հիմքն են դրել ու հաւ ժողովրդի վառ ապագան են կերտում:

Այսօր աշխարհի բոլոր ծայրերից գաղութահայութեան ուղիները ձգվում են դեպի Մայր Հայրենիքի սիրտը՝ դեպի Երևան. հեռավոր Ամերիկայից, Եվրոպայի, Միջին ու Մերձավոր Արևելքի երկրներից սկսվող այդ ուղիները վերջանում են Երևանում, որովհետև Երևան տանող ուղին՝ դա հայ ժողովրդի դարավոր գաղթականությանը վերջ դնող ուղին է հանդիսանում:

Գարձողները ամեն հնարավոր միջոցներով աշխատում են հայրենիք դառնալ կազմակերպված, որպեսզի գաու հենց առաջին օրվանից հնարավորութիւն ունենան տեղում գտնվող իրենց եղբայրների հետ միասին յօվելու հայրենիքի հաստուն վերելքի ու հեռանկարներով հարուստ գալիքի կերտման աշխատանքներին:

Սակայն քնած չեն նաև ներգաղթի թշնամիները: Հայ ժողովրդի երգվյալ թշնամիները, ինչպես միշտ, այս անգամ էլ կեղծ դիմակ հագած հանդես են եկել հայ ժողովրդի դիմադրական, անկեղծ խորհուրդները՝ տալու պատրվակի տակ: Նրանք փրստում են ներգաղթողների ականջներին, սուտ ու անհիմն լուրեր են տարածում ներգաղթի առաջացրած խանգավառութիւնը նսեմացնելու համար, որոգայթներ են լարում ներգաղթը կասեցնելու և ներգաղթի աշխատանքները ձախողելու համար: Օտար և հայազգի ֆաշիստ լրագրողներն ու կեղտոտ գրչակները վնասում են. «Ով ներգաղթել ցանկացող հայութիւն, լավ մտածիր, մի շտապիր դեռ, անորոշութեան մեջ է ամեն ինչ. քանի որ հայկական հողերը չեն վերադարձված տակավին, ներգաղթի ամեն մի փորձ դատապարտված է անիրագործելի բաղձանք մնալու, որովհետև ներկայիս Հայաստանը ի վիճակի չէ ձեռք ընդունելու, տեղավորելու, ձեռք անվտանգութիւնն ու խաղաղ աշխատանքը ապահովելու: Հորիզոնի վրա մոռալ ամպեր են կուտակված, ամբողջ աշխարհի վրա կախված է պատերազմի վտանգը, ինչու երթալ Հայաստան և

թնդանթի միս դառնալ ցարսկա-թյուրքական սահմանի վրա: Հայաստանի լեռնաշխարհում սովի ուրվականն է շրջում և բուն երկրի բնակիչները յուրաքանչյուր տարի տասնյակ հազարներով շվում են Սովետ Միության զանազան շրջանները՝ բախտ որոնելու. այդ իսկ պատճառով ներգաղթը աղետաբեր փորձանքի կարող է վերածվել հայ ժողովրդի համար, որովհետև ներգաղթողները պետք է տեղավորվեն ոչ թե Սովետ Հայաստանում, այլ Միության այլազան շրջաններում. դրա համար էլ անկեղծ հայրենասերը չպետք է մեկնի Սովետ Հայաստան, մինչև Հայաստանին չկցվին թյուրքիայի կողմից բռնազրավումած հայկական հողերը»:

Ստահող լուրեր են տարածում և աղավաղում Հայաստանի ներկայիս սահմաններում ընդունվելիք ներգաղթող հայերի թվի մասին եղած տեղեկութիւնները— այդ թիվը իջեցնելով 350—400 հազարից 30—40 հազարի:

Որոշ դեպքերում նրանք դիմում են տեղական իշխանութիւններին, խնդրելով խորհրդոտ հանդիսանալ ներգաղթին. կամ աշխատում են երկպառակութիւն սերմանել հայ ժողովրդի արյունակից եղբայրների մեջ կրոնական վեճեր հրահրելով լուսավորչական ու կաթոլիկ հայերի միջև: Երբեմն էլ բացարձակ հարձակումներ են դրժում Ազգային-Նկեղեցական ժողովի Հայաստանից վերադարձած պատգամավորների վրա՝ Սովետական Հայաստանի վերելքը դուրստելու համար: Շատ դեպքերում էլ դիմում են նուրբ քաղաքականութեան, աշխատելով գաղութահայ ժողովրդի ուշադրութիւնը շեղել ներգաղթի խնդիրներից տեղական նշանակութիւնն ունեցող խնդիրներ հարուցելով և եղած միջոցները ներգաղթի դրժելու տրամադրելու փոխարեն ուրիշ նպատակների հատկացնելով: Ամբաստանում, մեռադրում են կիլիկիո կաթոլիկոսութեանը, մեծական առաջնորդներին և առաջարկում, որպեսզի նրանք արգելք հանդիսանան ներգաղթին:

Սակայն իզուր են փորձում հայ ժողովրդի թշնամիները պատմութեան անիվը ետ շրջել. նրանց բոլոր փորձերը դատապարտված են ձախողման և նրանց անողորմ կերպով պետք է ճգմվեն պատմութեան անիվի տակ:

Գաղութահայ ժողովրդի ամենալայն զանգվածները նողկանքով ու արդար զայրույթով են վերաբերվում ներգաղթը կասեցնելու թշնամու բազմապիսի արգահատելի փորձերին:

և իրենց փրկության ուղին լուսավորող մի փարոս են միայն տեսնում՝ նվիրական Մասսի ստորոտում՝ Սովետական Հայաստանը. ու իրենց հայացքը հառած այդ լուսատու ջահին՝ կյանքի օվկիանոս մրրկահույզ ալիքները ձեռքնելով դեպի նրան են շարժվում, ջարենով իրենց ֆիզիկական ու բարոյական բոլոր ուժերը: Դադուխահայ ժողովուրդը լի է երախտագիտության անհուն զգացմունքով հանդեպ Սովետական մեծ Միության, հանդեպ հայ ժողովրդի ամենամեծ բարեկամ Ստալինի, հանդեպ Ռուս մեծահոգի ժողովրդի, հանդեպ սովետական իշխանության, որը իր փրկարար ձեռքը մեկնեց անդունդի եզրին գտնվող հայ ժողովրդի մնացորդ բեկորներին և ոչ միայն փրկեց նրան վերահաս սպանդից, այլև հրնարավորություն տվեց իր սեփական պետական կյանքով ապրելու, իր ազգային կուլտուրան զարգացնելու, բարեկեցիկ, երջանիկ ու ապահով կյանք ստեղծելու. և այժմ էլ ձեռնամուխ է եղել հայ աստանդական ժողովրդի դարավոր իղձերի իրականացմանը, նրան մի ընտանիքի շուրջը համախմբելու հնարավորության ստեղծման գործին: Դադուխահայ զանգվածները բերկրանքի անհուն զգացմունքով են հիշում միշտ մեծ Միության սրտից՝ կրեմլից հնչած ներգաղթի ավետիսի դողանքը:

Դադուխահայ արդի ու աշխատասեր ժողովուրդը հյուրընկալվելով օտար երկրներում, ապրել է երբեմն աղքատ, երբեմն ունեւոր կյանքով, մասնակցել է այդ երկրների վերաշինման աշխատանքներին, տվել է այդ երկրներին բազմաթիվ տաղանդավոր ներկայացուցիչներ, որոնք զարկ են տվել նրանց կուլտուրայի զարգացմանը, իր ջրբերանը է թափել օտար անապատները ծաղկած այգեստանի վերածելով, իր բազուկը չի խնայել օտարների համար դղյակներ կահուցելով, բայց աղքատ թե ունեւոր, ամենուր էլ եւս դիտվել է որպես օտար. և այժմ այդ մարդկային արժանապատվությունը ներկատացնող օտարությունը կվերանա, երբ նա վերադառնալով իր Հայրենիքը, կդիտվի որպես լիիրավ սովետական քաղաքացի:

Թշնամիների դավերը շաղկեցին և գաղութահայ ժողովուրդի ցավերով տառապող հայրենասերների վրա: Մեծ հայրենասեր Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա ոչ մի ջանք չի խնայում ներգաղթի և Սովետական Հայաստանի ծաղկման համար. շնայած իր ալեգարդ հասակին, նա անխոնջ աշխա-

տանք է ծավալել ներգաղթի հաջող կազմակերպման համար և որպես երկրորդ Մովսես պատրաստ է իր հոտը գաղթաշխարհից Մայր Հայրենիք՝ նվիրական Մասսի ստորոտն առաջնորդելու:

Ետ չեն մնում նաև մեր թեմական առաջնորդներն ու Ազգային-Նկեղեցական ժողովի պատգամավորները, որոնք էջմիածնից դառնալուց հետո խոշոր հայրենասիրական աշխատանք ծավալեցին գաղութահայության և Մայր-Հայրենիքի կապերի սերտացման համար ու այսօր էլ կրկնապատկված եռանդով աշխատում են ներգաղթի հաջող կազմակերպման համար: Նրանք իրենց ականատեսի պատմություններով հրահրում, սատարում են ազգահավաքումի մեծ գործը, գոտեպնդում, հուսադրում են պանդուխտ հայ ժողովրդին ապագայի վառ հեռանկարներով, անխնա պայքար են մղում օտար և հայազգի աղբյուրներից բխող ամեն տեսակ զրպարատությունների դեմ: Դադուխահայ ժողովրդի մյուս բոլոր լավագույն հայրենասեր զավակները նմանապես թե ազդու խոսքով և թե գործով իրենց օժանդակությունն են ցույց տալիս ներգաղթի վսեմ գործին:

Սակայն պահանջվում է է՛լ ավելին անել:

Ժողովուրդների կյանքում բախտորոշ շրջաններ կան, որոնք հնարավորություն են ընձեռնում տվյալ ժողովրդին ապահով ու բարեկեցիկ կյանք ստեղծելու, ազգային կուլտուրայի զարգացմանը խթանելու. այդպիսի բախտորոշ շրջան է ապրում այսօր բովանդակ հայ ժողովուրդը. նրա առաջ լայն հնարավորություններ ու հեռանկարներ են բացվել: Այս օրերին հայրենադարձությունը պետք է դառնա մեր ամենօրյա հոգացողության առարկան այնպես, ինչպես մեր ամենօրյա աղոթքները: Պետք է ուժեղացնել անխնա պայքարը բոլոր տեսակի ստոր գրպարտությունների, հեյուտաբեհների դեմ. պետք է անմիջապես կանխել ներգաղթը ձախողելու ամեն մի փորձ. անբույլատրելի պետք է համարել ներկա պահում այլ խնդիրներով զբաղվելը և միջոցները ներգաղթի գործին տրամադրելու փոխարեն ուրիշ նպատակների հատկացնելը, երբ բազմաթիվ ներգաղթողներ կարիք են զգում հագուստի, ոտնամանի, սնունդի, ճանապարհածախսի և այլն: Անբույլատրելի է նաև գաղութահայության ուշադրությունը շեղել այլ կողմ. գաղութահայությունը պետք է ունենա միայն և միայն մի սեռնակետ՝ Սովետական Հայաստանը, դեպի ուր նա պետք է ուղղի իր սի-

րագործով հայացքը: Պետք է խալ հիշել, որ ներգաղթի որոշումը—դա հայ ժողովրդի փրկության մակույկն է, որը պետք է վերջապես փրկի զարհուրելի նախաբեկության ենթարկված հայ ժողովրդի բեկորներին, որոնք կյանքի ալեծովի օվկյանի մեջ մաքառելով երկար սպառնցին ,որպեսզի իրենց փրկության ձեռք մեկնվի:

Այսօրվա մեր նշանաբանը պետք է լինի.

«ԴԵՊԻ ԵՐԿԻՐ, ԱՄԵՆ ԼՆՁ ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՄԱՐ»:

Մայր Հայաստանը Արագածի շողշողուն թագը գլխին, Սևանի էներգոգոհար մատանին մատին, կենսաբեր Հրազդանի գոտին կապած, վեհանիստ Մասիս ստորոտում ապահով ու երջանիկ կյանքի կենսախնդ ժպտը դեմքին գրկաբաց ձե՛զ է ապստում, պանդուխտ եղբայրներ:



Խղվարդի եռահարկ եկեղեցին հա ռավ-աբեմուտից (14-րդ դար)



ՈՒՐԱԽ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԻՐ



նցնող 1915 տարին ուրախության և ցնծության տարի մը եղավ հայ ժողովուրդին համար: Ասուպի պես անցնող հին տարվան մեջ հայ ժողովուրդը՝ ըլլա Հայաստանի և սփյուռքի մեջ խաղաղ և ջինարար տարի մը բոլորեց. զգայացունց վերիվարումներ տեղի չունեցան, այլ պատահեցան ուրախացուցիչ դեպքեր, որոնք հայ տարեգրության մեջ շատ քիչ անգամ պատահած էին:

Առաջին ուրախացուցիչ պարագան, Կիլիկիո դարավոր և պատմական Աթոռը, որ մոտ վեց տարիս ի վեր սևով պատված էր, Կիլիկիո ժողովուրդին և համայն հայության փափաքին վրա ունեցավ իր գահակալը, հանձին մեծանուն և միջազգային համբավի տիրացած Վեհ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի, որ լծվեցավ շինարար աշխատանքի Անթիլիասի Կաթողիկոսարանին մեջ: Կենդանացավ կրկին Կիլիկիո Աթոռը, արժանունտի Պետի մը իր վրա բազմելով:

Ուրախացուցիչ և ցնծալից պաշտպան մը նաև Հայաստանի և արտասահմանի եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչներու և աշխարհական պատգամավորներու ներկայութիւնը Ս. էջմիածին, ընտրելու և օծելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսը ի ներկայութեան Տանն Կիլիկիո Վեհ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին:

Հայ ժողովուրդին և մասնավոր սփյուռքի հայության պատգամավորները պատեցան Հայաստանի ամեն կողմերը, իրենց աչքով տեսան ծաղկած դրախտավայր Հայաստանը և իրենց վերադարձին բազմահազար հայրենաբաղձներու ներկայութեան պատմեցին իրենց տեսածները, ուրախ խապրիկներ բերին արդի Հայաստանի 25 տարվան մշակութի, գեղարվեստի, գյուղատնտեսութեան և աշխարհաբարոյական մասին և թույն հանեցին սրտերը:

Կիլիկիո Աթոռն վերջ Ամենայն Հայոց Հայրապետական Ս. Աթոռին վրայն ևս վերցուեցավ սև քողը և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեցավ համայն հայության հարգանքին արժանացած կարկառուն եկեղեցական մը՝ Տ. Տ. Գևորգ Զ. Չեղերքչյանը:

Ուրախ և ժպտուն է հայ ժողովուրդը, որովհետև հայուն դարավոր երազը իրականանալու վրա է: Հայ ժողովուրդը մեկ զըսպանակե լարված, Հայաստանի և սփյուռքի մեջ, պահանջողի դիրքի վրա է, որպեսզի հայուն արդար դատը պաշտպանվի, Հայաստանի միացվի բռնազրավումած պատմական հայ հողերը: Այս իրավացի պահանջին հետապնդութեանը համար հայաշատ կեդրոններու մեջ կազմվեցան Ազգային Խորհրդներ և ակնկառույց կոպասեն անոր արդար լուծումին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրտառու կոչով մը դիմեց երեք մեծ պետութեանց պետերուն, որպեսզի այս անգամ արդարութիւն ընեն հայ ժողովուրդին և գնահատեն անոր աչքառու զոհողութիւնները, և ունեցած մեծ բաժինը այս հաղթանակին մեջ:

Ուրախ է հայ ժողովուրդը, որ ներգաղթի խնդիրը այլևս իրականութիւն դարձած է, և այդ մասին պաշտոնական հրահանգը արդեն հասած է արտասահման և մոտ է այն օրը, որ սփյուռքի հայութիւնը պիտի վերադառնա իր մայր հայրենիքը և ձեռք ձեռքի տված Հայաստանի մեր եղբայրներուն հետ, պիտի շինեն ու ծաղկեցնեն հայուն պատմական հայրենիքը:



ԱՄԵՆՈՒՐԵՔ ՀՆՁՈՒՄ Է ԿԱՆՉԸ ՆԵՐԳԱՂԹԻ

ԶԱՐԵԶ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն



մե՛ն անգամ երբ ծոցա աղոթելու իմ Աստուծոյս,
Ի՛մ տունիս մեջ, քե ի՛ր Տունի՛ն, կամ տունի՛ն մեջ օտարներուն....
Ամե՛ն անգամ երբ խնդրեցի ազգիս համար հավատք ու հույս,
Դուն հո՛ն էիր, և ես կարծես միայն քեզմե՛ն էր խնդրեի:

Ամե՛ն անգամ երբ նայեցա մեր պատմության մագաղաթին,
Տեսա հուժկու Տրդատ Արեան, հսկա քարեր ուսին վրա,
Կը բարձրանար տաճարն ի վեր, կարծես ուսին ոչի՛նչ ըլլար,
Ու իր մաքուր ճակտին վրա ոչ մեկ քրտինք կը փալկար:

Կրկին տեսա Միածինին աղավաղեալ էջեր լույսե,
Քու նորաշեն ու խնկաբոյր գմբեթներուդ սրտին վրա,
Տեսա վարեն Լուսավորչին մաքրամաքուր դեմքը բարի,
Ու Տրդատին ժպիտը լուռ, ուր օրհնություն մը կը ծփա:

Տեսա ինչպես մեր ջանն անգամ կը պարուրեր քո մշուշով
Երբ մենք հզոր աշխարհակալ քաղաքներ իսկ ունեինք,
Ու քեզ տեսա այն օրերուն երբ մենք լռած ստրուկ էինք,
Ու քեզ համար երբ կոտեցանք քե՛ն՝ մարդուն դեմ և քե փողին:

Ես տեսա քեզ այս աշխարհի ճամբաներուն քովն ու վրան,
Իմ մոռնալով ու հոգնատանջ ժողովուրդիս հոգիին մեջ,
Դուն հույս էիր, դուն ապավեն, դուն հավատքի փառո՛ս եղար,
Ու մեզ քերիւր միեւն այս նենգ քանդուկի դարու շեմքին:

Ու հիմա ո՛վ անհիշաշար ու երկնահո՛ւ պ էջմիածին,
Լսե՛ խոսքը պաղատագին քո գաղթական բանաստեղծին,
Լսե՛ երգը, լսե՛ հոգին, լսե՛ ողբը քաղմալեզու,
Ու պատմե՛ զայն ձեր աշխարհքի աստուածներուն ու Տերերուն:

Ըսե՛ անոնց քե ամենքս ա՛լ հյուժած ենք ու ձանձրացեր....
Թե՛կ մենք հոս ու ամե՛ն տեղ պիտի ապրինք ու ստեղծենք,
Թե՛կ պիտի կո՛ւրծք տանք միեւակ, դարերուն դեմ ու աշխարհին...
Ըսե՛ անոնց, քե ամենքս ա՛լ հյուժած ենք ու ձանձրացեր:

Ըսե՛ անոնց քե մենք հիմա կը սպասենք ձեր մե՛կ նշանին.
Թե պատրաստ ենք, քե մենք հա՛յ ենք, տառապած ենք ու վիրավար,
Ըսե՛ անոնց քե անկեղծ է խոսքը այս եո՛ր բանաստեղծին
Այն շո՛ւտ քրե, անապարե ով փրկարա՛ւ էջմիածին:

Հալեպ

ԷԶՄԻԱՄՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱԿՈՐ ԱՐԵԱԿ ԳԱԼԵՄԲԵՐՅԱՆԻ ՃԱՌԻՑ

(Արտատպւած Հալեայի Հայ Ազգ. Խորհրդի կողմէ Լյուքսաբուրգում սարկված Ս. Հայաստանի 25-ամյա հոբելյանական տոնակատարության հանդեսին)

Հայ ժողովուրդը, որ տառապանքի դառնագույնը ճաշակած և սակայն Մասիսի պես կանգուն ու խրոխտ մնացած է, շատ ավելի լավ կզգա ու կզնհատեալ այսօրվան փառապանծ տոնին վեհ նշանակութիւնը:

Մեր ազգային պատմութիւնը եթէ պրպըտենք, հոն պիտի տեսնենք երկու կարևոր անկյունաքարներ, որոնք մեր ազգային ինքնապահպանման ամենեն կարևոր ազդակները եղած են: Առաջինն է հայ գրեթե գլուտը, որ ազատեց մեր լեզուն ասորական, հունական և պարսկական գերութիւնների Երկրորդը՝ Վարդանանց սուրբ պատերազմը, մղված զրադաշտ պարսիկներուն դեմ, որ վերջնականորեն փրկեց մեր սուրբ հավատքը և ինքնուրույն Ազգային Եկեղեցին: Եվ ահա կուգա ավելնալ երրորդ անկյունաքարը, որ տեղի ունեցավ 25 տարիներ առաջ, երբ հայ ժողովուրդը հասավ գերութենէ ազատագրման իր դարավոր երազին:

Այս պահուն կհիշեմ պատանեկութիւն օրերու իմ ուղեղիս մեջ անշնչելիորեն դրոշմված մահաֆի, հայոց ազատագրութեան քաղաքի մեծ ռահվիրային հրեղեն գրչին ելած հետագա բոլոր բաղձանքը:

Արդոյ՜ գալո՛ւ է մի օր ժամանակ
Մասիսի գլխին տեսնել մի դրոշակ,
Եվ ամեն կողմից պառնդալիս հայազգի
Դիմեն դեպ յաւրանց սիրուն հայրենիք:

Կա՛ հայ մը, որ սույն իտեալը երգած չըլլա իր երջանկութեան և տիրութեան պահերուն: Կա՛ հայ մը, որ իր հայրենաբաղձ սրտի պրկուած թելերուն մեջն թրթռացուցած չըլլա սույն աստվածային մեղեդին: Հայր իր տառապանքին, իր աքսորի ու խաչելութեան ճամբաներուն վրա իսկ աչքերը սեւեռած դեպի Արեւելք, մեր սիգապանծ Արարատին, երգեց ու երազեց հայրենիքի սերը:

Այո՛, երգեց երգեր ուղղված Արաքսին ու գեղատեսիլ Սեանին, Մասիսին ու Արաքսին, Աղթամարին ու Էջմիածնին:

Երգեց, տընեցավ ու ծառացավ բռնութեան դեմ, և արյունը հոսեցավ հեղեղներու պես և սակայն վերջապես, այդ արունալի եր-

կունքն ծնավ ազատ մանուկը, Անկախ Հայաստանը, շնորհիվ Թուա մեծ ժողովրդին եղբայրական օգնութեան:

Այս կայտառ մանուկը ունեցավ ու ծաղկեցավ այս 25 տարիներու կարճ շրջանին մեջ:

Մենք պատգամավորներս բախտը ունեցանք երթալու համբուրելու մայրենի նվիրական հողը, և սքանչանալու մեր անցյալի փառքերուն վրա, տեսնելու եղած ստեղծագործութիւնները, հիմաւալու իր կուլտուրայով և շոշափելու հայ ստեղծագործ ժողովրդի քրտնաշան աշխատանքի արդյունքը և զգալու այդ աշխատանքին ամենակարող վեհութիւնը:

1945 տարին ամբողջ աշխարհի և մասնավորապես հայ ժողովուրդին համար բախտավոր տարի մը եղավ: Այս վերջացող տարվան մեջ մենք տեսանք ջախջախվել հիտլերական Գերմանիո՝ որ կսպառնար կործանել ամբողջ աշխարհի քաղաքակրթութիւնը և բնաջնջել փոքր ազգերը:

Մենք տեսանք Կիլիկիո ու Էջմիածնի թափուր գահերու արժանալի գահակալներու օժոռը, և վերջապես ահա մենք կլսենք մեր սիրակարոտ Մայր Հայրենիքի սփյուռքի հայութեան դրկած կոչը, դեպի իր կարոտալի ծոցը դառնալու համար:

Մենք խորը հավատքը ունենք թէ այսքան մարտիրոսութիւններն և համաշխարհային այս պատերազմին այսքան զոհաբերութիւններն ընելն վերջ, պիտի տիրանանք մեր արդար պահանջներուն, հավաքելով սփյուռքի հայութիւնը ընդարձակված մայր հայրենիքին մեջ: Խաղաղորեն ապրելու և շինարար աշխատանքի լծվելու համար, որպեսզի հայն ալ կարենա իր բաժինն ունենա նոր աշխարհի ստեղծման մեջ:

Թող հաղթանակի այս քսանհինգամյակը ա՛լ ավելի ոգևորե մեզ նոր թափով մը դիմակալելու բոլոր խոշորագոյնները, և հասցնեն մեզ նորանոր վերելքներու:

Ապրիլ ուրեմն հիշատակը մեր բոլոր հայ նահատակներուն:

Ապրիլ Սուրիո Արաք եղբայր ժողովուրդը,

որ մեր դժբախտ օրերուն իր ասանջականութեամբ փրկեց մեր ժողովրդին մեկ մասը հերմակ ջարդեն:

Կեցցե մեր հայրենիք Սովետ Հայաստանը:

Կեցցե Ռուս մեծ ժողովուրդը, որուն հետև հայ ժողովուրդը:

Կեցցե Սպարապետ Ստալինը:

(«Ժողովուրդի ձայն» դեկտ. 27 1945 թ. Պեյրոս)

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ան, որ ժողովրդական լայն զանգվածներու հետ զփում ունի, կտեսնե և կզգա թե ինչ մեծ տեղ կը ունի Հայու հոգիին մեջ հայրենասիրությունը:

Թե՛ հրապարակով և թե՛ մասնավոր խոսակցություններու ատեն, երբ կխոսիս հայրենիքի մասին, անսովոր հուզում մը կտեսնես քեզ լսողներու նայուածքին մեջ: Կզգաս որ կարոտի զգացումը կուտի անոնց հոգիին մեջ, դուրսի աշխարհը մոռցնել տալու աստիճան: Հոն, իրենց մտքով ստեղծած հայու հայրենիքին մեջ կապրին այդ պահուն, կըթոթափեն օտարությունը, կփոխադրվին մըտերիմ շրջապատի մը մեջ, ուր ամեն ինչ հայ է: Անոնց համար հայոց դարավոր կյանքը կխտանա մեկ կետի վրա ու մեկ վարկյանի մեջ: Անոնց մտքին մեջ կշփոթվին Հայկը, Մեծն Տիգրանը, Վարդանը, ինչպես կշփոթվին Անին ու Երևանը: Կզգաս որ անոնց մտքին թռիչքը քու բացատրություններեդ անդին կանցնի. անոնք կգեղեցկացնեն ու կլուսավորեն քու պատմություններդ իրենց համար ընդունելի դուրսական աշխարհի մը վերածելով Հայրենիքը: Ուրիշ կերպով անհասկանալի է հայրենասիրությունը: Պաշտամունքի բարձրության հասած իրականություն մը միշտ գեղեցիկ է ու շքեղ: Անոր թերի ու տկար կողմերը միշտ աննշան են ու սրբագրելի, ու ան իր տկարություններով և թերություններով չէ որ կերևա, այլ իր առավելություններով և դրական կողմերով: Հայաստանը՝ հայ մարդուն, հայ հայրենասերին համար կախարդական էություն մը ունի: Իր բնությունով անմահ գեղեցկություն մը, իր պատմությամբ՝ մեծահարուստ գանձարան մը, իր մարդոցով՝ աշխատասեր ու ստեղծագործ ուժ մը, իր մշակութով և քաղաքակրթությամբ՝ օրինակելի աշխարհ մը: Այնտեղի դժվարությունները վաղանցով են ու տանելի, իսկ վաշխները դուրսական աշխարհի մը հմայքն ունին:

Անոնք որ անկե դուրս ապրելու դատապարտված են, ծանր զրկանքի մը տառապանքը ունին, իրենց աչքերը հոն հառած են ու կմրկին հոն ապրելու տենչանքով:

Սխալ ու շիտակ, լավ ու վատ՝ շատ բաներ լսած են հայրենիքի մասին: Մտիկ կրնեն բոլոր ըսուածները, բայց կհավատան միայն գովասանքին: Անոնց հոգիին մեջ զգացական հայրենիքը տիրապետող է. իրականը չի կրնար զգացականին տարբեր ըլլալ: Անխարդախ ու անշահախնդիր հայրենասիրություն է այս, որ կրնա առաջնորդել մեծագույն զոհողություններու և նվիրումի:

Մեր հայրենիքին ո՞ր ուժն է, որ հաշողած է այսքան զորեղ կերպով հմայել տալագիր հոգիները: Բացառիկ բովանդակություն մը ունի հայուն համար այդ հայրենիքը: Ան չի ներկայանար միայն իր հողի տարածությամբ, իր հարստությամբ, իր կյանքի նյութական և բարոյական տվյալներով, այլ խտացած ուժ մըն է, ապագա կարելիություններով մանավանդ հարուստ ու գաղափարական արժեքով՝ մեծ ու ճոխ: Երկար տարիներ անոր երազովը ապրած ենք, քանի մը անգամ մոտեցած ենք անոր տիրանալու երանության. հիմա կտեսնենք որ մեկ մասը մեր ժողովուրդին հոն ապրելու վայելքին արժանացած է ու այս պահուն կզգանք որ մոտ ապագային մեզի ալ կրնա վիճակվիլ նույն բախտը: Ու անհամբեր ենք, փուշի վրա նստող մարդոց պես:

Հայրենասիրական այս տրամադրությունը համատարած երևույթ է: Մեծ քաղաքներու թե փոքր շրջաններու մեջ, առևտրականին թե աշխատավորին մոտ: Բազմաթիվ էին անոնք, որոնք կուզեին Հայաստանը տեսնող աչքերը համբուրել և անթիվ՝ անոնք որ Հայաստանեն հիշատակ մը՝ քարի մը կտոր կամ ափ մը հող ունենալ կփափաքեին: Հայրենիքի հանդեպ սնուցած այս բուռն ըզգացման ի տես, անկարելի է զսպել հուզումը:

Միշտ ալ հայրենասեր եղող մեր ժողովուրդին զգացումները երբեք այս սաստկություն մեջ չէի տեսած: Մինչև ներկա պատերազմի հաղթական վախճանը, հայրենասիրությունը ինքզինքը ուտող և սպառող ուժ մըն էր. իր գոհացումը չգտնելու դատապարտված ըղձանք մը: Իր էությանմբ, հիմա, հիմնապես փոխված է և հավատա-

վոր մարդոց հատուկ կենդանի և շարժիչ ուժի մը կերպարանքը ստացած։ Պիտի ուզեի, որ մեր հայրենիքի վարիչները և աշխարհի բոլոր դիվանագետները տեսնեն խառն ժողովուրդին ցուցադրած այս զգացումները։ պիտի ուզեի, որ թյուրքերն իսկ հասկնային զայն, որպեսզի ըմբռնեն, թե ի՞նչ տեղ կգրավե հայրենիքը մեր կյանքին մեջ։ Մեր գոյության իմաստն է ու միակ նպատակը՝ մեր կյանքին։ Մենք չենք կըրնար ապրիլ այլևս առանց հայրենիքի։ Կը-

քաշկռտենք մեր օրերը, անոր հասնելու համար։ Թերթեր կկարդանք, դիվանագետներու գործունեության կհետևենք սրտատրոփ, մեր մեկնումի օրուան սպասելով այնպիսի։ Ու կհավատանք, որ պիտի տրվի մեզի այս անգամ մեր հայրենիքը։ Կհավատանք այլևս չթաղել մեր մարմինը օտար հողերու տակ։ Կհավատանք ապրիլ ու մեռնիլ մեր երկնքի արևին ու աստղերուն տակ։

ԼԵՎՈՆ ՉՈՐՄԻՍՅԱՆ

(«Արևմուտք» թիվ 34 1945 թ. Փարիզ)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս

ՏՈՒՆԴԱՐՁ

Եր մոտենեմ... անա՛ դռներդ կը բացուիմ, մի՛բան դիզված կարոտ ունիմ սրտիս մեջ, Պիտ արտասուեմ ես հուզումես ցեծագին Այն վարկյանին երբ աչքես տեսնեմ քեզ։

Պիտ հեռանամ այս անժամոք ասիերեն, Մոտ է ժամը անվերադարձ մեկնումիս, Ի՛նչքան ուժեղ է պատկերդ լուսեղեն, Որ կը գերե հայրենաբաղձ իմ հոգիս։

Կը մոտենեմ... ո՛վ սիրակյան հայրենիք, իմ պապերուս և մամերուս սրբավայր, եվ կը նայիմ ես հեռուեն գեղեցիկ Հովիտներուդ և դաշտերուդ ակաղձուն, Ուր հայ տղան և հայ աղջիկը սիրուն Անպարտելի ցեղիս նոր երգը կերգեն։

Պիտ հեռանամ այլուրի լայս ասիերեն, Զանք հույսիս միշտ պինդ բռնած ասիս մեջ եվ պիտի գամ ո՛վ հայրենիք, ծնւադէ՛ք Քու խորանիդ առջև վառել զայն, անմար Զանիդ լույսեն, և սրտիս խոր ու մթին Անկյուններն ու խորշերը հրդեհեն։

Կը մոտենեմ... անա՛ դռներդ կը բացուիմ, Բազում դիզված անմեռ կրակ սրտիս մեջ, Պիտ արտասուեմ ես հուզումես խուլաբար Այն վարկյանին երբ աչքես տեսնեմ քեզ։

ՀՈՎՍԵՓ ԹԵԿԵՐԵԱՆ

ԽԱՐԹՈՒՄ (ՍՈՒԴԱՆ)

(«Արաբ», հունվար 26 1946 թ.)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ն Ձ Ա Յ Ն Ը

Սփյուռքի հայության ականջին ոչ մեկ ձայն այնքան անուշ կհնչե, որքան մայր հայրենիքի ձայնը, որ սկսած է հնչել։ Մեր քաղցր հայրենիքը, մայր Հայաստանը, դարավոր գերութենե և ստրկութենե հետո, հաշտեցավ փշրել իր շղթաները և վերածնիլ առույգ ու կայտառ, ավելի քան երբեք։ Մեր հայրենիքը այսօր ո՛չ թշվառ է և ոչ ալ անտեր, ինչպես որ վարժված էինք երկար տարիներն ի վեր երգել։— «Մեր հայրենիք, թշվառ անտեր»։ Այո՛, էր երբեմն, բայց այսօր անցած են թշվառության և անտերության տարիները։ Այսօր վերջ գտած է թըշվառությունը՝ շնորհիվ հայ քաջակորով բազուկներու կատարած նվաճումներուն։ Այսօր անտեր չէ մեր հայրենիքը՝ շնորհիվ սովետ ժողովուրդներու եղբայրակցության և քաջամարտիկ հայ զորականներու։

Այս հայրենիքն է, որ այսօր հրավեր ուղ-

ղած է իր տարադիր զավակներուն՝ վերադառնալու իր ծոցը և լծվելու վերաշինության գործին, ինչ որ ամեն հայու սրբազան պարտականությունն է։ Հայրենասիրությունը պետք է գործնական ըլլա և կամ գործով պետք է հաստատվի, ապա թե ոչ ան կամա զգացում և խոսք, ինչ որ ոչ մեկ օգուտ կբերե հայրենիքին։

Ուրեմն ժամանակը եկած է երգելու։—

«Իմ Հայրենիքը գիս կը կանչե,
Հեռու եմ Հայաստանեն,
Հայու որդիւյն կը վայելե՝
Հեռու մնալ Հայաստանեն»։

Ոչ, հայու որդիւյն չի վայելի Հայաստանեն հեռու մնալ և քաջքշեղ թափառական հայու անստույգ և անորոշ կյանքը։ Հայու որդիւյն կվայելի ընդունիլ հայրենիքին հը-

րավերը և վերադառնալ անոր ծոցը, իրավամբ նպատակելու համար անոր վերելքին ու վերաշինության գործին:

Հայրենիքը պետք ունի աշխատող բազմակցներու Սփյուռքի հայությունն ալ ազատվելու համար միանգամ ընդմիշտ թափառական կյանքն, պետք ունի որոշ և հաստատուն կոտանի մը, հաստատուելու համար իր բույնը, իր ընտանիքը: Այդ հաստատուն կոտանը միմիայն հայրենիքը կրնա ըլլալ: Ուրիշ ամեն երկրի մեջ օտար է ան, ինչ որ ալ ըլլան քաղաքական տիրող պայմանները:

Ուստի, երբ սկսին արձանագրությունները, ամեն հայ պարտի արձանագրվիլ առաջին առթիվ: Ասիկա ստիպողական բան մը չէ, ալ առիթ մըն է անոնց, որ կփափաքին հայրենիք երթալ ու հոն հաստատուիլ: Ասիկա բարոյական պարտականություն մըն է:

Շատեր կվախնան երթալ, այն մտահոգությունով, որ անծանոթ են տեղիւն պայմաններուն: Ինչ որ ալ ըլլան այդ պայմանները, մեր ներկա պայմաններն լավ ըլլալու են: Այցելեցեք Անդրեանհրի գաղթականները, մտեք Սանճագ, Թիրո և ուրիշ քեմերը, և պիտի համոզվիք որ ատկե ավելի գեշ վիճակ չկրնար ըլլալ. ոչ ալ անոնցմն ավելի հին ու խարխուլ հյուղակներ կարելի է երևակայել: Հայաստանի ընծայելիք պայմանները ինչ որ ալ ըլլան, Անդրեանհրի պայմաններն շատ ավելի լավ ըլլալու են:

Ներգաղթողներուն կսպասեն հետևյալ առավելությունները.—

1. Հայրենի հողը, ուր իրենց զավակները կրնան հաստատուիլ, առանց ուծանալու և կորսուելու վախին:

2. Բնակարան մը, որ Անդրեանհրի տունն—

րեն ավելի լավ պայմաններ պիտի ունենա և առաջն ալ բանջարանոց մը:

3. Գործ և զբաղում ըստ յուրաքանչյուրին կարողության և կարիքին: Անգործության վախ չի կա հոն: Իսկ հոս հայուն մեծագույն մտահոգությունն է այդ:

4. Ձրի ուսում ամեն հայու որդիւն. ընդունակներուն ալ բարձրագույն ուսում՝ ձրի ըլլալու պայմանով:

5. Բժշկական և առողջապահական լավագույն պայմաններ:

6. Հանգստի և վալելի դյուրություններ, որոնցմն զուրկ ենք հոս:

7. Ապահովություն՝ ծերության և հիվանդության դեմ, և այլն:

Այս բաները արդեն բավականաչափ խրթան մըն են հայրենիք երթալու: Սփյուռքի հայությունը այս հիշված բաներն զուրկ է և զուրկ պիտի մնա միշտ սփյուռքի մեջ:

Շատեր ալ կառարկեն թե ներգաղթ կարելի չէ, եթե նոր հողեր չկցվին Հայաստանի, որովհետե ներկա Հայաստանը փոքր է և ի վիճակի չէ նոր բնակիչներ ընդունելու: Սըխալ է այս կարծիքը: Ներկա Հայաստանը կրնա իր ներկա բնակչության գեթ կրկինը ապրեցնել, չըսելու համար ավելին: Մնաց որ ներգաղթի հրավերը պատրաստող Հայաստանի վարիչները կկարծենք թե այդ առարկողներուն չափ խելք ունին: Եթե Հայաստանն ի վիճակի չըլլար նոր բնակչություն ապրեցնելու, անոնք պիտի շարտոնեին ներգաղթը:

Արդ, առանց ականջ դնելու հաճախ դիտումնավոր զրույցներու, պատրաստվինք արձանագրվելու պաղարյուն և հանդարտ մտքով: Մինչ այդ ամեն մարդ պարտի իր գործով զբաղելու:

Հ. ՍԱՐԳԻՍՅԱՆ

(«Առաւօտ» հունվ. 25 1946 թ. Պեյրոս)

Դ Ե Պ Ի Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Դո՛ւ կենսապարար մեր Հայրենիք, երբ այսօր մեզ կկանչես՝ մի՞թե կարելի է ապրել առանց քեզ, նույնիսկ մեր մեջք. երբ մեր անկարկները կարոտակեզ քեզ էին ուղղված քառորդ դար, որ կյանք մը ըսն է: Եվ այսօր երբ մեր աչքերուն առջև սրփռուած է քու քաջարի զավակներուդ գործերը զարդարուն, ու ջանքերը պտղալի, որոնք մեր հոգիները հպարտութեամբ և մեծ սրտերը ցնծութեամբ կլեցնեն: Մի՞թե կարելի է այլևս ուրիշ առանց քեզ, Երբեք: Մեր

միտքը՝ համակ մեր էությունը նետահար թռչունի մը նման թևը բացած վարկյան առաջ գիրկդ նետվիլ կուզես: Թող ամպերն ու խավարը մշուշով ծածկել ուզեն մէկ ճամբան, բայց երբեք քայլերնիս պիտի չհապաղին: Խավարը չի կրնար խռովել մեր հոգիները, զի քաջ գիտենք թե խավարը քեզմն հեռի, քեզմն զուրկ մնալն է ու գիշերը՝ քեզի մոռնալն է, մեր լույս հայրենիք:

Եվ այսօր, այս օտար աստղերուն ներքև տակավին պլպլացող մեր կյանքը ինչ որ

կերպագրեց, ինչ որ կերակրված էր ու դեռ ինչ որ մեր հոգիներում ցանկություններն ու մեր ձգտումներն ու հորիզոններն անհունապես վեր են՝ անոնք քույր են ու քու մայրական սրտեղ կրկին, դու ինքդ ես այդ բոլորը: Եվ եթե կա մեր կյանքին գերազույն նպատակ մը, այդ քեզ հասնիլն է, քու մեջ թափվիլն է ու մայրական կուրծքիդ խոցոտված սրտերնիս սեղմելն է: Առանց քեզի միթե կարելի է նպատակ, դու ինքդ ես նպատակ՝ Մայր Հայրենիք:

Ա՛խ, օտար արևը չըրավ մեր կյանքը շուշան, սոսին ու վարդ այլ՝ սոսկ կակաչ մը նահատակվածներու ոսկրածածկ անապատին մեջ. և մենք՝ մեծ եղբունի զարհուրանքներն խելագարած, անմխիթար ու անկարելիք երբ ցրիվ եղանք անգութ դահիճի ձեռամբ չորս ծագը աշխարհի, լաց ու մեղմուռ քամիով, մեր այդ ծով ցավին ո՛վ գթաց, ո՛վ խղճաց: Ո՛չ որ իսկ դո՛ւ, դու լացի՛ր, մայր հայրենիք: Ա՛հ այդ լացդ, լացդ քեզ ցնցեց ու քաջարի զավակներդ ոտքի հանեց, կրկին կուրծք տալու մահ սիրող գազանին դեմ: Հավակացդ պայքարը

սուրբ էր ու վսեմ: «Ձի ինչ կա թանկագին քանզ մարդկային կյանք», ըսված հիշատակն իմաստությունը արձագանքեց քու քաջարի որդոց սրտից մեջ, և այդ արձագանքը հաղթանակն իսկ եղավ: Եվ այսօր այդ հերոս զավակներուդ հոգին հաղթանակի հպարտությամբ լեցված երբ արյան դաշտից տուն կդառնան, իրենց եղբայրասեր ու անձկալից աչքերը ուղղած դեպի մեզ, կանչում են ձեզ, հրավերն կուղղեն: Կանչմը որ մեր հոգիները կվերացնեն ու մեր կակաչ սիրտերը շուշանի կվերածեն՝ կյանքի խանդովը գեղուն: Մի՞թե կարելի է այլևս ձեզմե հեռի ապրիլ ու այլ տեղ բարիք փնտռել, երբե՞ք: Եվ այս բանին գիտակից ու հավատալովոր հոգիքը մեր քեզ կփնտռեն Մայր Հայրենիք, կուրծքը աշխարհներուն տվող նավուն պես: Ամենի աշխարհի թող ծեծեն մեր կուրծքերը, փոթորիկն ու մահը թող սպառնան, պիտի շնորհակցինք մահվան սպառնալիքին՝ քաջ գիտնալով թե մահը՝ ապրիլն է առանց քեզի, մեր կենսատու Հայրենիք:

ՏԱՐՈՆՑԻ ՀՈՒՍԱԿ

(«Առաւօտ» փետրվ. 21 1946 թ.)

ԼԵՎՈՆ ԲՋՆՈՒՆԻ

ՏԱՐԵՔ ԻՆՁ ՏԱՐԵՔ ԵՐԿԻՐՆ ՀԱՅՐԵՆԻ

Հայրենի հողի կարոտն իմ հոգում,
Ես մտառում եմ հեռու ափերում.
Տարեք ինձ զմուլստ դաշտերը բերրի,
Տարեք ինձ, տարեք երկիրն հայրենի:

Թող տեսնեմ ծփան արտերը ոսկի
Լսեմ երգերը մարտի ու կոշի.

Նստեմ ես արծաթ ջրերի յափին
Դիտեմ ձեր դյուբոզ մարտական երթին:

Ու նայեմ, նայեմ շաբեբին անվերջ.
Ձեր սիրտը դեմ հիվանդ սրտիս մեջ,
Որ ես էլ լինեմ ձեզ նման զինվոր,
Որ ես էլ լինեմ ձեզ նման հերոս:

(«Լեռածնունդ» թիվ 240 1945 թ. Թեհրան)

Ն Ե Ր Գ Ա Ղ Ք

Ներգաղթի հեռագրին հրամարակությունը մեր նախորդ թվին մեջ, ընդհանուր խանդավառություն ստեղծեց Պաղեստինի հայ գաղութին մեջ:

Յաֆայեն, Երուսաղեմեն և այլ շրջաններեն զանազան գրություններ ստացանք, որոնցմով շատ մը ազգայիններ կուղեն իմանալ թե երբ պիտի սկսվի ներգաղթի արձանագրությունը:

Խանդավառությունը ընդհանուր է. առանց դավանանքի, դասակարգի և կուսակցական խտրության:

Ներգաղթող հայերու Ընդունման և Տեղա-

վորման Կոմիտեին կողմն ուղարկած հարցարանը պարզ է ինքնին:

Մայր Հայրենիքի կառավարությունը հարց չի դնել թե ներգաղթողը ի՞նչ կրոնքի կամ ի՞նչ կուսակցության կապականի և կամ հասարակական ի՞նչ դիրքի վրա կգտնվի ան. բավական է, որ հայրենասեր հայ մը ըլլա ներկայացողը:

Ազգահավաքումի կոչ մըն է, որ կուղեն Սովետական Հայաստանի Կառավարությունը աշխարհացրիվ բոլոր հայերուն անխտիր իսկ արտասահմանի հայությունը մեկ մարդու նման իր պատրաստակամությունը կը-

հայտնեան անսահման ոգևորությամբ և վճռական պատրաստակամությամբ ընդառաջելով հայրենիքին եկող կոչին:

Հայրենիքի դռները բաց են այսօր Հայաստանասեր բոլոր հայերուն առջև:

Լիբանանի մեջ սկսած արձանագրությունները ցույց տվին թե արտասահմանի հայությունը ինչպիսի սեր կտա՞ն դեպի Մայր Հայրենիքը:

Լիբանանեն հասած թերթերեն կիմանանք, թե 8 օրվա ընթացքին ներգաղթի գրասենյակներուն մեջ արձանագրուած հայերուն թիվը 40 հազարի հասած է Պեյրուքի մեջ:

Պաղեստինի հայաշատ շրջաններուն մեջ ժողովուրդին առօրյա խոսակցության նյութը ներգաղթն է:

Բանվորը կխոսի Հայրենիքի մեջ իր ապագա գործի մասին: Արհեստավորը իր գործիքները կփոխարինե նորերով պատրաստ գտնվելու նպատակով ներգաղթի օրվան:

Առևտրականը իր ապրանքները հայրենիք փոխադրելու մասին կխորհի:

Դեպի Հայրենիք՝ այս է բոլորին մտածմունքը: Անով մեկտեղ, չի մոռնանք ըսելու, որ կան մարդիկ և կամ խմբավորումներ, որոնք «խոհեմության, լքողության, հեռատեսության» հին և ժամանակավրեպ եղանակներ կերգեն ժողովուրդին: Հայաստանի մեջ... ցուրտի սաստկության առասպելներ կհյուսեն: Կոշիկի չզոյության հեքիաթներ կստեղծեն: Գաղթականության, թշվառության ուրուականներ կներկայացնեն ժողովուրդին:

Ժողովուրդին ունեցած խանդավառությունը ներգաղթի նկատմամբ ինքնին փաստ մըն է, և բոլոր մութ ուժերը պիտի ստանան իրենց պատասխանը, երբ սկսին ներգաղթի արձանագրությունները և ժողովուրդը ցույց տա Հայրենիք մեկնելու իր հաստատ կամքը:

Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(«Միութիւն» փետրվ. 10 1946 թ. Հայֆա)

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԱՌԹԻՎ

Նախապես եղած պաշտոնական ծանուցման համաձայն, մայրաքաղաքի Ս. Աստուածածին մայր եկեղեցում, Ս. պատարագից հետո, կատարվեց մաղթանք սփյուռքի հայության Հայաստան վերադառնալու արտոնության առթիվ:

Պատարագին երգում էր «Կոմիտաս» երգչախումբը: Եկեղեցին լիքն էր հոծ բազմություն:

Հանդիսավոր մաղթանքը կատարվեց Իրանա—Հնդկաստանի և Թեհրանի թեմերի թեմակալ Առաջնորդ Գերապատիվ Տ. Վահան եպիսկոպոս Կոստանյանի ղեկավարությամբ և քահանայական դասի մասնակցությամբ:

Մաղթանքից հետո թեմակալը ղգացված մի քարոզով հուզեց ներկաներին, որոնց մեջ արտասովորներ էլ կային:

Հաղորդելով Մոսկվայի, Երևանի և այլ ձայնացիների տված ավետիսը՝ Հայաստանի դռները բացվելու մասին, թեմակալ Առաջնորդն իբրև թարգման հայ հավաքականությունների, իր ջերմ խնդակցությունը հայտնեց և շեշտեց, որ դրանով կատարվում է սփյուռքի հայրենաբաղձ հայության բոլոր ցանկությունը և լայն հնարավորություն է տալիս նրան վերադառնալ իր հայրենի երկիրն ու իր աջակցությունը բերել Հայրենի-

քի վերելքին և իր աշխատանքով զարկ տալ նրա ծավալուն բարգավաճման: Մատնանշելով կառավարության ընձեռած խոշոր հարմարություններն ու աջակցությունը՝ որ կայանում է ներգաղթողների իրենց առանց մաքսի անցկացնելու և բնակարանի կառուցման 50 տոկոսը հոգալու մեջ, թեմակալ Առաջնորդը շեշտեց, որ ոչ մի կառավարություն այդպիսի օգնություն չի արել, երկրից դուրս գտնվող իր հատվածներին:

Անդրադառնալով ապա աշխարհի ամենահաջավոր՝ 1915 թվի Ապրիլյան Նոյեմբին, հիշելով անմեղ մի ժողովուրդի մարտիրոսական տառապանքը, ոճրածին թշնամու գործադրած գաղանալին սոսկումները, թե տարագրության ճանապարհին և թե կիզիչ անապատներում, Սրբազանը ոգեկոչեց հայ մտավորականների, ղեկավարների և մեծ նահատակների հիշատակը, առանձնապես շեշտեց Կոմիտասի սոսկալի ապրումները և հուզվածով հիշեց այն սրտաճմլիկ տեսարանները, որոնց ախանափես էր եղել, աղետի այդ օրերին էջմիածին ապաստանած փախստականների կշանքից:

— Սոսկալի այդ տեսարաններին ականատեսները միայն կարող են չափել եղեռնի ահավորությունը, — ասաց Սրբազանը տխրությամբ, ավելացնելով, որ թշվառությունը տեղի մի քանի տարի:

Նկարագրելով Հայաստանի ամրապնդման և վերելքի ստեղծագործական աշխատանքները, Սրբազանը շեշտեց խորհրդային Միության հզոր հովանավորությունը, որի ապացույցներից մեկն էլ ահա ներգաղթի արտոնությունն որոշումը: Ապա անդրադարձավ այն հայրենաբաղձ ցանկություններին, որ արտահայտել է սփյուռքի հայությունը Հայաստան վերադառնալու համար, այն միջնորդության, որ խորհրդային Միության գործավարների խորհրդի մոտ կատարել է Հայաստանի կառավարությունը և այն դիմումին, որ երեք մեծ և դաշնակից պետությունների արել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գեղորդ Զ խնդրելով իրագործել Սևրի դաշնագրի Հայաստանին վերաբերյալ մասը և հայության վերադարձնել իր պապենական հողամասերը, որտեղ գտնվում են իր սրբությունները, իր նախնյաց գերեզմանները և իր հիշատակարանները: Վեհափառ Կաթողիկոսը պահանջել է, հայության վերադարձնել բռնագրավուած իր Հայքենիքը, որպեսզի հայությունը թողնելով իր թափառական կյանքը, վերադառնա իր սեփական տունը, վերաշինի իր բուն իր հարազատ երկրում և նվիրվի իր շինարար աշխատանքներին:

Խոսելով ի սփյուռս աշխարհի ցրված հայ հավաքականությունների մասին, Սրբազան Առաջնորդը գոհունակությամբ վկայեց, այն բարեկեցիկ վիճակը, որ ունեցել է 340 տարի և այժմ էլ ունի իրանահայությունը:

Տեղ լինելով տնտեսական և մշակութային հարմարությունների, Իրանի հայությունը ապրել է խաղաղ, պարսիկ ժողովրդի հետ համերաշխ և սիրով:

Բարեկեցիկ վիճակում է նաև ամերիկահայությունը: Սակայն այլ գաղութներ շատ են տառապել մանավանդ պատերազմի արհավիրքներից:

Քարոզի վերջում կոչ անելով սփյուռքի հայության խուռներամ վերադառնալ իր գեղածիծաղ Հայրենիքը, ապրելու ալեգարդ Մասիսի և ձյունապատ Արագածի հովանու տակ, Սրբազանը, ամբողջ գաղութահայության թարգմանր հանդիսանալով, քերթ խոսքերով հաջողություն և հարատևություն մաղթեց խորհրդային Միության՝ հայտնական ներգաղթի որոշումը տալու առթիվ, Հայաստանի ղեկավարներին ու կառավարության՝ կատարած միջնորդության համար և Վեհափառ Կաթողիկոսին՝ իր կորովի դիմումի առթիվ, հայտարարելով, որ Կարսն ու Արդահանը և հայկական հողամասերը հայությանն են պատկանում, պիտի կցվեն ներկա Հայաստանին, որպեսզի աշխարհում աստանդական հայ հատվածները տեղ ունենան տեղավորվելու իրենց սեփական հողի վրա միատեղ ու միաձուլ լծվելու ըստ ստեղծագործական և շինարար աշխատանքների:

ԱՇԽԱՏԱԿԻՑ

(«Ալիֆ» թիվ 280 1946 թ. Թեհրան)

Ն Ա Մ Ա Կ Փ Ա Ր Ի Զ Ե Ն

28 հունվար 1946 թ.

Շատոնց սպասված լուրը հասավ հոս ալ: խորհրդային Միության Բարիդի դեսպանատունն հաղորդվեցավ Հայ Ազգ. Ընդհ. Միության Կեդրոն. վարչության թե՛ կրնա սկսուիլ Ֆրանսային դեպի խորհրդային Հայաստան ներգաղթել ուղղորդված արձանագրության և Հ. Ա. Ը. Միությունը բաժնեց իր բոլոր մասնաճյուղերուն դիմումնագիր-թուղթեր, զորս պիտի լեցնեն Հայաստան երթալ ուղղորդված-երկուական օրինակ:

Այսպես սկսված է արձանագրությունը ներգաղթելու ուղղորդված:

Ասոր հարակից կազմված է դերձակներու արտելը, որուն պիտի հետևին կոշկակարներու և այլ արհեստավորներու արտելները:

Հիմակ ալ տակավին գոյություն ունի կասկածամտություն՝ ոմանց քով, այս կամ այն պատճառով: Բայց այս տողերը ստո-

րագրողը անոնցմե է— որոնք կուզեն ունենալ իրենց երդիքը հայրենի հողին վրա, առանց ազդվելու վանխակալ կարծիքներ:

Ակնարկ մըն ալ տեղական ազգային-եկեղեցական կազմակերպության մասին:

Հոս բացառիկ կազմակերպություն մ ունի մեր Հայոց եկեղեցին, որ վկառավարվի կրոնական ընկերակցություններու հատուկ օրենքով:

Եկեղեցվո շուրջ հետաքրքրությունը ավելի շատցած է այն օրեն ի վեր, որ մեր եկեղեցիի գերագույն պետին էջմիածնի վաթողիկոսին վողմե ազգօգնու ձեռնարկներ տեղի ունեցան հայրենական պատերազմին առթիվ, սերտացնելով գաղութներու կապը հայրենիքի հետ:

ԹՂԹԱԿԻՑ

(«Պայքար» փետրվ. 7 1946 թ. Բաստոն)

ՆԵՐԳԱՂԹԻ ԼՈՒՐԸ ԵՎ ՊՈԼՍՈ ՆԱՅԵՐԸ

Քանի մը օր առաջ, Պոլսին ստացված նամակն մը կտեղեկանանք թե ներգաղթի լուրը աննկարագրելի խանդավառություն ստեղծած է Թյուրքիո բոլոր հայերուն մեջ: Նամակագիրը կհայտնե թե, ամեն օր հարյուրավոր հայրենակիցներ սովետ հյուպա-

տոսարան կդիմեն արձանագրվելու համար: Նամակագիրը կավելցնե թե արձանագրվողները մեծ մասամբ արհեստավոր և միջակ դասակարգին կպատկանին. սակայն անոնց մեջ հարուստներ ևս չեն պակսիր: («Միուրիմ» հունվ. 13 1946 թ.)

ՆԵՐԳԱՂԹ ԴԵՊԻ ՆԱՅԵՆԻՔ

Ժողովրդական կոմիսարներու խորհուրդը որոշեց դյուրացնել արտասահմանի հայությունը ներգաղթը դեպի Հայաստան: Նաև որոշեց բանալ ներգաղթողներու բնակելի շենք ունենալու պետական վարկ:

Ներգաղթողները առանց մաքսային արգելի պիտի կրնան իրենց հետ տանել իրենց սեփական գույքերը:

Արտասահմանի հայրենակարոտ հայության Սովետ Միության հանդեպ ցույց տրված սերն ու համակրանքը Հայկական ու Համամիութենական կառավարությանց կողմն կգնահատվի գրկաբաց ընդունելությամբ, ազատ ու անկաշկանդ ներգաղթով և պետական վարկով:

Ներգաղթի արտոնություն բերկրալի լուրը անսահման ուրախությամբ կհամակն սրտերը բոլոր անոնց, որոնք մաքուր համոզումը ունեցան Սովետ Հայաստանի լուսապայծառ իրականության, և որոնք, Սովետ Միության հայրենական պատերազմի դժվարին օրերուն, անխախտ հավատքը ունեցան ժողովուրդներու արդար դատի հաղթանակին, անձկանոք սպասելով բախտավոր ու հրաշանիկ օրվան, դեպի հայրենիք ներգաղթին, մասնակցելու համար հայրենիքի վերելքի աշխատանքներուն:

(«Հայ մամուլ» դեկտ. 8 1945 թ. Բույն-նոս-Այրես)

ՆԱՅ ԿՅԱՆՔԸ ԱԺԼՈՒՆԻ ՄԵՋ

Ներգաղթի լուրը մեծ խանդավառություն ստեղծեց Աժլունահայության մեջ: Թեև շատ հայեր չկան հոս, ընդամենը 4 ընտանիք գյուղին մեջ և 4 հիվանդապահուհիներս «Կայսետ Միշըն» հիվանդանոցին մեջ: Բայց ինչպես ուրիշներու, նույնպես մեր սիրտը կուրախանա, երբ կկարդանք որևէ լուր Հայրենիքի մասին: Մանավանդ Անդրհորդանանի խորքերը գտնվող այս փոքրիկ գյուղին մեջ, ուր գրեթե մեկուսացած ենք աշխարհեն, ավելի շատ պետք ունինք սփոփարար դեղերու, սփոփելու համար հայրենիքի տենչին ծարաված մեր հոգիները, Եվ ահա դեղ մը, «Միութիւն» կուգա սփոփելու մեր պանդխտացած հոգիները, որոնք երկար ժամանակն ի վեր կսպասեին այդ կենսաբեր նյութին:

Հիմա բոլորս ալ լկկարդանք «Միութիւն»-ը և անհամբեր կսպասենք նոր թվերու:

Կիրակի օր մը, երբ 4 հայ հիվանդապահուհիներս գյուղ իջած էինք աղոթքի համար, համբան հանդիպեցանք հայ տղոց փոքրիկ բանակին, ընդամենը 6 հոգի, որոնք փութցնելը կշրջեին «Հայաստան պիտի երթանք» պոռալով:

Մոտեցա ամենեն պզտիկին, որ հազիվ 4 տարեկան կար ու հարցուցի.

— Ո՞ւր պիտի երթաս, Թորոսիկ.

Տղան երկու ձեռքերը օդին մեջ ճոճելով պոռաց.

— Հայաստան, Հայաստան:

— Ե՞րբ պիտի երթաս.

— Հիմա, ճիշտ հիմա.

— Ինչո՞ւ.

— Օղանավին մեջը կնստիմ և թռն կերթամ:

— Ո՞ւր է, օղանավ չկա հիմա:

— Է՛, անիկա ուրիշները տարաւ հիմա. վերջը զիս պիտի տանի:

Գացինք Թորոսիկին տունը այցելության: Մտողը հոն էին, ինչպես նաև մեծ մաման. հազիվ տեղավորված էինք, երբ Թորոսիկ մեծ մորը քով գնաց վազելով.

— Նենե, նենե.

— Ի՞նչ է տղաս, ըսավ կինը զարմացած տղուն այս անսովոր վարմունքին վրա:

— Դուն ալ ինձի հետ Հայաստան կուգա՞ս, հարեց փոքրիկը մեծ մորը գիրկը նստելով.

— Ինչու չէ տղաս, Հայաստանը մեր հայրենիքն է. ո՞վ չուզեր տեսնել իր հայրեն-

նիքը. եթե դուն երթաս, ես ալ հետդ կուգամ, պատասխանեց մեծ մայրը խնդալով:

— Նենե՛, մաման, պապան ալ հետներ-
նիս տանի՞նք:

— Անշուշտ, Թորոսի՛կ:

— Ուրեմն անոնք ալ կառնենք օդանավին մեջը կղնենք և ես ալ օդանավը կբռնմ և թը՛ռ, կերթանք Հայաստան:

— Բայց դուն օդանավ բռնել չես գիտեր. եթե մեզի վար ձգես, մենք ի՞նչ պիտի ըլ-
լանք, ըսավ մայրը ժպտելով:

— Զե մամա, մի վախ՛նար. Ստալին պա-
պան մեզի կրոնե և մենք ալ չենք իյնար:

— Ինչպե՛ս օդանավը կբռն, տղա՛ս, հարցուց հայրը անդին:

— Պապա, ընավ չե՛ս տեսեր, — ըսելով սկսավ շրջանակ դառնալ սենյակին մեջ:

Մյուս տղաքը, որոնք նստած էին գորգին վրա, սկսան իրենք ալ Թորոսիկին ետևեն դառնալ:

Կարծեր տեսնել այս փոքրիկ տղոց խա-
ղը: Բոլորն ալ կարծես մեյ մեկ օդանա-
վորդներ եղած կդառնային շարունակ ա-

ռանց կանգ առնելու: Բայց ամենն ալելի, անոնց հայրենասիրությունը գրավեց իմ ուշքս:

«Աստուծո՛ւ կամեմք» — կամեմքի ինքնիրենս — զրկված են ազգային դպրոց մը ունենալն, ու գոնե պիտի սորվեին կարդալ, գրել իրենց լեզուն: Պիտի սերտեին մեր քաղերուն պատմությունը և վերջապես, ամեն ինչ որ հայ պատա-
նի մը պետք է գիտնա: Բայց այս խեղ-
ճերը հիմա ստիպված են օտար դպրոց, օտար լեզու սորվելու:

Հակառակ ասոր, անոնք միշտ կպահեն իրենց հայությունը: Որովհետև անոնց դըպ-
րոցը եղած է իրենց տունը և դաստիարա-
կը՝ իրենց մայրերը: Անոնք կխոսին մաքուր հայերեն: Գիտեն արտասանություններ և երգեր: Դժբախտաբար ոչ գրել կարողալ:

Ուրխալի է, որ հայ ծնողները միշտ հայերեն կխոսին իրենց պալատիկներուն հետ և կշանա՛ն միշտ վառ պահել հայրենիքի սերը անոնց մեջ:

Օր. ԽԱԹՈՒՆ ԱՐԱՆՆԱՄՅԱՆ
(«Միութիւն» 27 հունվ. 1946)

ԻՆՉՈՒ ԿՈՒՁԵՄ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԹԱԼ

(Սահակյան վարժարանի 6 դասարանի աշակերտ տասնմեկ տարեկան Օշին Մարթա-
յանի դպրոցական շարադրությունը)

Հայաստան երթալով կհասկնանք այն եր-
կիրը, ուր մեր նախահայրերը ապրած, կըռ-
ված, արյուն թափած և մեռած են մեզի համար: Ինչպես մեր ծնողքը, պետք է սի-
րենք նույնպես մեր հայրենիքը, որովհետև մեր առաջին ծնողքը ա՛ն է:

Առանց հայրենիքի, շատ ազգեր կորստած են տարիներու ընթացքին, բայց հայ ազգը միշտ բարձր մնաց, որովհետև հայը ուր որ ալ ըլլա, հիշած է իր հայրենիքը: Եթե մեր հայրենիքը չըլլար, մենք մեր լեզուն կոր-
սընցուցած և մեր դրացի երկիրներուն լե-
զուն սորված պիտի ըլլայինք:

Ինչպես հայրը մը և մայրը մը կուզեն, որ իրենց զավակը քովերին ըլլա, այնպես ալ մեր հայրենիքը կուզեն, որ ամբողջ հայ ժո-
ղովուրդը քովը ըլլա:

Մենք օտար երկիրներուն մեջ միշտ գեշ աչքով դիտված ենք: Բայց կհուսանք, թե մոտ օրեն մեր հայրենիքը պիտի ներգաղ-
թենք և մեր ուսումը հոն պիտի ամբողջաց-
նենք ու ավելի խանդավառ շարունակենք:

Մենք մեր հայրենիքը կուզենք երթալ ոչ թե միայն օգտվելու, այլ օգտակար ըլլալու համար:

(«Ժողովուրդի ձայն» հունվ. 31 1946 թ.)

ՆԵՐԳԱՂԹԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԼԵՊԻ ՄԵՋ

Հալեպ ներգաղթի լուրը դիմավորեց անօ-
րինակ ոգևորությամբ: Տեղովուս ներգաղթի
կոմիտեն կազմվեցավ լայն ներկայացուց-
չական հիմունքներով: Նկատի առնված էին
կուսակցությունները, մշակութային և հայ-
րենակցական միությունները, հարանվանու-
թյունները: Հալեպի զանազան թաղամասե-
րուն մեջ բացվեցան արձանագրությանը 21
գրասենյակներ, որոնք մինչև վերջ խճողված

են արձանագրվելու եկած բազմությամբ մը:
Սրտաշարժ դեպքեր և սրամիտ խոսակ-
ցություններ անպակաս են: Կիլիկյան դըպ-
րոցի դրան առջև ծերունի մը կպոռա ամ-
բոխին. «Քառասուն տարի է, որ կսպասեմ
այս օրվան, ձգեցեք որ առաջին անգամ ես
արձանագրվիմ»: Ուրիշ գրասենյակի մը մեջ՝
արձանագրող պաշտոնյան գրվելու եկած
Քիլիսցիի մը կհարցնե. «Եթե Քիլիսը մեզի

տան, հո՞ն կերթան, թե Սովետ Հայաստան: — Ո՛չ, ո՛չ, շատ մարդիկ կորսնցուցի հոն: Ես Սովետ Հայաստան պիտի երթամ, այդ հողը ամեն ինչ մոռցնել կուտա:

Ուրիշ դրասենյակի մը մեջ պաշտոնյային մեկը, որ դժվարություն է ունեցած արձանագրվող կնոջ մը հետ, քովի ընկերոջ կը դանդաղատի. «Նղբա՛յր, մարդ ի՞ր զավակներուն անունները կմոռնա»: Հինգ վարկյան կորստնցուցի մինչև որ տիկինը հիշեց թե ի՞ր փոքր աղջկան անունը կուտին է:»

Նոր գյուղի գրասենյակները ավելի աղմուկալից են: Բազմությունը հոս անհամբեր է, իսկ արձանագրող պաշտոնյաները նեղն են: Աճուրդովի գրասենյակին մեջ վաթսու տարեկան Զեյթունցի մը կըսեր. «Արձանագրե՛, տղաս, դեռ ես Հայաստանի մեջ զին-

վոր կրնամ ըլլալ»: Տավուտիի գրասենյակը ներկայացավ կին մը, ամուսնույն ինքնության թուղթը ձեռքը. — Հինգ զույգ զավակ ունիմ: — Տիկին, ինչո՞ւ չեք բեր թե տառը զավակ ունիք: — Ի՞նչ գիտնամ, երկիրը երբ զավակ կունենայինք քահանան կը բարկանար, կաստեր: Բայց մեր հայրենիքին մեջ շատ զավակ ունեցողները կսիրեն հղեր: Աստուած նորեն կուտա...»:

Այսպես, շարան շարան ժողովուրդը կուգա: Ամեն ոքի գլխավոր մտածումը ներգաղթն է: Նրեկոները՝ կիսոսին ներգաղթի մասին և այդ խոսակցությունները կերկարաձգվին մինչև ուշ գիշեր, և կշարունակվին երազի մեջ:

ԹՂԹԱԿԻՑ

(«Ժողովուրդի ձայն» փետրվ. 28 1946 թ.)

ՆԵՐԳԱՂԹԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ

Ներգաղթի արձանագրությունները աննախընթաց խանդավառություն ստեղծած են Դամասկոսի հայության մեջ:

Այս առթիվ ուրախ ենք հայտնելու, թե արարական պատասխանատու շրջանակները շատ ընտանիք և արդար կգտնեն հայերու իրենց մայր հայրենիք վերադառնալու բաղձանքը: Պետական բարձրաստիճան շրջանակներու մոտ զգուհանքի և արհամարանքի

միայն արժանացան այն կարգ մը ալյասերած հայերը, որոնք դիմում կատարած են ներգաղթի արձանագրությունները խափանել տալու համար:

Արձանագրությանց աշխատանքները ձեռնհաս կերպով կղեկավարեն ներգաղթի տեղվույս կոմիտեն:

ԹՂԹԱԿԻՑ

(«Ժողովուրդի ձայն» փետրվ. 26 1946 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՖԱՄԱԿՈՒՍԹԱՅՈՒՄ

Ֆամակուսթայի Հայաստանի Բարեկամներու Միության ձեռնարկությամբ կազմված է ներգաղթի «Ֆոնտա»-ի Հանձնախումբ մը, որ պիտի աշխատի զանազան միջոցներով գոյացնել գումար մը, դուրսացնելու համար

ներգաղթող չքավոր ազգայիններու կարիքները: Գումար մը արդեն իսկ գոյացած է:

(«Նոր Արաբո» մարտ 1 1946 թ. Լաոնաֆա Կիպրոս)

ԻՆՉ ԿԸՍԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՎՈՂՆԵՐԸ

(Պտույտ մը արձանագրության կեդրոններու մեջ)

Ուրբաթ օր, առտուն կանուխ արթնցա ուրախ տրամադրությամբ: Հավաքեցի ընտանիքիս անդամներուն ինքնության թուղթերը և գացի մեր թաղին (Նոր Նոգկատ) արձանագրության կեդրոնը, ուր արդեն հավաքված էին տասնյակ մը մարդիկ: Ժամը 7 եղավ: Հոն էին մոտ 60 ընտանիքի հայեր: Բոլորին երեսին կշողար ուրախության ժրպիտ մը: Վարկյանն վարկյան կշատնար բազմությունը: Արձանագրվելու կուգային թաղին աղբատն ու հարուստը: Ամեն մարդ

անձկությամբ կսպասեր արձանագրվելու Ամենքն ալ կուգեին մեկը մյուսին առաջ գրվի:

Ուրիշներ մեկ կողմ քաշված կըսեն. «Մեր թիվերը իրարու ետև ըլլան»: Խումբ մը կոշկակարներ կըսեն. «Միասին գրվինք և մեկ նավ նստինք»: Ծրագիրներ կպատրաստվեին նավուն մեջ ըլլալիք «քեյֆ»-ին մասին:

Այս խանդավառ մթնոլորտին մեջ էր, որ հասավ Տոթթ. Ա. Մանվելյան, իր հետ բե-

հելով արձանագրության թուղթերը: Մեծ իրախանցում և ուրախություն մը ծայր տրվավ: Տոբթ. Մանվելյան մեկիկ մեկիկ բաժնեց հարյուրի մոտ արձանագրության թվեր: Անմիջապես որ արձանագրվեցա և արձանագրել տվի ընտանիքիս անդամները, անցա արձանագրության մյուս կեդրոնները:

Գացի սանձագրիներու թաղը: Սենյակի մը մեջ զետեղված են երկու սեղան: Ներսև ու դուրսը, ոտքի վրա և նստած՝ մարդիկ և կիներ, արձանագրության թիվերը ձեռքերնին, կապասն իրենց արձանագրության կարգին: Երեսունըհինգ տարեկան մարդը մը, որ 1938-ի Ալեքսանդրեթի Սանձագի գաղթականության, Հալեպ գացած էր և անկից ալ Պեյրուֆ անցած, կպատմե իր ընտանիքի կյանքն: Չորս զավակ ունի և մեկը միայն դպրոց կըրկն: Մյուս երեքը փողոցները կը թափառին: Խոսակից մը ընդմիջելով ըսավ. «Բոլորս ալ նույն ցավերը ունինք: Այս ցավերն կազատինք» երբ գաղթականի ցուպը ձգենք օտար հողի վրա ու երթանք Հայաստան:

Գացի Մարաշի Երիտասարդաց Միության ակումբը: Ընդարձակ սրահի մը մեջ, սեղաններ քով քովի շարված են: Յոթը-ութը հոգի նստած կգրեն: Ուրիշներ անկյուն մը դրված սեղանի մը քով կվազեն թիվ ստանալու համար: Ուրախութենե կշողան բոլորին դեմքերը:

Յոթանասուն տարեկանի մոտ պապիկ մը, երիտասարդներու խառնված, կպատմե. «Իմ հայրս ինձի կըսեր, օր մը Հայաստան պիտի երթանք տղաս: Գնաց հայրս ու շտեմավ ալս օրերը: Մինակ ես մնացի մեր ընտանիքի 18 անդամներն: Փառք Աստուծո, ես ալ առանց Հայաստանը տեսնելու չպիտի մեռնիմ: Աստուծած ինձի պարգևեց այս օրերը»:

«Իսկ մենք, կըսե հիսուննոց մարդ մը, հինգ եղբայր էինք: Ամեն մեկս երկիր մը

ինկանք: Մեկ եղբայրս եգիպտոս է, ուրիշ մը Հունաստան: Եղբայր մըն ալ ունիմ Ֆրանսա, իսկ չորրորդ եղբայրս Ամերիկա է: Բոլորս ալ շոլուկ-շոճուկի տեր ենք: Բոլորս համոզված ենք, թե ուրիշ ճար չկա: Միայն Հայաստան երթալով իրար պիտի գտնենք»:

Գացի Հաճըն թաղը: Երբ ներս մտա սրահին անակնկալի եկա: Մարդիկ խումբ խումբ նստած են: Երիտասարդները ոտքի վրա կերթան կուզան թված երեսներով: Առաջին հանդիպողին հարցուցի. «Ի՞նչ է, ինչո՞ւ չեն գրեն»: Երիտասարդը պատասխանեց. «Եղբայր, գացին արձանագրության նոր թուղթեր բերելու»: Ժամը 11 էր: Արդեն լրացած էին մեկ օրվան համար ցրուած թուղթերը: Ես ալ նստեցա սպասողներու կարգին: Պատմեցին թե երբ առտուան ժամը 8-ին արձանագրությունները պիտի դուրսեին, վրա հասած է Տեր Թորոս քահանան: «Կեցեք տղաք, ըսեր է Տեր Հայրը: Արձանագրությանց չսկսած Հայր Մեր մը ըսենք»: Տեր Հոր Հայր Մերեն վերջ սկսած են արձանագրությունները:

Քիչ մը անդին նստաբաններուն վրա նրստած մարդիկ կպատմեն Հաճընի կյանքն, և այն նահատակներուն մասին, որոնք հարենիք մը ունենալու համար իրենց արյունը թափեցին, իսկ ուրիշներ աքսորի մեջ մեռան: Անոնք մեռան գացին: Մեզի վիճակված է եղեր այս երանելի օրը տեսնելը:

Երիտասարդ մը ըսավ. «Հայրս հոս մեռավ: Ինձի պատվիրեց. եթե ես մեռնիմ և օր մը դուք Հայաստան երթաք, ոսկորնեղս օտար հողի մեջ չձգես: Քեզի հետ տար Մայր Հայրենիք»:

Ժամը մեկը կանցներ: Հուզումի և ուրախության խառն զգացումներով մեկնեցա:

ՆԵՐԳԱՂԹՈՂ

(«Ժողովուրդի ձայն» փետրվ. 3 1946 թ.)

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Թ5 ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ

ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

(Պեյրուքի Ֆրանսական համալսարանի զանազան բաժնեներու ուսանողները 22 հունվար 1946 թվակիր հետեյալ նամակը ուղղած են Ներգաղթի Տեղական Կոմիտեի նախագահին)

Պեյրուքի Ֆրանսական համալսարանի Բժշկական, Դեղագործական, Առաժնաբուժական, Քիմիայի, Փաստաբանական և այլ բաժիններու ուսանողներս, անսահման ու-

րախություն մը կողջունենք Հայաստանի Սովետ Կառավարության որոշումը ներկաղթի սկզբնավորությունը հայտարարող:

Օտար երկիրներու մեջ, օտար տրամա-

դրություններու ենթակա մեր ասանդական կյանքը միշտ հեռու մնաց իր հավասարակշռությունը գտնելի:

Այս լավագույն առիթն օգտվելով կղիմենք ձեզի և ձեր բարձր նկատման կըհանձնենք մեր փափաքը առաջին իսկ առիթով Սովետական Հայաստան մեկնելու, Երևանի հայ համալսարաններուն մեջ շարունակելու համար մեր մասնագիտությանը կատարելագործումը:

Այս ձևով հայ համալսարանական ուսանողությունը փրկված պիտի ըլլա միանգամ բնորոշ ահաբեկող հետապնդումներէ, իր աշխատանքը կորսված պիտի չըլլա, և հայրենիքի իր ուսանող արեւակիցներուն հետ առիթը պիտի ունենա կազմելու միատարր այն ամբողջությունը, որ Սովետական Հայաստանի փառվան սերունդը կազմելու կոչված է և որուն այնքան խնամոտ գործը:

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿՈՂՋՈՒՆՆԵՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՑ ՍԿՍԵԼՈՒ ՇՐԱՀԱՆԳԸ

(Պեյրուսի Ամերիկայան Համալսարանի հայ ուսանողները հետևյալ համակը ուղղած են իրենց խնամքով և զգուշորէ կողմէն)

Հրճվանքով կարգացինք «Արտասահմանից ներգաղթող հայերի Ընդունման և Տեղավորման Կեդրոնական Կոմիտե»-ին կողմէ՝ Սովետ Հայաստանի Բարեկամներու Ընկերակցության և Հայ Ազգային Խորհուրդի նախագահներուն ուղղված նամակը, որ կողմէն սկսիլ ներգաղթի արձանագրությանը:

Դարերով պետականութենէ զուրկ, հետեւաբար՝ մտային, բարոյական, բնակարային, գաղափարական ու հավաքական կարողություններու անհրաժեշտ բարգավաճումին զարկ տվող միակ պաշտպանությունն զուրկ, մեր կարելի ուժերը հավաքեցինք ամբողջ ցեղով, պահելով և նույնիսկ զարգացնելով զանոնք, հակառակ դիմադրող բազմաթիվ պատճառներու: Եվ պատրաստվեցանք մեր սրբազան պարտականություններու կատարումին, միշտ հախառնելով թե պիտի հասնեն այս օրը անպայմանորեն: Եվ հիմա, հրճվանքով է, որ կղիմավորինք արտասահմանի հայերու ուղղված փրկարար այս կոչը:

Ստորագրայններս՝ ուսանողներ Պեյրուսի Ամերիկայան Համալսարանի բժշկության, դեղագործության, տարրաբանության, բնագիտության, ճարտարապետության, փիլիսոփայության, մանկավարժության, բնակարային գիտություններու, գրականության, արտի և այլ ճյուղերու, կանոնավոր կերպով հետևելով հանդերձ մեր դասընթացին:

Դանքով կնային Հայ Պետությունն ու Հայ ողովորդը ամբողջ:

Մենք կհավատանք մեր հայրենիքի իրական արժեքին, ողջմտությամբ կգնահատենք հոն ձեռք բերված աշխատանքին արդյունավորությունը, և հայ պետության հրավերին առաջին պատասխանողները կուզենք ըլլալ, ցույց տալու համար համայն աշխարհին, թե հայ ժողովուրդը այսօր ավելի քան երբեք միատարր է ու կապված իր հայրենիքին և իր գոյության իրավունքը կտեսնեն այն գծին մեջ, որ զինք կմիացնի սփյուռքէն Երևան:

Վստահ արժանապաշտ ենք բարյացակամ տրամադրության, կխնդրենք, որ ընդունի մեր խորին շնորհակալության հավաստիքը:

65 ՍՍՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«Ժողովուրդի ձայն» փետրվ. 3 1946 թ.)

րուն, միշտ ունեցած ենք հայրենիքի համալսարաններուն մեջ մեր մասնագիտությունները կատարելագործելու հեռանկարը:

Մենք կհավատանք, թե միայն մեր հայրենիքին մեջ է, որ պիտի կարենանք լավագույնս զարգացնել մեր կարողությունները, որպեսզի մեր ջանքերը միացուցած մեր բախտավոր եղբայրներու աշխատանքներուն, հաճույքով և անձնվիրությամբ սատարենք Սովետ Հայաստանի մշակութային ու գիտական ապագայի կերտումին:

Մեր սիրելի հայրենիքին, Սովետ Հայաստանի որպես հարազատ զավակները, մեր ամբողջ սիրով և մեր ամբողջ գոհունակությամբ կմաղթենք նվաճումներ և ուժ անոնք սիրելի Առաջնորդներուն, մեր շնորհակալությունը հայտնելով Սովետ Միության Մեծ Առաջնորդին՝ որ մեզ կուտա՝ բախտը մեր հայրենիքը վերադառնալու, գաղթաշխարհին տառապանքը միանգամ ընդմիշտ սրբելու մեր մատաղ սերունդին մատաղ ճակատին:

Այս մտածումներով և զգացումներով ահա կստորագրենք մեր նամակը:

Այս համոզումով, հարգելի Հանձնախումբ, կխնդրենք, որ մեզի նկատի ունենաք որպես արձագանքող ու պատրաստ՝ առաջին հերթին ներգաղթելու:

49 ՍՍՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«Ժողովուրդի ձայն» հունվ. 27 1946 թ.)

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆԵՐՈՒ ԴԻՄՈՒՍԸ ՄԱՅՐ ԵՐԿՐԻՆ ՄԵՋ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ՈՒՍՈՒՄԸ

Պեյրեպի Ամերիկյան Համալսարանի և Մամ րիկյան Ճյուների Գոլենի 41 հայ ուսանողներին հետևյալ համակը ուղղած են ներգաղթի Տեղական Կոմիտեի նախագահին

Ամերիկյան Համալսարանի Հիվանդապահական բաժնի և Ճյուների Գոլենի ուսանողներին երախտագիտական զգացումներով ընդունեցին Սովետ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետի հրավերը, ուղղված արտասահմանի հայերուն, Մայր Հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու համար:

Քիչ ենք թվով, որովհետև պանդուխտ հայության իրական սերունդին ամենեն ավելի քիչ տրվեցավ առիթը, զարգացնելու իր մշտային ու ֆիզիկական ուժերը:

Ուսանելով հանդերձ ծառայությանն ենք մեզ, մենք մոտեն հետևեցանք Հայրենիքի մեր բույրերուն մշակութային հառաջդիմության ու նվաճումներուն, և մեր մեջ օրրոտորեն հասակ նետեց երազը ըլլալու ա-

նոնց քով, անոնց կողքին, նստարաններու վրա և մատենադարաններու մեջ, սնանելու համար մեր մայր երակեն, հայ երակեն:

Սպասեցինք քաղցրաշունչ կանչի մը, մեր Հայրենիքի կանչին: Եվ ահա լսեցինք այդ շատ սիրելի կոչը: Եվ հիմա կբոցավառի մեր մեջ խանդավառությունը շուտով մեր քույրերուն միանալու:

Վստահ ենք թե Սովետական Հայաստանի մեր իմաստուն առաջնորդները և մեր հեծաբույն բարեկամն ու հայրը՝ արևագործ ՍՍՍՖՍՀ, պիտի ըլլան իրագործողները մեր փափաքներուն, և ընդունին մեզ ներս մեր հայրենիքի համալսարաններն:

Կապասենք այդ երջանիկ օրվան:

41 ՍՍՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«Ժողովուրդի ձայն» փետրվ. 7 1946)

ՀԱՅ ԱՐՇԵՍԱՎՈՐՆԵՐ ԿԿՍՁՍԱԿԵՐՊՎԻՆ

Մարտեւհայը իրավամբ կրնա պարծիլ, իր գործարանատեր կողակալներով: Անոնք խոշոր թիվ մը կկազմեն աղա քաղաքին մէջ: Ավելի քան 60 մեծ ու փոքր փապրիքներու մեջ աշխատող հայ բանվորներու թիվը կը հասնի 1000-ի: Այս գործարանատերերէն շատեր փափաք ունին իրենց մեքենաներով և կազմածներով երթալ Հայաստան ու զարկ տալ կոշիկի ճարտարարվեստին:

Արդեն ունեցան իրենց առաջին ժողովը և որոշեցին կազմել արտելներ: Ունին իրենց առժամյա վարչությունը: 20 միլիոնի հասցող դրամագլուխ մը պատրաստ է արդեն:

Այլի զարնող երկրորդ արհեստավորներն են դերձակները: Անոնք ալ իրենց կարգին

կազմակերպվեցան և ընտրեցին իրենց դիվանը: Անոնք ևս խոշոր թիվ մը կկազմեն բայց նվազ հարուստ:

Այս երկու խոշոր խմբակցություններուն բուն նպատակն է կազմել արտելներ և ներգաղթեն առաջ մեկնիլ Սովետ Հայաստան. Այս ուղղությամբ Փարիզ դիմումներ: Եղան: Արդեն կեդրոնեն պատասխանատու ընկեր Վ. Ադամյան հասավ քաղաքս:

Իրեն հետ առանձին տեսակցության ընթացքին ուրախությամբ հայտնեց, որ ԽՍՀՄ-ԼՂԴԱՅԻՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՀԱՐԿ ԵՂԱՍ ԴՅՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԻ ԸՆԾԱՅԵ, ՈՐ ԱՆՈՒՔ ՇՈՒՏՈՎ ՄԵԿԵՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ:

(«Առաւօտ» փետրվ. 17 1946 թ.)

ՅՐԱՆՍԱՀԱՅ ԴԵՐՁԱԿՆԵՐ ԿՊԱՏՐԱՍՏՎԻՆ ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԹԱԼ

Փարիզէն ստացված նամակն մը կիմանանք, որ կազմված է Յրանսահայ Դերձակներու Արտելը, որ կպատրաստվի մեկնիլ Սովետ Հայաստան և իր հետ կուզեն տանիլ 6—700 հոգի աշխատող արքիլի մը օժտված բարձր տեխնիկով:

Արտելի վարչությունն դիմած է «Սինկեր» կարի մեքենաներու ընկերության Յրանսայի ներկայացուցչին, որ հայտնած է թե, Ամե-

րիկայի հետ դեռ առևտրական կապ հաստատված չլլալով, ուղղած մեքենաները չէ կարելի հայթայթել:

Առ այժմ կնախատեսվի երեք «շղթա», ամեն մեկը 135 հոգի աշխատող: Նամակեն հայտնի կըլլա, որ Արտելի վարչությունը կուզեն գիտնալ, թե Ամերիկյան ի՞նչ մեքենաներ անհրաժեշտ են ամեն մեկ «շղթայի» համար՝ իր բոլոր կազմածներով, անոնց գի-

ները, մեքենաներու տեսակները, քառալուկ-
ները և արտադրական կարողությունը: Ար-
տելը կուզե հասկնալ թե Ամերիկյան ընկե-
րությունները ի՞նչ ունին այս մեքենաներեն
իրենց անմիջական տրամադրության տակ և
շունեցածները կրնա՞ն հայթայթել ուրիշ ըն-
կերություններ: Հայաստան առաքում կըր-

նա՞ն ընել: Կրնա՞ն թեքնիշըն մը ղրկել՝ հե-
տեկու համար մեքենաներուն և կամ կա՞
հայ թեքնիշըն մը ,որ հանձն առնե քանի մը
ամսվան համար միասին ուղևորվիլ և տե-
ղավորել մեքենաները:

(«Ըրաբեր» փետրվ. 7 1946 թ. Նյու-Յորք)

ՍՏ. ԱԼԱՃԱՆՅԱՆ

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ե Ն Ա Ռ Ա Ձ

Այս ժայռերուն վրա բիրտ՝ փշրենք ուժգին հարուածով
Գաղթացույն այս հեամաշ մեզ հետ փալոզ վեց դարեր
Որուն անտաշ կողերեն վազեց արյուն ու բողոք:

Հոգեւած օտար տուններուն ցուրտ ու խոնավ կանչերեն
Պիտի երբամ ու պիտի երբանք բոլորս ալ արդեն,
Ապրիլ վրան մեր հողին, ապրիլ հողին գորովով:

Մեզի իբրև տուն բլլան մեր դաշտերը հարազատ,
Մեր արտերը մեզ գետին, անհուն երկինք առաստա՞ղ,
Ուրկե Աստուած ալ դյուրութեամբ կնայի վա՛ր, ժպտերե՛ս.....

Մեւք բարո՛վ, կմեա մեր հիշատակը ձեզի,
Մեւք բարով, մենք կանցնիմք մեր հորիզոնը շենշող,
Մենք հո՛ղ ունինք, ունինք՝ հո՛ղ, ամեն աստղի հետ մրցող.....

Այս լեռներուն վրա օտար՝ այս դաշտերուն մեջ հուտքի
Մեր փայլերուն հետքերով գրուած կտակ մը կա ձեզ
Երկարող ծայրը ծովուն, արևելքեն, հարավեն՝
— Հայր դրախտ մը ջինեց նույնիսկ հեռու իր հողեն....

(«Ժողովուրդի ձայն» մարտ 3 1946 թ.)

ՀՐԱԺԵՇՏ ՀԱԼԵՊԻՆ

Հոս ծնած եմ, ահա կերբամ,
Դու շեն մեաս Հալեպ փաղափ,
Աղբղ ու հացըդ ես շատ կերա,
Դու շեն մեա՛ս, ծննդավայր:

Քեզի կրսեն արաբիստան,
Չորս կողմերդ դաշտ տափաստան,
Հայաստանեն եկավ նամակ,
Կենալ, չըլլա՛ր Հալեպ փաղափ:

ԱՐՄԵՆ Հ. ՊԵՏԻՐՅԱՆ

(10 տարեկան, Կրթասիրաց վարժաբանի Գ կարգեն)

(«Ժողովուրդի ձայն» փետրվ. 17 1946 թ.)





ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ ԵՎ ՆԵՐԳԱՂԹԸ

«Ու տայր, ինձ որ ավետիս տայի
 ձեզ իբրև Նոյան աղավնին, թե ցամ-
 փեցալ ջրհեղեղ, դարձեմ ձեր հայրե-
 նի աշխարհ»:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ



որ տարվա առթիվ, 1895 թվի
 հունվարի մեկին, ամերիկա-
 հայության ուղղած ուղեր-
 ձում, ձայնագրված սկավառակի վրա, մեծ
 հայրենասեր Հայոց Հայրիկը անձկությամբ
 բացականչում է.—

«Ողջույն ձեզ, պանդուխտ որդիք հայու,
 որ բախտն զձեզ հայրենի աշխարհից վա-
 րել է մինչև Ամերիկա»:

«Ու տայր ինձ, որ ավետիս տայի ձեզ,
 իբրև Նոյան աղավնին, թե ցամփեցալ ջրե-
 հեղեղ, դարձեմ ձեր հայրենի աշխարհ»:

Խրիմյան Հայրիկը խորը հավատացած
 էր, որ գալու է այդ օրը, երբ Հայոց աշ-
 խարհից վերանալու է «ջրհեղեղը» ու Մաս-
 սի ստորոտից հնչելու է հայրենահավաքի
 ավետիսը:

Այսօր սովետական կենսաբեր արևի շո-
 դերի տակ իրականացած ենք տեսնում մեծ
 հայրենասերի բաղձանքը: Մայր հայրենի-
 քից հնչել է արդեն աշնան հողմահալած
 տերևների պես սփռուղիով մեկ ցրված հայ
 ժողովրդի պանդուխտ զավակների համար
 այդ փոկարար ավետիսը. «դարձեմ ձեր
 հայրենի աշխարհ»:

Խրիմյան Հայրիկը իր կյանքի ընթացքում
 շատ է զբաղվել հայկական դատով, հա-
 ճախ է նրան վիճակվել Հայոց կնճռոտ
 հարցը օտար դիվանագետների սեղանին
 դնելու և աղերսելու, որպեսզի այդ արդար
 դատին արդար վճիռ կայացվի: Սակայն
 ապարդյուն են եղել նրա աղերսանքները.
 ամեն անգամ էլ նա դառնացած աշխար-
 հի ամենակուր հզորների քար անտարբե-
 րությունից վերադարձել է ձեռնունայն ու
 հուսահատ:

Ժողովրդի ծոցից ելած, նրա ցավերով
 տառապող Հայրիկին հատկապես շատ էր
 վշտացնում հայ ժողովրդի պանդխտությու-
 նը. նա ականատես էր լինում, թե ինչպես
 երկրում տիրող զուլումի, արյան, ջարդերի,
 ավերի, կողոպուտի, բռնության, լլկման

պատճառով դատարկվում էր Հայաստանը:
 Հայ քրտնաջան ժողովրդի տարաբախտ պա-
 վանները գաղթականության ցուպը ձեռնն-
 րին փախչում էին երբեմնի դրախտավայր
 Հայաստանից, լքելով մանկուց հարազատ
 վայրերը: Մորմոքվում էր Հայրիկի սիրտը
 այդ սրտաճմլիկ տեսարաններից. ապալի
 խորթ էր նրա համար հուսահատությունը:
 Նա համոզված էր, որ մարտիրոս, աշխատա-
 սեր ու տաղանդավոր հայ ժողովուրդը չի
 մեռնի և այդ անլուր զրկանքներից հետո
 փյունիկի նման նա նորից պիտի հսկի
 հայրենի ավերակների մոխրակույտերի
 տակից ու նորից զուլումի երկիր Հայաս-
 տանը պիտի փոխարկի դրախտավայրի:
 Նրա խորաթափանց միտքը շատ հեռուն էր
 սլանում թափանցելով անհայտության շը-
 դարշով սքողված ապագայի ոլորտները:
 Նա միանգամայն հավատացած էր, որ հայ
 ժողովրդին մի վառ ապագա է սպասում և
 որ նրա պանդուխտ զավակները մի օրնե-
 րից պետք է վերադառնան իրենց հայրենի
 աշխարհը ու համախմբվեն նվիրական Նո-
 յան տապանի վերջին հանգրվան ըր-
 լիական լեռան՝ Մասսի շուրջը: Ու համոզ-
 ված, որ այդ ապագան շատ հեռու չէ, նա
 հուսադրում, քաջալերում էր իր պանդուխտ
 որդիներին.—

«Միտ առեմ, ֆայալեմվեցեմ անբախտ և
 բախտավոր որդիք Հայոց, Աստուծո այցե-
 յությունը մոտ է մեր շարշարյալ աշխար-
 հին»:

Մեծ Հայրիկի երազները այսօր դարձել
 են կենսաշող իրականություն. Նոյան ա-
 ղավնին ավետիս տարավ ողջ գաղութահա-
 յություն, թե «դարձեք ձեր երկիրը», որով-
 հետև ձեզ վտարանդի դարձնող «ջրհեղեղը»
 վերացել է վաղուց Հայոց աշխարհի վրա-
 յից. նախկինում արհավիրքների, արյան,
 ոճիրի երկիր Հայաստանը շնորհիվ սովե-
 տական կենսունակ կարգերի այսօր փո-
 խարկվել է բարեկեցիկ, երջանիկ կյանքի,

ապահովել խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի և ազգային կուլտուրայի ծաղկման օրրանի:

Այս պայմաններում միայն Հայաստանը հնարավորություն ունեցավ իր հյուսիսային դռները լայն բացելու պահուստ զավակների առաջ՝ Մասսի ստորոտից ներգաղթի ավետիս տալով:

Ստորև տալիս ենք Բուենոս - Այրեսում հրապարակվող «Հայ մամուլ» շաբաթաթերթի 1946 թ. հունվարի 19-ի համարում Հ. Գըլըճյանի կողմից զետեղված հրիմյան Հայրիկի 1895 թ. հունվարի 1-ին ամերիկահայության ուղղած ուղերձը, որը ձայնագրված է եղել սկավառակի վրա:

«Ողջուն ձեզ պանդուխտ որդիք հայու, որ բախտն զձեզ հայրենի աշխարհից վարել է մինչև Ամերիկա:

«Ողջուն ձեզ Արարատյան աշխարհեն, Մասյաց նոյան Տապանեն, էջմիածնա Սուրբ Տաճարեն:



հրիմյան Հայրիկ

«Ողջուն ձեզ Հայոց Հայրիկեն: Ու տայր ինձ որ ավետիս տայի ձեզ իբրև նոյան աղավեն: քեզ ցամփեցավ ջրհեղեղ, դարձեք ձեր հայրենի աշխարհ:

«Սիրտ առեք, փաշալերվեցեք անբախտ և բախտավոր որդիք Հայոց. Աստուծո այցելությամբ մոտ է մեր շարշարյալ աշխարհին:

«Ողջուն տվեք նաև մեծ հնար: Էտիսունին, որ իմ կենդանի ձայնը առավ բերավ ձեզ:

«Կեցցեք հավերժ ինք և յուր գյուտի հիշատակը:

«Կշնորհավորեմ ձեր մուտ ի նոր տարին, կյանք և

հաջողություն մաղթելով ձեզ»:

ՀԱՅՐԻԿ

1895 հունվար, էջմիածին

Կեչառու



Կաթուղիկե եկեղեցու

արևմտյան ճակատը



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Մ. Ա. Յ. Ր Ա. Թ. Ո. Ռ.

Փետրվարի 28-ին Ս. Վարդանանց զորավարաց և 1036 վկայից տոնի օրը Մայր Տաճարում ս. պատարագ մատուցվեց և հոգեհանգիստ կատարվեց ազգի և հավատի համար նահատակվածների հիշատակին:

Արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Օշական գյուղի եկեղեցու (որտեղ գտնվում է Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը) համար քահանա ձեռնադրվեց Վազգեն Ա. մատունին:



Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի Առաջնորդ Տ. Սուրեն եպիսկոպոսը, արձակվելով իր պաշտոնից, նշանակվեց Ռումինիայի թեմի Առաջնորդ և մեկնեց իր պաշտոնատեղին: Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդական փոխանորդ նշանակվեց Արմավիր քաղաքի ավագ քահանա Տ. Վահան Թավարեկյանը:



Թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Բաքվի և Թուրքեստանի թեմի Առաջնորդ Տ. Ներսես եպիսկոպոսը:



Թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեցին Վրաստանի Հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սահակ ավագ քահանա Սահակյանը և թեմական խորհրդի անդամ Փ. Մելիք-Կարապետյանը:



Էջմիածնի նորաբաց Հոգևոր ճեմարանի աշխատանքները ընթանում են նորմալ: Ուսուցչական կազմը բաղկացած է կարող ուժերից, իսկ ուսանողությունն աչքի է ընկնում իր լավ վարք ու բարբոլ և ժրջանություններ: Մեծագործ Գեվորգ Զ-ի հիմնածայա դարբնոցում պատրաստվում են մեր ապագա շնորհալի հոգևորականները: Վեհափառ Հայրապետը անձամբ հսկում է ուսանողության առաջադիմության, սննդի, հագուստեղենի և այլ կենցաղային պայմանների բարելավման գործին:



Վեհափառ Հայրապետի ամենամեծ հոգացողության առարկան է հանդիսանում Մայր Տաճարի վերանորոգման խնդիրը: Այդ ուղղությամբ խորհրդակցություններ են տեղի ունենում Հայաստանի ականավոր ճարտարապետների ու արվեստագետների մասնակցությամբ:



Հայաստանի քաղաքներից, շրջաններից, ինչպես նաև Հայաստանից դուրս գտնվող այլ վայրերից բազմաթիվ էքսկուրսիստներ են գալիս Մայր Աթոռ, պատմական վանքի, թանգարանի և այլ տեսարժան տեղերի հետ ծանոթանալու համար: Այցելուների մեջ կան նաև Կարմիր Բանակի հայ ու օտարազգի բարձրաստիճան շատ ղինվորականներ, ինչպես նաև օտարերկրացիներ:

Թանգարանի և Մայր Տաճարի մասին բացատրություններ են տալիս Սահակ և Նղիշե վարդապետները:



ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ



Մեկտեմբերի 6-ին տեղի ունեցած է Երուսաղեմի Պատրիարք Ամեն. Տ. Կյուրեղ Բ. Արք. Իսրայիլյանի գահակալությունը

մեծ հանդիսավորությամբ: Նախ կեսօրը քիչ անց Ս. Պատրիարք Հայրը իր կրոնական և աշխարհական հետևիժներով դաջած է Պաղեստինի Բարձր Քոմիսերին ապա-րանքը, ուր տեղի ունեցած է պաշտոնական ընթերցումը արքայական հրովարտական, ուրկե հետո կատարված են պատվասիրություններ և թափորը վերադարձած է Պատրիարքարան:

Ժամը 3-ին առանձին Ս. Հակոբ մայր - եկեղեցին մեջ սկսած է դահակալության կրոնական արարողությունը ներկայությամբ ժողովրդային հոծ բաղմունքի մը, որոնց կարգին կրոնական և աշխարհական հրավիրյալներ, կա-

ռավարական բարձրաստիճան պաշտոնա-


տարներ, հյուպատոսներ և Բարձր Քոմիսերին կողմից թիկնապաշտ Մր. Քորտըն Տըֆ:

Արադողությունը մասնակցած են բացի Միաբանության

վարդապետներին նաև Գերշ. Խաղ, Ռուբեն և Մամբրե Արքեպիսկոպոսները, որոնք կարգացած են նաև Պահպանիչը, երբ Կյուրեղ Պատրիարք ծնրադիր և ղլխաբաց Ս. Սեղանին վրա հանդիսավորապես արտահանած է իր Ուխտը: Հետ այնու տեղի ունեցած է կրոնականներու աջահամբույրը և շնորհավորությունները և եկեղեցական թափորը, որուն հետևած են հրավիրյալները, կբարձրանան Պատրիարքական դահլիճը, ուր երգվելի հետո «Կոտ սեյվ տհր Քինկ»-ը, Հ. Ն. Մ. -ի երգչախումբին կողմից, կատարված են պատվասիրություններ և ներկաները շնորհավորելի հետո

հրաժեշտ առած:

(«Արախ» ղեկտ. 15 1945 թ.)





Կ. ՊՈԼՍԻ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



ույնմբերի 6-ին, Պատրիարքարանը Տեղապահի ստորագրությամբ պաշտոնական մի զեկույց հրատարակեց «Ժամանակ»-ի մեջ, թրքահայ պատմիրականության էջմիածին առաքելության մասին: Այդ առթիվ «նոր լուր»-ը հետևյալն է գրում. Այդ զեկույցը շեշտելի վերջ թե հանրապետական կառավարության բարեհաճ թույլտվությամբ էջմիածին մեկնած այդ պատգամավորությունը իր «մասնակցությունը բերած էր Եկեղեցական Համագումարին և Վեհափառ Հայրապետի ընտրության ու օծման հանդիսությանը» կհայտնեի թե «որովհետև պատգամավորության վերադարձն հետո, այլ ընդ այլոց հրատարակություններ և թղթակցություններ երեցած էին մամուլին մեջ և կարգ մը անհիմն վերագրումներ շրջած էին այդ առաքելության շուրջ, պետք կզգար պաշտոնապես հայտարարելու թե

1) «Թրքահայ ներկայացուցիչները մասնակցած էին վերջին երկու նիստերուն, որոնցմե մին զբաղած էր էջմիածնի կաթողիկոսության պյուտնեով և մյուսը Գերագույն Հոգևոր Խորհրդի ընտրությամբ և կրոնական բնույթ ունեցող այդ խորհրդակցությանց ներկա գտնված էին իբր թրքահայ պատգամավոր և

2) Թրքահայ պատգամավորությունը Երևանի և էջմիածնի մեջ իր տասնօրյա բռնակության ընթացքին պաշտոնական և կամ անպաշտոն ոչ մեկ անձնավորության հետ ոչ մեկ քաղաքական տեսակցություն, խորհրդակցություն, շփում և կամ հարաբերություն չէ ունեցած և իբր թուրք հայրենակից կրոնական Համագումարին մեջ պատգամավորական պարտականությունը կատարելով վերադարձած է»:

Ուշագրավ զանցառություն մը, որ խիստ նշանակալից է սակայն, Ազգային Պատրիարքարանը, ինչպես միշտ, այս անգամ ալ պաշտոնական այդ զեկույցը չէր հղած «Մարմարա»-ին, ավելորդ է ըսել, զայն հայաթերթ չնկատելուն համար և պատճա-

ռաբանելով որոնք ծանոթ են ամբողջ հայության:

Բայց այս գործին մեջ ամենն ցավալին այն է, որ դժբախտաբար մեր ժողովուրդին մեջ կան մարդիկ, հոգ չէ թե սակավաթիվ, որ բարոյապես կամ նյութապես կանուցանեն վասակներն ու օձերը, առանց խորհելու պահ մը թե՛ այս վերջինները ամբողջ Թրքահայության ճակատագրին հետ է, որ կխաղան, ավելի բաց խոսելու համար 150—200.000 հայության, որովհետև Թրքահայոց ներկայացուցիչներուն՝ եկեղեցական կամ աշխարհական, քաղաքական դեր վերագրել, ուղղակի կոնակեն զարնել է ամբողջ Թրքահայությունը:

Այդ առթիվ պատգամավորության մասնակցող պ. Թ. Ա. հետևյալ նամակն է հրատարակության տվել «Շառաշուն ապտակ» վերնագրով:

Տեղապահ Ս. Հոր պաշտոնական զեկույցը՝ որ լույս տեսավ 2 օր առաջ «Ժամանակ»-ի մեջ, շառաշուն ապտակ մըն է զարնելած երեսին՝ արհեստով քսու և վասակատիպ ու նողկալի այն արարածներուն, որոնք ոչ միայն միջոցի մեջ խտրություն չդրին վարկաբեկելու էջմիածին ուղևորվող Թրքահայ պատգամավորությունը, այլ ինքնահանար սուտերով ու դավերով ջանացին կասկածելի ցույց տալ անոր առաքելությունը հաշ կառավարության: Այդ դավադրության հեղինակները անշուշտ պիտի կրեն իրենց արժանի պատիժը:

Գալով կաթողիկոսական ընտրության առթիվ վերստին հավելված և ընծայված անհամ մեղեդիին, ծիծաղ միայն կշարժե, քանի որ տասն անգամ գրվեցավ, ու հայտարարվեցավ, թե ընտրության օրն հասանք էջմիածին և ներկա համարվելով՝ հաջորդ նիստին ստորագրեցինք ընտրության տեղեկագիրը, որ վավերացում էր մեր մասնակցության:

«Ն. Լ.»

(«Ալիֆ» դեկտ. 6 1946 թ.)



ՀԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈ



Եհրանի նորակազմ ժամանակավոր Եկեղեցական Վարչության նախագահությունը և Երավերով, ամսույս 21-ին Հայ Ա-

կումբի սրահում տեղի ունեցավ հարգանքի և երախտագիտության երեկո, ի պատիվ մայրաքաղաքի Ս. Աստվածածին մայր եկեղեցին կառուցող բարերար պ. Ռոման Եսայանի:

Երեկոյի բացման իր խոսքի մեջ Իրանա-Հնդկաստանի և Թեհրանի թեմակալ Առաջնորդ Գեր. Վահան եպս. Կոստանյանը ներկայացրեց պ. Ռ. Եսայանին իբրև մարդ, իբրև բարեգործ և իբրև բարերար, որ իր կարողությունից ավելին է արել օգտակար լինելու իր շրջապատին, կարիքավորներին և հանրության: Հիշեց այն խոշոր նվիրատվությունները, որ պատերազմի ընթացքում արել է Խորհրդային Հայաստանի զավակներին, Կարմիր Բանակին, Ս. Էջմիածնին և տեղական հայ և պարսիկ բազմաթիվ բարեգործական հիմնարկություններին, որոնց գլուխ գործոցն է կազմում մայր եկեղեցու կառուցումը յոթհարյուր հազար թուման ծախքով:

Սրբազան թեմակալը հիշեց նաև այն ջերմ ընդունելության մասին, որին արժանացել է պ. Ռ. Եսայանը Ս. Էջմիածնում, Վեհափառ Կաթողիկոսի և պատգամավորների կող-



Բարերար Ռոման Եսայան

հջմիածնին, ինչպես և տեղական հայ և պարսիկ բազմաթիվ բարեգործական հիմնարկություններին, որոնց գլուխ գործոցն է կազմում մայր եկեղեցու կառուցումը յոթհարյուր հազար թուման ծախքով:

մից կաթողիկոսական ընտրության ժամանակ, որին մասնակցություն ունեցավ բարերարն իբրև Թեհրանի ներկայացուցիչ:

Թարգման հանդիսանալով Թեհրանի հայության երախտագիտական զգացմունքներին, Սրբազանը իր խոսքը վերջացրեց ջերմ արտահայտություններով և ողջագուրեց իր մոտ կանգնած բարերարին:

Ապա կարգացվեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գեվորգ Զ-ի կոնդակը և Իրանա-Հնդկաստանի ու Թեհրանի Թեմակալ Առաջնորդ Գեր. Վահան Եպիսկոպոսի օրհնության գիրքը, որոնք ունկնդրվեցին հոտնկալս:

Կարգացվեցին նաև Թեհրանի Եկեղեցական Վարչության ձեռն: և Թեհրանի ժամ. Թեմական Խորհրդի շրմորհակալական գրությունը: Բարերար պ. Ռ. Եսայանի հուղումով արտահայտած մի քանի խոսքից հետո, կարգացվեց նրա շրմորհակալական գրությունը, որով հայտնում էր, որ ինքը կատարել է իր ազգային պարտականությունը և կոչ էր անում աջակից հանգիստնալ «Անի» մանկատան, յա հպանման, իբրև երախտագիտություն այն անձնազոհության, որ այդ մանուկների հայրերն ի հայտ են բերել օրհասական պայքարում և խորտակել ֆաշիզմը:

Դրանից հետո, Սրբազան հայրը կրկին շնորհակալություն հայտնելով, բռն ծա-

նորհակալություն հայտնելով, բռն ծա-

փերի տարափի տակ բարերարին հանձնեց
Թեհրանի ժամ. Թեմական Խորհրդի կող-
մից պատրաստված հիշատակի արծաթե
գեղեցիկ ալբոմը:

Երեկոյին ներկա էին մոտ 300 հոգի՝ հան-

րային հաստատությունների, միություննե-
րի, մամուլի և ժողովրդի բոլոր խավերի
ներկայացուցիչներ: Երեկոն վերջացավ վե-
րին աստիճանի ջերմ մթնոլորտում:

ԱՇԽԱՏԱԿԻՑ

(«Ալիֆ» հունվ. 22 1946 թ.)



Բարերար Ռուման Խաչանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեվորգ Զ-ի և Կիլիկիո
Կաթողիկոս Գարեգին Ա-ի հետ:



Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք



արերը եկել, եկել ու լեռնացի եկ մեր ու Վարդանանց միջև:

Սակայն նրանք անզոր են այն անխորտակ ուժի հանդեպ, որ հաղար ու բյուր թիկերով կապում է մեզ Վարդանանց հետ:

Դարերի լեռնակատարների վրայից մինչ այսօր էլ հնչում է ուժգին Ավարայրի ճակատամարտի որոտը: Այդ որոտը դարեր շարունակ արձագանք է գտել: Հայոց լեռնաշխարհում, կոփել նրա ազատության ու անկախության ոգին:

Հայոց ողջ պատմությունը հարուստ է ռազմական դրվագներով, դյուցազնամարտերով, բայց դրանցից և ոչ մեկը այնպես չի հուզել ու ալեկոծել դարեր հետո ապրողների սրտերը, ինչպես Վարդանանց հերոսամարտը: Մեզ հետ են եղել և մեզ հետ ու մեզից անբաժան են Վարդանանք հար ու հավիտյան. այսօր էլ նրանք պահում են իրենց հերոսական անզուսպ խոյանքի կախարդանքը, ոգեշնչում, ազատության ու անկախության համար պայքարի մղում, բարձր գաղափարականության, անձնուրաց նվիրվածության օրինակներ տալիս: Նրանք էին, որ իրենց անմահ սխրագործություններով պաշտպանեցին մեր ինքնուրույնությունը, մեր լեզուն, մեր հավատը, մեր



Վարդան զորավար

մշակույթը: Վարդանանց պատերազմը՝ իր կրոնական բնույթով հանդերձ հանդիսանում էր հայ ժողովրդի ազատության, անկախության, ինքնուրույնության պատերազմ: Վարդանանք Տղմուտ գետի ափին

վառեցին այն անմար ջահը, որ դարեր շարունակ լուսավորեց հայ ժողովրդի իր անկախության ու ազատության համար մղվող պայքարի ուղին: Ավարայրը հայ ժողովրդի գոյամարտի խորհրդանշը, նրա կյանքի ուղենիշը դարձավ: Վարդանանց օրինակը հետագա դարերում հայ ժողովրդի ազատագրական շարժումների ուղեցույց աստղը. եղավ: Ընդհանրապես 5-րդ դարը մեր պատմության մեջ ոչ միայն տառերի գյուտի, գրականության, մշակույթի, այլ և հայ ժողովրդի գոյամարտի ոսկեդարը հանդիսացավ: Հայ ժողովուրդը իր պատմության ծանր փոր-

ձույթյան օրերին միշտ էլ իր սիրագործով հայացքն ուղղել է դեպի անցյալը, դեպի անմահ Վարդանանք, ոգեկոչել նրանց, ներշնչվել նրանց հերոսական գործերով և ոգևորված մարտնչել իր ինքնուրույնության, իր ազգային մշակույթի ու իր հավատի անաղարտության համար:

Քրիստոնեության ընդունմամբ հայ ժողովուրդը որդեգրեց արևմտյան առաջավոր կուլտուրան և դարեր շարունակ մարտնչեց

ղաղ մշակութային գաղափարական պայքարով. Վարդանանց Ավարայր մղող ուժեր, գաղափարը, դա հայ ժողովրդի ինքնուրույն լինելու, անկախ ապրելու ու ստեղծագործելու գաղափարն էր: Վարդանանց պատերազմի օրերին այդ գաղափարն էր, որ դարձնեց հայ ժողովրդի բոլոր զանգվածների միասնականությունը. հայ գյուղացիությունը իր վրա վերցրեց այդ գոտեմարտի ծանրությունը. հայ հոգևորականությունը, որ նախանձախնդիր էր իր ազգի ինքնուրույնության, այդ գաղափարական, ազատագրական պայքարի ոգեշնչողն ու գործոն մասնակիցը եղավ. հայ հոգևորականությունը հայրենիքին սպառնացող վտանգի այդ օրերին եկեղեցիները անառիկ բերդերի, իսկ խաչը հատու սրի վերածելով հանդիսացավ համախմբող, առաջատար ուժ, մինչդեռ հայ նախարարները, ինչպես միշտ, այս անգամ էլ երկրնաբանների, վարանման մեջ ընկնելով երկպառակության ուղին բռնեցին:

Վարդանանց դյուցազնամարտը, որը տեղի ունեցավ 451 թվին, Ավարայրի դաշտում, Տղմուտ

գետի նվիրական ափերին, անմահության փառապատկ հյուանց Վարդանանց զորավարաց և 1036 վկայից համար:

451... անմոռաց տարեթիվ:

Ահա Հայոց լեոնաշխարհի ճամբաներով, ուրապատույտ լեոնային արահետներով, անդնդախոր ձորերի ծերպերի վրայից, խորը կիրճերի միջով արագ սլանում են հեծյալ ու հետիոտն ուրհանդակները: Քաղաքներում, ավաններում, վանքերում, մենաստաններում, պալատներում ու խրճիթներում հնչում է մոտալուտ փոթորկի, ահեղ

պատերազմի ահազանգը.... հայրենիքը վրտանգի մեջ է, թշնամին սպառնում է նրա գոյությունը:

Լեոնակատարներից վար գահավիժող ձնահյուաների նման իրենց ճանապարհին արագ աճելով մարդկային հեղեղն Հայոց աշխարհի բոլոր ծայրերից հորդում է դեպի Վասպուրականի Արտազ գավառի Շավարշան գյուղի առջև տարածված Ավարայրի դաշտը. այդտեղ են շտապում հեծյալ ու

հետևակ, աղեղակիր, նիզակազեն, վահանակիր զինվորներն ու գյուղացիները. այդտեղ է շտապում հայ հոգևորականությունը խաչը մեկ սուրբ մյուս ձեռին. Ավարայրում են ահա արժանահիշատակ Հովսեփ կաթողիկոսը, անմոռաց Ղևոնդ Երեցը և այլ բազում հոգևորականներ:

Ավարայր են եկել Հայոց աշխարհի նախարարներն ու իշխանները: Սպառնացող ընդհանուր վտանգի հանդեպ խաչն ու սուրբ մուր դաշինք են կռել ու ծառացել բռնության դեմ. ավետարանն ու վահանը համահավասար մարտիկների կրծքները զարդարող. զրահ ու պաշտպան են դարձել:

Այստեղ է Ավա-

րայրի հոգին, հազար ու բյուր երգ ու գովքի արժանացած, համաժողովրդական ապստամբության ոգեշնչող ու կազմակերպիչ, հայ ժողովրդի ազատության ու անկախության համար մղվող պայքարի անձնագործ առաջնորդ, սիգապանծ, քաջ ու արի Վարդան Սպարապետը:

Ավարայր էին հավաքվել «Ապստուն և վեց հազար այլ ընդ հեծեալ և ընդ հետևակ». Ավարայր էին փութացել նաև մարտիկներից շատերի հարազատները: Եկան ի դաշտ Շավարշան նաև «կուսանք Հայոց նոր շուշան», ինչպես նաև «տիկնայք փափկասուն



Ղևոնդ Երեց

Հայոց աշխարհին», որպեսզի իրենց ամուսինների, եղբայրների ու հարազատների հետ միասին պայքարեն հայրենիքի համար:

451 թվի հունիսի 1-ի ուրբաթ օրվա գիշերը արտասովոր ժխորով էր լցվել Ավարայրի դաշտը. ձիերի սմբակների դոփյուներ, հրեղեն երկվարների վրնջոցը, զենքերի շաշուներ, մարդկանց աղաղակները միախառնվելով խլացրել էին Տղմուտ գետի ձայնը. Տղմուտը կարծես թե ահաբեկված երկու հզոր ուժերի մոտալուտ բախումից, պապանձվել ու սրտատրոփ սպասում էր ահեղ մարտի ելքին: Լուսինը ամպերի տակից ամոթխած նայում էր Ավարայրին: Տղմուտ գետի ափերին բանակ էին զարկել երկու հզոր ախոյաններ. — պարսկական երեք հարյուր հազարանոց կանոնավոր բանակը՝ վստահ իր թվական գերակշռության ու սպառազինության վրա և վաթսուն և վեց հազարանոց հայոց ժողովրդական բանակը՝ վստահ իր քաջերի աննկուն, ազատասեր ոգու, նրանց մարտնչելու անձնուրաց պատրաստակամության և իրենց արդար գործի վերջնական հաղթանակի վրա:

Կես գիշեր է. Հայոց բանակում բոլորն էլ արթուն են: Տղմուտի ափին կես գիշերվա հանդիսավոր խորհրդավորությամբ մեջ Ղևոնդ Երեցը պատարագ է մատուցում և հաղորդություն տալիս զորքին ու զորականներին. Ավարայրի դաշտը վերածվում է սրբավայրի. մեծ հայրենասեր քահանան օրհնում է այն հողը, որը մի քանի ժամից հետո պիտի ցողվի իր ու իր զինակիցների արյունով. տիրում է խորին լուռություն. գետի մյուս ափին քնած է պարսկական բանակը: Լուսինը ամպերի տակից մերթ րնդ մերթ հայտնվելով ակնապիշ նայում է այդ վեհ ու սառուեցուցիչ տեսարանին: Հայոց բանակի մարտիկները կանգնած են գլխաբաց. Ավարայրի մեղմիկ գեփյուղը շուրջ է նրանց դեմքը, հարդարում վարսերը. կենտրոնում կանգնած է Ղևոնդ Երեցը՝ խաչը ձեռքին բարձր պահած. գիշերային գով ու դի մեջ տարածվում են նրա մարգարեական խոսքերի խրոխտ ու առնական հնչյունները. «Մեռեցեմք, քե՛ մեռեցեմք, մեզ կեանք է ըստ պատմւմ»:

Շարքերը ավելի են սեղմվում, խտանում. բոլորի սրտերը ալիկոծվել են սկսում. խոսում է Սպարապետը. գիշերվա անդորրի մեջ նրա ճառը հնչում է որպես սխրագործության մղող հաղթական մի քայլերգ. «...Առդ, աղաչեմ զձեզ, ով՛ քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձեզ

լաւագոյն էք քան զիս արուսեամբ, և ի զանու ի վեր քստ հայրենի պատույն... Մի երկուցեալ զանգիտեցումք ի բազմութենէ հեքանոսացն, և մի յանագին սրոյ առն մանկանացոյի գրիկունս դարձուցումք զի երբէ՛ տացէ Տէր յաղրութիւն ի ձեռս մեր, սատակեցումք զգորութիւնս նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան և երբէ՛ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահամբ պատերազմիս ընկալցումք խնդութեամբ սրտիս...»:

Ի պատասխան Սպարապետի ճառի թրնդում է նրա արիասիրտ բանակի «Պատրաստ եմք ամենայն փորձութեանց» խրոխտ գոչումը:

Ավարայրումն է նաև Եղիշե վարդապետը, Ավարայրի «խոսնակը», որը իր հոյակապ երկով անմահացրեց Վարդանանց. նա եկել էր իր հայրենասիրական, հրաշունչ, քերթ ու պատկերավոր ճառերով հրդեհելու հայ քաջերի սրտերը, նա եկել էր իր քաղցրախոս քնարով ներշնչելու նրանց, որ «Ման ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»: Նա եկել էր ականատեսի իր գրչով հայ քաջերի դուրացւնամարտի անմահ պատմությունը հյուսելու:

Լուսաբացը մոտ էր. արևելքը սկսել էր շառագունել: Արյաց բանակում սկսվեց իրարանցումը. ամենուրեք վառվում էին ատրուշաններն ու խարույկները. սկսվեցին կրակի պաշտամունքի արախողությունները. պարսից բանակի ամբարտավան հրամանատար Մուշկան Նյուսալավուրտը կոչ էր անում զորքին ու զորականներին քաջությամբ կռվելու:

Սկսվեց պատմական ճակատամարտը. Ավարայրը կաս կարմիր ներկվեց հայ քաջերի արյունով: Հայոց փոքրաթիվ բանակը չշահեց մարտը, բայց չպարտվեց էլ:

Ավարայր մի կայծ, նախերգանք հանդիսացավ մի մեծ հրդեհի, որն իր բոցերի մեջ առավ ողջ Լեռնահայաստանը:

Վարդանի նպատակն էլ հենց այդ էր. նա պատրանքը չունէր Ավարայրի դաշտում մի բուռն հայ անձնուրաց քաջերի միջոցով պարտության մատնել պարսից կանոնավոր, թվական գերակշռություն ունեցող, ապառազներ բանակին: Ավարայրի ճակատամարտը անհրաժեշտ էր ժողովրդական լայն զանգվածների սրտերում բմբուսության հուրը բորբոքելու համար: Վարդանանք զոհվեցին պարտության մատնելով թշնամուն իր նրպատակների իրադործման մեջ: Ավարայրից հետո Լեռնահայաստանի անմատչելի վայր

րերում պաշարը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև որ պարսիկները ստիպված ետ կանգնեցին զրադաշտական կրոնը հայերի շինքին փաթաթելու իրենց մտադրությունից. այսպիսով շնորհիվ Վարդանանց հայ եկեղեցին, հայ լեզուն, հայ մշակույթը ղերծ մնացին պարսկական բռնադատումից:

1495 տարի է անցել Ավարայրի ճակատամարտից հետո. մենք ընդհուպ մոտեցել ենք արդեն Վարդանանց համազգային տոնի 1500-ամյակի կատարմանը:

1495 տարի շարունակ հայ եկեղեցին խնկով ու կնտրուկով տոնում է Վարդանանց զորավարաց և 1036 վկայից տոնը ու փառարանում հանուն եկեղեցու ու հավատի համար նահատակվածների հիշատակը:

Դժվար է պատմության մեջ նշել որեէ դեպք, երբ ճակատամարտում պարտության մատնվածները իրենց մահվանից հետո դարեր շարունակ մեծարվեն և սրբերի շարքը դասվեն այնպես, ինչպես Վարդանանք:

Դարեր շարունակ հայ գուսանները, ապա գրչի հայ վարպետները մեծափառ ձոներով հավերժացրին Վարդանանց հիշատակը և ինքնարուխ զգացմունքներով լի տողեր նրվիրելով նրանց՝ հետագա սերնդներին խանդավառեցին Ավարայրի սրբազան խորհրդով:

1495 տարվա ընթացքում հայ ժողովուրդը շատ Ավարայրներ է ունեցել և իր կյանքի փոթորկոտ ու ալեկոծ օրերին, ծանր մաքառման ժամերին միշտ իր հայացքը հառելով դեպի փառավոր անցյալը, ոգե-

վորվել է Վարդանանց սխրագործություններով ու բարձր պահած ազատության դրոշը բազմաթիվ հերոսամարտեր մղել նոր բռնակալների դեմ:


Դարեր շարունակ բազում արհավիրքներ բովից անցնելով հայ ժողովուրդը շտախաչ, չուսալքվեց ու պայծառ ապագայի ակնկալությամբ ծառացավ բոլոր տեսակի բռնությունների հանդեպ:

Դարեր եկան, դարեր անցան, բայց հայ ժողովուրդը, ինչպես Արարատը, անսասան մնաց ու հասավ իր պատմության նոր, լուսաճաճանշ դարագլխին, Սովետական դարագլխին:

Քսաներորդ դարում ֆաշիստական Գերմանիան, հին զրադաշտական Պարսկաստանի նման, ցանկացավ իր ռեակցիոն-հետադիմական դավանանքը՝ ֆաշիզմը փաթաթել առաջավոր մարդկության վզին. և երբ ամբողջ աշխարհին սպառնացող ֆաշիստական ալդ վտանգի դեմ պաշարի ելան ազատատենչ ժողովուրդները, ապա հայ ժողովուրդի պանծալի զավակները ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պատերազմում իրենց աննման սխրագործություններով հայոց նորագույն պատմության էջերը զարդարեցին ռազմական նոր դրվագներով և ապացույցեցին, որ իրենց նախնիքների՝ քաջարի Վարդանանց ոգին անմեռ է:

Վարդանանց օրինակը ոգեշնչել ու ոգեշնչում է այսօր աշխարհի բոլոր ծայրերը ցրված հայերին, որոնք ձգտում են համախմբվել իրենց հայրենի օջախի շուրջը, ապրել անկախ ու ինքնուրույն և զարգացնել իրենց ազգային մշակույթը:

վ.



Պարոնաց պալատի ավերակներն Անիում (ժ.Գ դար)



ԳԱՐԵԳՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



ատարվեց ինչ որ հայութեան իղձն էր տարիններից ի վեր, և կատարվեց լավագույն կերպով: Հայ ազգային եկեղեցական ժողովն էր այդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փառավոր և միաձայն ընտրութեամբ:

Բացառիկ երևույթ էր մեր պատմության մեջ տեսնել համայն հայության ներկայացուցչությունը հոգևոր և աշխարհիկ դասերի Մայր-Աթոռի կամարների տակ, սկսած Բունդու-Այրեւսից, Հյուսիսային Ամերիկայից, Եվրոպայի բոլոր գաղութներից, Նոստոնգից, Պաղեստինից, Լիբանանից, Սյուրիայից, Պարսկա-Հնդկաստանից, նստած կողք կողքի իւր. Հայաստանի և Միութեան հեռավոր թեմերի պատգամավորների հետ: Տասնյակ հազար մղոններով իրարից հեռու ընկած տարածությունները, ծովերն ու օվկիանոսները, ներկա ժամանակի հետ կապված ճանապարհորդական դժուարությունները մեծածախս, չէին կարողացել արգելք լինել ներքին մղման և բուռն ցանկության, համախմբուիլ հինավուրց տաճարի սրբազան կամարների տակ և կատարել իրենց պարտականությունը դեպի եկեղեցին: Այս ակնհայտնի, ամենքի համար տեսանելի և հասկանալի արտաքին ապացույցն էր, թե հայ ժողովրդի համար ո՞րքան մոտ է Հայաստանյայց եկեղեցին յուր Մայր-Աթոռով և Ամենայն Հայոց Հայրապետութեամբ, որ իբրև մազնիսական ուլժ իրար էր բերել այդպիսի հոծ թվով ներկայացուցչություն աշխարհի ամեն անկյուններից, ուր հայություն կա խմբուած:

Բայց պատգամավորներին մայրենի հրկիրն էր բերել ոչ միայն եկեղեցասիրության զգացմունքը, այլ և հայրենասիրության: Հայ հավատացյալ ժողովրդի պատմական առանձնահատկությունն է այդ, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը սերտ կապուած երևան բերել կյանքի կա-

րեորագույն դեպքերի ժամանակ, Ս. Սահակ-Մեսրոպների և Վարդանանց ու Ղեվոնդյանց օրերից սկսած:

Բ

Ուշադրության արժանի և բացառիկ երևույթ էր ժողովականների մեջ երևան եկած ներդաշնակ և փոխադարձ հասկացողության գալու տրամադրության ուղին: Մենք չենք տեսնել այդպիսի մի մեծ ժողով, համակված սիրո և համերաշխության այնպիսի հոգով, ինչպես այդտեղ: Հարավային Ամերիկայից մինչև Ռուսաստանի խորքերի պատգամավորները, տարբեր երկրների պատկանների, տարբեր լեզուներով, սովորություններով և օրենքներով ղեկավարվող ազգերի միջից եկած, շատ և շատ խնդիրների մեջ էլ, բնականաբար, տարբեր հայացքներով և ըմբռնումներով... զգում էին այստեղ մի մեծ, իրար հետ կապված ամբողջության մասերի ներկայացուցիչներ և անդամներ: Այդ միության ներքին, մղիչ ուժը և՛ եկեղեցասիրական էր և՛ հայրենասիրական:

Հայաստանյայց եկեղեցին պատմական այլ պայմանների մեջ է ծագել, կազմակերպվել և ընթացք ստացել, քան նորանից շատ և շատ հզոր մեծ եկեղեցիները: Բայց ոչ մեկը չի կապված այնպես յուր ժողովրդի կյանքի և պատմության հետ, ինչպես Հայաստանյայց եկեղեցին. կրկնում ենք, որպես հետևանք յուր պատմական ուրույն պայմանների: Նա հայոց ազգային եկեղեցին է, հայ հոգու ամենամեծ ստեղծագործությունը, ամուր շաղախով միացած ինքնապաշտպանության, լեզվի, գրականության, արվեստի և մշակութի բազմաթիվ մարզերի մեջ: Դարերի խորքից եկած սերբազան ավանդն է այդ մեզ հասած: Այդ ավանդի բնազդն էր և գիտակցությունը, որ կապում էր մեզ ամենքիս իբրև ամբողջություն: Ահա մեր ժողովի էական և բնորոշ գծերից մեկը:

Միութեան այս կապը և գիտակցութիւնը երեւան եկան և շեշտվեցան և մի այլ կողմից, թե մի է և անբաժանելի Հայաստան-յայց եկեղեցին, որքան և վարչական տեսակետով տարբերութիւններ լինին յուր մասերի մեջ: Երուսաղեմի պատրիարքութիւնը յուր ներքին կառավարութեան մեջ այլ ձև ու կերպարանք ունի, Կ. Պոլսո պատրիարքութիւնը այլ էր յուր սահմանադրական կազմակերպութեամբ, իսկ ավելի առաջ յուր ակոսականների, դիրքով Օսմանյան պետութեան մեջ, Կիլիկիո կաթողիկոսութեանը այլ, յուր անկախ և եկեղեցական պետի ավանդութիւններով, բայց ընդհանուր միութեան գաղափարը միշտ պահպանված, որ այս անգամ առանձնապես շեշտվեցավ: Ներկա էին նախ և առաջ Երուսաղեմի պատրիարքն անձամբ ու Կ. Պոլսո պատրիարքական տեղապահը, իրենց պատգամավորներով, և ոչ թե ներկայացուցիչներով. ինչպես սովորական էր: Իսկ Կիլիկիո կաթողիկոսութիւնը՝ ոչ միայն առաջին անգամն էր մասնակցում Ամենայն



Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա.

Հայոց կաթողիկոսի ընտրութեան, այլև կաթողիկոսն անձամբ ներկա էր ժողովին յուր եպիսկոպոսներով և աշխարհիկ պատգամավորներով: Ընտրողական նիստը և օծման արարողութիւնները կատարվեցան նորա նախագահութեամբ, նիստերի ժամանակ զույգ կաթողիկոսներն իրար կողքի, համակամ և միասիրտ իբրև հոգևոր հարադատներ. ժողովի գնալիս և գալիս միշտ ընթացակից իրար Պատրիարքի հետ, իսկ օծման գնալու և վեհարան հետ գալու թափօրների ժամանակ մինչև իսկ նույն ամպստանութեան, նորընտիր հայրապետի ցանկութեան համեմատ, աջ և ձախ ժողովրդին օրհնելով,

որ սրտաուշ տեսարանի տպավորութեան տակ, հափշտակութեան էր հասած յուր հոգևորութեան մեջ: Այս միութեան և եղբայրակցութեան հանգամանքը շեշտվեցավ նաև նորահաստատ սահմանադրութեան մեջ, որի մի հոգվածն է. «Հայաստանյայց եկեղեցութիւնն անկախութիւնը գլխավորված է Ամենայն Հայոց կաթողիկոսով, հարաբերութիւն պահելով Կիլիկիո կաթողիկոսութեան հետ»: Որոշվեցավ նույնպես Հայաստանյայց բոլոր եկեղեցիների մեջ անխորտիր պատարագի ժամանակ հիշել Ամենայն Հայոց կաթողիկոսի անվան հետ Կիլիկիո կաթողիկոսի, Երուսաղեմի և Կ. Պոլսո պատրիարքների անունները: Հայտնի է մեր ժողովրդին, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի անունը չէր հիշատակվում Կիլիկիո կաթողիկոսութեան թեմերում, և Ամենայն Հայոց Հայրապետութեան ենթակա թեմերում Կիլիկիո կաթողիկոսի անունը: Սորանով էլ ժողովը կամեցավ շեշտելով ինի Հայաստանյայց եկեղեցվո միութիւնը: Կարևորագույն, հրեւոյթ էր նաև Մայր Աթոռի նշուխական

ապահովութեան հոգացողութեան խընդիրը: Հայտնի է, որ Հայաստանում հաստատված նոր իրավակարգով բոլոր և կեղեցիները, ինչպես և անհատները իրավունք չունին հաստատաբեր կալվածներ ունենալու կամ շահաբեր դրամագումարներ: Նոր իրավակարգով հավատացյալներն իրենք պիտի հոգան եկեղեցիների նշուխական կարիքները: Բնականաբար, նույն օրենքներին և կացութեան է ենթարկված և Մայր-Աթոռը, որ մինչև այժմ կառավարվել է մոմավաճառութեան և կամավոր նվերների հասուլթներով: Բայց այժմ, երբ Խորհրդային Խղխանութեան բարեհաճ վերաբերմունքով

իրավունք է տրվում վերաբանալու հոգևոր ճեմարանը, ունենալու տպարան, եկեղեցական պաշտաման և կյանքի հետ կապված գրքեր և հրատարակություններ կատարելու, նոր վերակազմվում է նոր միաբանություն և հարություն է առնում եկեղեցական մի նոր կյանք, նոր իրավակարգի սահմանների մեջ, ընդարձակվում է և կարևորագույն խնդիր դառնում նյութական ապահովության հարցը: Ժողովը երևա՞ն հանեց նախ, թե բավական գումարներ նշանակված են թեմերի կողմից իբրև միանվագ նվերներ, «դարբասներ» ժողովի հետ կապված ծախսերը հոգալու և մասամբ նյութական կացության օգնելու: Ճեմարանի բացման առթիվ թեմերի և անհատ պատգամավորների կողմից խոստովանելու եղան հոգալու 40 սաների թոշակը, յուրաքանչյուրի համար տարեկան 500 դոլլար: Կիլիկիո-կաթողիկոսը հայտնեց, որ եգիպտական պ. Կ. Սարբմյանը հանձնել է 50 եգիպտական ոսկի փոխանցելու Մայր Աթոռին իբրև տարեկան թոշակ յուր անուանով մի սանի, որ պետք է մշտական դառնա, ինչպես և դպրեմանքում ունի մի սան: Մայր Աթոռի համար իբրև մշտական հասույթ որոշվեցան էջմիածնական թեմերի եկեղեցիների ընդհանուր եկամուտներից 5 առ 100 հատկացնել Մայր-Աթոռի պահպանության, չհաշված կամավոր նվերները: Այս պարտավորության չի ենթարկվում Կիլիկիո Կաթողիկոսությունը իբրև նոր հաստատված Անթիլասում և տարբեր պամանների ենթակա, ինքն էլ կարող օգնության: Տաճարի նորոգության հոգացողությունը հանձնվեցավ՝ զույգ կաթողիկոսներին, իրենց գիտցած միջոցներով ձեռք բերելու հարկավոր գումարը, հայտնի դառնալով ժողովին, թե նախկին նվիրակի ձեռքով հավաքված պատրաստ գումարն է 37 հազար դոլլար: Սակայն ժողովը չվերջացած, արտասահմանից հեռագրական լուր




Կիլիկիո կաթողիկոս Գաբեգին Ա-ի ժամանումը Երևան

ստացվեցավ, թե մի մեծահարուստ ազգային կամենում է իմանալ, թե որքա՞ն ծախս կպահանջե տաճարի նորոգությունը և վանքի պահպանությունը: Այսպիսով համագային այդ մեծ խնդիրն էլ պիտի հոգացվի և ապահովուի հազարավոր տարիների պատմական և սրբազան հուշարձանի կյանքը:

Գ

Արդեն հիշեցինք, թե այս ժողովը եկեղեցական խնդիրներից դուրս ևս ունեցավ յուր մեծ նշանակությունը: Աշխարհի ամեն կողմերից եկած պատգամավորները իրենց աչքերով տեսան հայրենի երկրի պետական, տնտեսական, մտավոր և զեղարվեստական կյանքի մեծ հառաչողիմությունը կարճ ժամանակի մեջ: Տեսան Երևանում սկսուած սքանչելի շինարարությունը եվրոպական մտքով, լայն և ծառազարդ պողոտաներով,

ընդարձակ հրապարակներով, պարտեզներով և ծաղկանոցներով: Օպերայի և կառավարական տան շենքերով պարծենալ կարող ենք մեզնից թուով շատ ավելի մեծ և պետականություն մթնոլորտի առաջ, գեղեցիկ, հույսկալ, հայ ճարտարապետական ոճով ու գարդարանքով, անմահ թամանյանի գործերով: Տեղան գեղարվեստական, պատմական, ազգագրական, հայ գրողների, երկրաբանական թանգարանները, հնությունը պահպանության կոմիտեն, պետական կենտրոնական գրադարանը (տպած գրքերի) յուր երկու միլիոնի շափ գրքերով, մատենադարանը (ձեռագրատունը) տաս հազար ձեռագիրներով և երեք հազարի շափ ֆրանգմենտներով, հայ ժողովրդի ամենամեծ գանձը, կարգավորված և մշակված ցուցակներով, որ մեծ օգնություն է գիտությունը դրավորներ համար, պահպանություն էլ խնամքով և աշխատող պաշտոնյաներով: Ծրագրված է մեծ և փառավոր շենքեր շինել թանգարանի և մատենադարանի համար և... կարող եք միտածել, զարդարված Ս. Սահակի և Մեսրոպի, Նարեկացու և ալոց արձաններով, որոնց նախագծերը ցույց դրված տեսանք մատենադարանի պատերին: Քսան, քսան հինգ տարի առաջ Խորհրդային Հեղափոխության ըսկզբնական շրջաններում շատ հայրենասերներ մտահոգության մեջ էին, թե ի՞նչ պիտի լինի մեր վիճակը ազգային տեսակետով, մեր անցյալը յուր ստեղծագործություններով և մնացորդ հնություններով: Այսօր ազգային զգացումն ու գնահատությունը անցյալի, յուր կարևոր դերն է կատարում մեր ստեղծագործության մեջ, ենթակի բարձր խնամքի և դուրգութան: Յուրեղեցին էլ սկսում է հարություն առնել նոր պայմանների սահմանների մեջ: Ամենայն հեղափոխություն յուր սկզբնական



Կիլիկիո կաթողիկոս Գաբրիել Ա. Գեղարդում

շրջանում բուռն է և հարձակողական, հասկանալի է ալո: Բայց շարունակենք մեր բացատրությունը:

Ունինք գիտության և արվեստի բարձր հաստատությունները, Գիտությանը ճեմարանը յուր բաժանմունքներով, համալսարանը յուր ֆակուլտետներով, կլինիկաներով, հիվանդանոցներով, մի ամբողջ համալսարանական թաղամաս: Ունինք մեր երաժշտական և նկարչական ու ալ մասնագիտական դպրոցներ, պետհրատը...: Եվ այս բոլորը տեսան մեր պատգամավորները, շրջումն ունեցան պետական գործիչների, միտավորականների, բանաստեղծների, վիպասանների, երաժշտագետների, երգիչների և դերասանների մեծ խմբերի հետ, տեղան, թե մի նոր ստեղծագործական կյանք է ըս-

կըսված մեր ժողովրդի մեջ, ընդունակ բարձր թռիչքների և հառաջադիմության: Լսեցին և ականատես եղան հայ լեզվով երգված օպերաների, ազգային կամ տար ստեղծագործությունների. տեսան բեմական արվեստի լավագույն դերասաններով ներկայացումներ: Ումանք ներկա եղան և երաժշտական դպրոցների աշակերտների քչանական նվագահանդեսին, հիացմունքով ունկնդրեցին մեծերի և փոքրերի անհատական և խմբական նվագներին ու երգերին՝ շատերի մեջ նկատելով ակնհայտի տաղանդի ապացույցներ: Չէ՛, Երևանը փոխարկվել է և փոխարկվում է գեղարվեստական և երաժշտական քաղաքի, համեմատ մեր ժողովրդի գեղարվեստական կենդանի զոացման և ունակության, որ ժառանգել ենք մեր հայրերից: Ինչքան փոփոխություններ մեզ համար, որ տաս տարի էր, ինչ հեռացել ինք հայրենիքից:

Պատգամավորներից շատերը այցելեցին և նորաշեն ավանները Երևանի շուրջը. Արաբկիրը քաղաքանման, Սեբաստիան, Մալաթիան, Նուպարաշենը, Բյութանիան... Նախկին անապատների մեջ, այժմ կանաչազարդ և ծաղկյալ ավաններ, դպրոցական, մշակութային և արդյունաբերական այլ և այլ հաստատություններով և շենքերով: Այլ և ուրիշ անապատ վայրերի պտղաբեր դաշտերի և այգիների վերածումը հետևանք էր ջրանցքների բացման և ոռոգման գործի կանոնավորման, որ Խորհրդային Հայաստանի կառավարության կարևորագույն աշխատանքներից մեկն է: Երևանի և Վաղար-

շապատի մեջ եղած տարածության բավական ընդարձակ մասը ճանապարհի երկու կողմից անապատ էր, որ այժմ պտղաբեր այգիներ են և պարտեզներ: Այցելեցին նաև հին, պատմական և նուիրական վայրեր, հինավուրց Օշականը, Ս. Մեսրոպի գերեզմանով, Աշտարակը, Հանավանքը յուր տվերակների մնացորդներով, երբեմնի լուսավորության կեդրոններից մեկը, Սևանը համանուն գեղեցիկ ծովակով, Տրդատա թալատը, հունա-հռոմեական ոճի ամրոցով և մեհենական տաճարով, բազալտի ահավոր ժայռերը կախված ձորի վրա, Գեղարդականքը յուր վիմափոր տաճարներով, Մխիթար Այրիվանեցու քարայրը, ուր նա գրել է յուր վիթխարի ճառերնորը և մյուս աշխատությունները առանձնություն մեջ, Գեղարդաձորը՝ բնության ամենագեղեցիկ տեսարաններն առաջին....:

Այս համառոտ նկարագրությամբ պարզ պիտի լինի մեր ժողովի պատմական արժեքը և հասկանալի այն մեծ ոգևորությունը, որով պատգամավորները վերադարձից հետո, սկսել են դասախոսություններով և հողվածաշարքերով հողարդակից անել ժողովրդին իրենց տպավորությունները, ավելի սերտ կապելով հայրենիքի հետ: Լինենք հավատարիմ քաղաքացիներ այն բոլոր երկրների, ուր սիրալիր ասպնշականություն ենք գտել, շմոռանալով մեր պատմական հայրենիքը, դեպի ուր ուղղված պիտի լինին մեր հոգու աչքերը:

(«Հասկ» Անթիլաս)





ԵՐԿԱՆԴ ՇԱՀԱՋԻՉ

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱԼԱՆՅԱՆ



Երվանդ Շահադիզ



ՆՀայտ անձ չէ ՍալանՅանը. նա հեղինակն է այն 13 ընդարձակ ու շատ հետաքրքիր նյութակների, որ գրել է Խ. Ա.

բովանդին, վերջինիս Գորբատով ուսանելու ժամանակ: ՍալանՅանը հայտնի է իբրև էջմիածնի միաբանության իր ժամանակի կրթված անդամներից մեկը, իբրև Լազարյան ճեմարանի կրոնուսուցիչ և հայոց լեզվի երկարամյա ուսուցիչ, իբրև գրականագետ և վերջապես իբրև հայ եկեղեցական գրքերի նախարարությունից հաստատված քրքենիչ: Նրա գրվածքներից հայտնի են գրաբար լեզվի «Քերականութիւնը» և «Ճարտասանութիւնը», որ գրել ու տպագրել է հատկապես իր աշակերտների համար. նա է կազմել ու խմբագրել Լազարյան ճեմարանի աշակերտների գրաբար լեզվով շարադրված գրվածքների ժողովածուն՝ «Մուսայի Արարատեանը», որի օրինակով և հետևելով հետագայում կազմվել ու հրատարակվել է նաև «Ներսիսեան դպրոցի երեխայիքը»: ՍալանՅանի անունը կապված է նաև 1828 թվին քարոզչական նրպատակներով Ռուսաստան եկած և Շուշի (Շօշ, Շօշի-բերդ, Շօշվա-դալան) քաղաքում հաստատված Բազելյան միսիոնարների ձեռքով և հոգացողությամբ առաջին ան-

գամ գրաբարից աշխարհաբարի վերածված ավետարանի հրատարակության կարևոր գործի հետ (1834 թ.). ՍալանՅանն է եղել, որ գրաքննել է այդ թարգմանությունը և իրավունք տվել տպագրելու: Մոսկվայում 1833 թվի մայիսի 16-ին:

Այսու հանդերձ, մենք մինչև օրս էլ դեռ շատ թերի, կցկտուր տեղեկություն ունենք նրա կյանքի մասին, ուստի և դժվարանում ենք վերականգնել նրա ստույգ ու շատ թնփել լիակատար կենսագրությունը: Գրական թանգարանում գտնվող նրա նամակները՝ հասցեագրված Աբովյանին՝ բարեբախտաբար գալիս են մեզ նպաստելու այդ պակասն ու թերին լրացնելու համար. լրացնելու եթե ոչ լիակատար կերպով, գոնե մասամբ, էական գծերով միայն. էլ չենք խոսում արդեն դրանց կարևորության մասին հատկապես Աբովյանի նկատմամբ՝ վերջինիս դեմքը, ներքին աշխարհը պարզաբանելու և ընդհանրապես նրան բնութագրելու տեսակետից:

Թե ե՞րբ է ծնվել ՍալանՅանը, ի՞նչու էր ծնողների զավակ է եղել և ո՞րտեղ կամ ի՞նչպես է անցկացրել մանկությունը, մենք չգիտենք. միայն կարող ենք ասել, որ նա պոլսեցի էր, հավանորեն հայ-կաթոլիկ ըն-

տանիքի զավակ. և իր կրթութիւնն ու դաստիարակութիւնը ստացել էր Լիբանանի Ս. Անտոնի հայ-կաթոլիկ վանքում, որտեղ և ուսման ընթացքն ավարտելուց հետո ձեռնադրվել էր արքեպիսկոպոս, ապա վարդապետ և հայտնի դարձել «Լիբանանցի Հովակիմ վարդապետ» անունով:

1817 թվին նա իր հոգևոր իշխանութիւն կողմից ուղարկվում է Հաշտարխան, որպէս տեղական հայ-կաթոլիկ փոքրիկ համայնքի հովիւ-քահանայ. գալով Հաշտարխան նա քննակութիւն է հաստատում «կապուռչիներ» կոչված վանքում: Այդ ժամանակները Հաշտարխանում էր ապրում տակավին եւրիտասարդ, 1817 թ. փետրվարի 13-ին ստրկավագ ձեռնադրված Գ. Պատկանյանն իր ծնողների հետ. նա դասավանդում էր նորաբաց (1817 թ. հուլիս) հոգևոր դպրոցում: Միաժամանակ այդտեղ էին գտնվում Երուսաղեմի նվիրակ պոլսեցի Կարապետ վարդապետը, որը Եփրեմ կաթողիկոսի կողմից հետո եպիսկոպոս ձեռնադրվելուց ու աղբիւնապոլսեցի Պողոս պատրիարքից հետո Պոլսի պատրիարք Կարգվեց և կաթոլիկութիւնից դարձած կարնեցի Սերովրէ վարդապետը, որը եկել էր էջմիածնից և գնում էր Մոսկվա՝ Լազարյան ճեմարանի հայաց լեզվի ուսուցչի պաշտոնով:

Հաշտարխանի այդ սակավաթիւ հայ-կաթոլիկ համայնքը գոյացել էր Կապուռչի և հատկապէս «Լեհահայութեան բուն միութեան» պատմութեանից հայտնի Կղեմէս Գալանոս եռանդուն միսիոնարի ու նրա աշակերտների քարոզչական ջանքերի շնորհիւ հայադավաններից բաժանված և պապականութեան գիրկը մտած հայերից: Դրանք, պապական հայերը չէին հասկանում իսկ, թե աղգ ու դավանութիւն կամ եկեղեցի տարբեր հասկացողութիւններ են և մի դավանութիւնից կամ եկեղեցուց մյուսը փոխվելը դեռ չի նշանակում ազգութիւնն էլ փոխել, որ այս կամ այն դավանութեան պատկանելն ազատ կամքի, ընտրութեան և համոզմունքի խնդիր է, իսկ ազգի պատկանելն ազատ կամքի ու ընտրութեան հետ ոչ մի կապ չունեցող՝ արյան և ծագման խնդիր. այդ պատճառով էլ այդ հայերն իրենց «Քրեանկ» են անվանել և ինչ-դեռ Պատկանյանն է ասել «Ողջուն քեզ, Որդիս, ասելով և ծնկան վրա կաղալով ու ստեպ-ստեպ Յիսուս և Մարիամ կրկնելով կարծել են, թե «Քրեանկ» եղան, վիրջացան»:

Դրան, այդ հանգամանքին, նպաստում և նրանց առաջին հովիւ-քահանաները ընթացող օտարազգի լինելով — մեծ մասն լեհացի կսյուններ — ոչ միայն չեն ցել, որ իրենց այդ նորադավանները կանան իրենց նոր եկեղեցու ժամանակները, որի համար անհրաժեշտ էր, ինքն հայերեն սովորեին, այլ ընդհակառակը ձգտել են բոլոր ներքին ու անմիջեցեանով ապագայնացնել նրանց. տարագիր խորհուրդը նրանք կատարել լատիներեն, քարոզները խոսել անհայնալի լեհերեն լեզվով և ընդհանրապէս խտուել են ներշնչել նրանց ատելութիւն դեպի այն ամենը, ինչ որ կարող էր շեղել նրանց հայ լինելն ու հայութիւն ապահով արագացնելով նրանց կորուստ հայութեան համար:

Հովակիմ վարդապետը՝ Սալլանյանը կաթոլիկ լինելով հանդերձ, եղել է հայ սիրելի է իր մայրենի լեզուն և ազգութիւնը, որ պատարագի խորհուրդը կատարել հայերեն, քարոզել ու սովորեցրել է հայերեն, որ չի քաշվել իր խցում ընդունել այն հայադավան երիտասարդներին, որոցանկացել են տեսնվել, ծանոթանալ ու խոսել նրա հետ, դուր չի եկել իր խորթագոտին, հավանելի չի եղել նրան և ահա տակապէս պատարագը հայերեն կատարելու պատճառով, թեև նրանք լատիներ պատարագից էլ բան չէին հասկանում:

Սալլանյանը, իհարկե, նկատել էր հոտի դժգոհութիւնը, բայց բանի տեղ դրել ու շարունակել է իր բռնած ընթացքը. նա ցանկութիւն է հայտնել ծանոթանալ Պատկանյանի հետ ու խնդրել է իրեն աջակցելով հայադավան երիտասարդներին Պատկանյանի գրվածքներից որևէ բան բերել կարդալու համար. երիտասարդները Պատկանյանին հայտնում են Սալլանյանի ցանկութիւնը և Պատկանյանը ուղարկում նրան ռուսերեն լեզվից իր թարգմանած Դիոդորոս Միկիլլացու մատենադարան կոչված հնախոսութիւնից «Աղեքսանդր Մակեդոնացու արկածները»: Ապա Պատկանյանը անձամբ ծանոթանում է նրա հետ և նույնիսկ մի անգամ էլ նրան ու վերը հիշած վարդապետներին հրավիրում է իր տունը ու հյուրասիրում մինչև առավոտ:

Մինչ այս մինչ այն կաթոլիկ համայնքի դժգոհութիւնն իրենց հովիւ-քահանայի դեմ գնալով այնքան է աճում ու սաստկանում, և դա հատկապէս պատարագի խորհուրդը հայերեն կատարելու համար, որ մի օր էլ

խանգարվում է նրա հայերեն պատարագը, ու ինքն էլ ստիպված է լինում փախչել ու մտնել հայոց եկեղեցին և ապավինել Պատկանյանի օգնության: Պատկանյանը քաղաքում մի բնակարան է վարձում, ուր և փոխադրվում է Սալլանթյանը ու մի քանի ամիս շարունակ ապրում հայադավանների հայթայթած միջոցներով:

Այստեղ ընդհատվում է մեր ունեցած տեղեկությունների թելը: Հայտնի է միայն, որ նա մի քանի անգամ իր հոտի հետ հաշտվելուց ու գծովելուց հետո մտնում է վերջնականորեն հայ եկեղեցու գիրկը և կարգվում Լազարյան ճեմարանի կրոնագիտության և հայոց լեզվի ուսուցիչ: (Տես մեր «Տեր-Գարրիել Պատկանյան» գրվածքը, էջ 65—67): Ահա հենց այդ ժամանակ է կատարվել Սալլանթյանի անվանափոխությունը: Հաշտարխանի այն ժամանակվա երկարամյա առաջնորդ (1811—1829) Հովհաննես Գառնակերյանի կամ Հակոբյանի պատվերով Պատկանյանը ուղարկվում է Սալլանթյանին գավազանի հետ նաև մի ընտիր վկայական, որի մեջ վերջինիս անունը փոխված էր «Միքայելի», որքան մեղ հայտնի է պատմարան Միքայել Չամչյանի անունով, որին նա սիրելիս է եղել. Սալլանթյանը սիրով ընդունում և մինչև վերջն էլ պահպանում է այս նոր անունը, մոռացության տալով իր նախկին «Լիբանանցի Հովակիմ» անունը:

Թե այնուհետև ի՞նչ հետաքրքիր իրադարձություններ ու միջադեպեր են տեղի ունեցել և Սալլանթյանը մինչև իր հիշյալ պաշտոնին անցնելը ո՞րտեղ է գտնվել, մենք չենք կարող ստուգապես որոշել. սակայն նկատի ունենալով որոշ հանգամանքներ, կարող ենք գեթ մոտավորապես ցույց տալ, թե նա ե՞րբ կարող էր Մոսկվա գնացած ու իր պաշտոնին անցած լինել:

Մեր ձեռքին են գտնվում Խ. Արուվյանի երկու նամակը. դրանցից առաջինը գրված

է էջմիածնում 1830 թվի մայիսի 25-ին և հասցեագրված Հարություն վարդապետ Ալամդարյանին, իսկ երկրորդը՝ գրված է Երևանում, նույն թվի մայիսի 28-ին ու հասցեագրված դարձյալ Ալամդարյանին. իսկապես դրանք ուրույն, տարբեր բովանդակությամբ նամակներ չեն, այլ միևնույն նամակի տարբեր փոփոխակները, որոնք սակայն լրացնում են իրար: (Տես այս նամակները «Իրվան»-իս առաջին հատորում, էջ 26—27 և 71—72):

Այս նամակներից պարզվում է, որ «Հայկական մարզի» կառավարիչ հայազգի գորավար գեներալ Բարսեղ Հովսեփի Բեհբուդյանը 1830 թվի մայիսին եկել էր էջմիածին իր հետ բերելով մեզ հայտնի Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչ կարնեցի Սերովբե վարդապետին. Բեհբուդյանը հանձնարարություն է ունեցել Կովկասի կուսակալ Պասկևիչից — նախ՝ եպիսկոպոս ձեռնադրել տալ իր հետ բերած Սերովբե վարդապետին և երկրորդ՝ անառաջնորդ մնացած թեմերում առաջնորդներ կարգել կառավարության ցանկացած



Միքայել աբեղապետ Սալլանթյան

եպիսկոպոսներին: Գեներալ Բեհբուդյանին հաջողվեց՝ 13 օրվա ընթացքում կատարել այդ հանձնարարությունները: Մայիսի 23-ին մեծ շուքով և հանդիսավոր կերպով Սերովբե վարդապետը եպիսկոպոս է ձեռնադրվում և ընտրվում Հաշտարխանի թեմի առաջնորդ, այնուհետև ընտրվում են մյուս թեմերի առաջնորդներն այսպես՝ վանքի ավագ լուսարար Հովհաննես արքեպիսկոպոս Կարբեցին ընտրվում է Թիֆլիսի թեմի առաջնորդ, իսկ ներսես Աշտարակեցին՝ Բեսարաբիայի նորակազմ թեմի, իրեն արքսոք կամ «արգելում», ինչպես ասված է Արուվյանի՝ նամակի առաջին փոփոխակի մեջ, և այլն:

Արդ նկատի ունենալով, որ Սերովբե կարնեցին դրանից դեռ առաջ Ախալցխայում է եղել և այնտեղից է եկել, էջմիածին ու եպիսկոպոս ձեռնադրվելով ընտրվել

տանիքի զավակ. և իր կրթությունն ու դաստիարակությունը ստացել էր Լիբանանի Ս. Անտոնի հայ-կաթոլիկ վանքում, որտեղ և ուսման ընթացքն ավարտելուց հետո ձեռնադրվել էր արքեպիսկոպոս, ապա վարդապետ և հայտնի դարձել «Լիբանանցի Հովակիմ վարդապետ» անունով:

1817 թվին նա իր հոգևոր իշխանության կողմից ուղարկվում է Հաշտարխան, որպես տեղական հայ-կաթոլիկ փոքրիկ համայնքի հովիվ-քահանա. դալով Հաշտարխան նա քնակություն է հաստատում «կապույտներ» կոչված վանքում: Այդ ժամանակները Հաշտարխանում էր ապրում տակավին եւրոպացի, 1817 թ. փետրվարի 13-ին ստրկավաճ ձեռնադրված Գ. Պատկանյանն իր ծնողների հետ. նա դասավանդում էր նորաբաց (1817 թ. հուլիս) հոգևոր դպրոցում: Միաժամանակ այդտեղ էին գտնվում Երուսաղեմի նվիրակ պոլսեցի Կարապետ վարդապետը, որը Եփրեմ կաթողիկոսի կողմից հետո եպիսկոպոս ձեռնադրվեց ու ադրիանապոլսեցի Պողոս պատրիարքից հետո Պոլսի պատրիարք կարգվեց և կաթոլիկությունից դարձած կարնեցի Սերովյան վարդապետը, որը եկել էր էջմիածնից և գնում էր Մոսկվա՝ Լազարյան ձեռնարանի հայաց լեզվի ուսուցչի պաշտոնով:

Հաշտարխանի այդ սակավաթիվ հայ-կաթոլիկ համայնքը գոյացել էր Կապույտն և հատկապես «Լեհահայություն բունի միություն» պատմությունից հայտնի Կղեմես Գալանոս եռանդուն միսիոնարի ու նրա աշակերտների քարոզչական ջանքերի շնորհիվ հայադավաններից բաժանված և պաշակալություն գիրկը մտած հայերից: Դրանք, պապական հայերը չէին հասկանում իսկ, թե աղգ ու դավանություն կամ եկեղեցի տարբեր հասկացողություններ են և մի դավանությունից կամ եկեղեցուց մյուսը փոխվելը դեռ չի նշանակում ազգություն էլ փոխել, որ այս կամ այն դավանության պատկանելն ազատ կամքի, ընտրության և համոզմունքի խնդիր է, իսկ ազգի պատկանելն ազատ կամքի ու ընտրության հետ ոչ մի կապ չունեցող՝ արյան և ծագման խնդիր. այդ պատճառով էլ այդ հայերն իրենց «Քրանկ» են անվանել՝ և ինչպես Պատկանյանն է ասել «Ողջունք քեզ, Ռուրիամ, ասելով և ծնկան վրա կաղալով ու ստեպ-ստեպ Յիսուս և Մարիամ կրկնելով կարծել են, թե «Քրանկ» եղան, վերջացան»:

Դրան, այդ հանգամանքին, նպաստել են և նրանց առաջին հովիվ-քահանաները, որոնք օտարազգի լինելով՝ մեծ մասամբ լեհացի կայսերներ՝ ոչ միայն չեն հուպեցել, որ իրենց այդ նորադավանները հանկանան իրենց նոր եկեղեցու ժամասացությունը, որի համար անհրաժեշտ էր, որ իրենք հայերեն սովորեին, այլ ընդհակառակը ձգտել են բոլոր ներելի ու աններելի միջոցներով ապագայնացնել նրանց. պատարագի խորհուրդը նրանք կատարել են լատիններեն, քարոզները խոսել անհասկանալի լեհերեն լեզվով և ընդհանրապես աշխատել են ներշնչել նրանց ատելություն դեպի այն ամենը, ինչ որ կարող էր հիշեցնել նրանց հայ լինելն ու հայությունը, այսպիսով արագացնելով նրանց կորուստը հայության համար:

Հովակիմ վարդապետը՝ Սալլանյանը, որ կաթոլիկ լինելով հանդերձ, եղել է հայ ուսիրել է իր մայրենի լեզուն և ազգությունը, որ պատարագի խորհուրդը կատարել է հայերեն, քարոզել ու սովորեցրել է հայերեն, որ չի քաշվել իր խցում ընդունելու այն հայադավան երիտասարդներին, որոնք ցանկացել են տեսնվել, ծանոթանալ ու խոսել նրա հետ, դուր չի եկել իր խորթագած հոտին, հավանելի չի եղել նրան և այդ հատկապես պատարագը հայերեն կատարելու պատճառով, թեև նրանք լատիններեն պատարագից էլ բան չէին հասկանում:

Սալլանյանը, իհարկե, նկատել էր իր հոտի դժգոհությունը, բայց բանի տեղ չի դրել ու շարունակել է իր բռնած ընթացքը: Նա ցանկություն է հայտնել ծանոթանալու Պատկանյանի հետ ու խնդրել է իրեն այցելող հայադավան երիտասարդներին Պատկանյանի գրվածքներից որևէ բան բերել կարդալու համար. երիտասարդները Պատկանյանին հայտնում են Սալլանյանից անհավանական և Պատկանյանը ուղարկում է նրան ռուսերեն լեզվից իր թարգմանած Դիոդորոս Միկիլացու մատենադարան կոչված հնախոսությունից «Աղեքսանդր Մակեդոնացու արկածները»: Ապա Պատկանյանը անձամբ ծանոթանում է նրա հետ և նույնիսկ մի անգամ էլ նրան ու վերը հիշած վարդապետներին հրավիրում է իր տունը ու հյուրասիրում մինչև առավոտ:

Մինչ այս մինչ այն կաթոլիկ համայնքի դժգոհությունն իրենց հովիվ-քահանայի դեմ գնալով այնքան է աճում ու սաստկանում, և դա հատկապես պատարագի խորհուրդը հայերեն կատարելու համար, որ մի օր էլ

խանգարվում է նրա հայերեն պատարագը, ու ինքն էլ ստիպված է լինում փախչել ու մտնել հայոց եկեղեցին և ապավինել Պատկանյանի օգնության: Պատկանյանը քաղաքում մի քանակարան է վարձում, ուր և փոխադրվում է Սալլանթյանը ու մի քանի ամիս շարունակ ապրում հայադավանների հայթայթած միջոցներով:

Այստեղ ընդհատվում է մեր ունեցած տեղեկությունների թելը: Հայտնի է միայն, որ նա մի քանի անգամ իր հոտի հետ հաշտվելուց ու գժտվելուց հետո մտնում է վերջնականորեն հայ եկեղեցու գիրկը և կարգվում լազարյան ճեմարանի կրոնագիտության և հայոց լեզվի ուսուցիչ: (Տես մեր «Տեր-Գաբրիել Պատկանյան» գրվածքը, էջ 65—67): Ահա հենց այդ ժամանակ է կատարվել Սալլանթյանի անվանափոխությունը: Հաշտարխանի այն ժամանակվա երկարամյա առաջնորդ (1811—1829) Հովհաննես Գառնակերյանի կամ Հակոբյանի պատվերով Պատկանյանը ուղարկվում է Սալլանթյանին դավադանի հետ նաև մի ընտիր վկայական, որի մեջ վերջինիս անունը փոխված էր «Միրաչելի», որքան մեզ հայտնի է պատմարան Միրաչել Չամչյանի անունով, որին նա սիրելիս է եղել. Սալլանթյանը սիրով ընդունում և մինչև վերջն էլ պահպանում է այս նոր անունը, մոռացություն տալով իր նախկին «Լիբանանցի Հովակիմ» անունը:

Թե այնուհետև ի՞նչ հետաքրքիր իրադարձություններ ու միջադեպեր են տեղի ունեցել և Սալլանթյանը մինչև իր հիշյալ պաշտոնին անցնելը ո՞րտեղ է գտնվել, մենք չենք կարող ստուգապես որոշել. սակայն նկատի ունենալով որոշ հանգամանքներ, կարող ենք դեթ մոտավորապես ցույց տալ, թե նա ե՞րբ կարող էր Մոսկվա գնացած ու իր պաշտոնին անցած լինել:

Մեր ձեռքին են գտնվում իս. Աբովյանի երկու նամակը. դրանցից առաջինը գրված

է Էջմիածնում 1830 թվի մայիսի 25-ին և հասցեագրված Հարություն վարդապետ Ալամդարյանին, իսկ երկրորդը՝ գրված է Երևանում, նույն թվի մայիսի 28-ին ու հասցեագրված դարձյալ Ալամդարյանին. իսկապես դրանք ուրույն, տարբեր բովանդակությամբ նամակներ չեն, այլ միևնույն նամակի տարբեր փոփոխակները, որոնք սակայն լրացնում են իրար: (Տես այս նամակները «Դիվան»-իս առաջին հատորում, էջ 26—27 և 71—72):

Այս նամակներից պարզվում է, որ «Հայկական մարզի» կառավարիչ հայազգի գործարար գեներալ Բարսեղ Հովսեփի Բեհբուդյանը 1830 թվի մայիսին եկել էր Էջմիածին իր հետ բերելով մեզ հայտնի լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչ կարնեցի Սերոբյան վարդապետին. Բեհբուդյանը հանձնարարություն է ունեցել Կովկասի կուսակալ Պասկևիչից — նախ՝ եպիսկոպոս ձեռնադրել տալ իր հետ բերած Սերոբյան վարդապետին և երկրորդ՝ անառաջնորդ մնացած թեմերում առաջնորդներ կարգել կառավարություն ցանկացած



Միրաչել արքեպիսկոպոս Սալլանթյան

եպիսկոպոսներին: Գեներալ Բեհբուդյանին հաջողվեց՝ 13 օրվա ընթացքում կատարել այդ հանձնարարությունները: Մայիսի 23-ին մեծ շուրջով և հանդիսավոր կերպով Սերոբյան վարդապետը եպիսկոպոս է ձեռնադրվում և ընտրվում Հաշտարխանի թեմի առաջնորդ, այնուհետև ընտրվում են մյուս թեմերի առաջնորդներն այսպես՝ վանքի ավագ լուսարար Հովհաննես արքեպիսկոպոս Կարբեցին ընտրվում է Թիֆլիսի թեմի առաջնորդ, իսկ Ներսես Աշտարակեցին՝ Բնսարաբխայի նորակազմ թեմի, իբրև արքսոք կամ «արգելումն», ինչպես ասված է Աբովյանի՝ նամակի առաջին փոփոխակի մեջ, և այլն:

Արդ նկատի ունենալով, որ Սերոբյան կարնեցին դրանից դեռ առաջ Ախալցխայում է եղել և այնտեղից է եկել Էջմիածին ու եպիսկոպոս ձեռնադրվելով ընտրվել

Հաշտարխանի առաջնորդ, ուրեմն պետք է կարծել, որ 1830 թվի մայիսին կամ դրանից էլ ավելի առաջ նա հրաժարված է եղել Լազարյան ճեմարանի ուսուցչի պաշտոնից: Այս բոլորից կարելի է հանգել այն ստույգ եզրակացության, որ Միքայել Սալլանթյանը, որը կաթողիկոսությանից արդեն հրաժարվելով ընդունվել էր Եփրեմ կաթողիկոսի կողմից ու էջմիածնում էր գտնվում, հենց այդ 1830 թվին էլ Եփրեմ կաթողիկոսի հաճությամբ ու Լազարյան ճեմարանի հրավերով ստանձնած լինի այդ պաշտոնը:

Այժմ դառնանք Սալլանթյանի՝ Խ. Աբովյանին գրած նամակներին:

Այդ նամակները, ինչպես արդեն ասել ենք, 13 հատ են, ընդարձակ և շատ հետաքրքրական: Դրանք գրված են լավորակ մեծ թերթերի վրա սեղմ տողերով, մանր, դյուրընթեռնելի տառերով, բազմաթիվ պատկերներով և բռնում են միջին մեծությամբ ձեռագիր տառերի արտագրությամբ մեծ թերթերի 46 էջ:

Սալլանթյանը, որը հիմնովին տիրապետում էր գրաբար լեզվին և տարիներ շարունակ եղել էր նրա ուսուցանողը ճեմարանում ու վերջապես գրել էր նրա քերականությունը, շատ հմուտ, ազատ, անբռնազգես կերպով իր մտքերը գրաբար արտահայտելով՝ միաժամանակ նախանձախնդիր ու պահանջկոտ էր, որ բառերն իրենց իսկական իմաստով ու պատշաճ տեղում կիրառված լինեն և քերականական շեղումներ չլինեն: Հենց այդ նամակներում էլ նա ուղղել է Աբովյանի, Առաքել Արարատյանի ու մյուսների իրեն գրած նամակների ու «ներսիսեան դպրոցի երեսնայրիքի» մեջ սպրդած սխալները, դրանք վերագրելով գրողների «անկատար ուսման ու երիտասարդական հասակի անփորձությունը և այն դպրոցի թերություն, որի մեջ նրանք ուսած են եղել»: Հասկանալի է, որ նույնպիսի հետևողական պահանջկոտություն պետք է ցուցաբերեր նաև իր նամակների ու գերվածքների նկատմամբ: Եվ իրոք, մեր ձեռքին գտնվող Աբովյանին ուղղված այդ 13 նամակները գրված ու շարահյուսված են պարզ, ըմբռնելի ոճով և գոյություն ունեցող գրաբար լեզվի քերականության անհեղի կանոններով ու կարգացված են և պիտի կարդացվեն մեր հին գրականության ծանոթների կողմից անտաղտով շահեկանությամբ:

Երբ են գրվել այդ նամակները, առաջին

նամակը գրված է 1830 թվի սեպտեմբերի 25-ին և ունի «Միքայել վարդապետ հաջ. Մոսկ.» ստորագրությունը. մյուսները գրված են նույն թվի նոյեմբերի 13-ին, նոյեմբերի 16-ին, դեկտեմբերի 10-ին, 1831 թվի հունվարի 8-ին, հունվարի 28-ին, մարտի 12-ին, մայիսին (ամսաթիվը պակասում է), հունիսի 30-ին, նոյեմբերի 17-ին, 1832 թվի փետրվարի 8-ին, օգոստոսի 21-ին և վերջին՝ 13-րդ նամակը — 1834 թվի նոյեմբերի 12-ին «Միքայել արքեպիսկոպոս և նոսրակ Ս. էջմիածնի» ստորագրությամբ:

Ի՞նչ բովանդակություն ունեն այդ նամակները. դրանք, եթե կարելի է այսպես ասել, բազմաբովանդակ են, բայց նրանց ամենաէական, հիմնավոր ու գլխավոր բովանդակությունը կազմում է թե իր՝ հեղինակի և թե հայ եկեղեցու համար ընդհանրապես շատ կարևոր և փաստացի հերքման կարոտ մի խնդիր. այդ խնդիրը սկիզբ առնելով հնագույն ժամանակներից՝ 451 թվից, մնացել ու մնում է առանց վերջնական լուծման, որի հետևանքով էլ հնուց մինչև օրս չի դադարել ու չի դադարում այլ դավանանքների պատկանող եկեղեցականների կողմից մեր եկեղեցու հասցեին ուղղված բամբասանքն ու շարախոսությունը, թե իբրև հայ եկեղեցին միաբնակական է և հայերը միաբնակներ — «մոնոֆիզիտներ»: Ահա այդ շարախոսությունների առաջն առնելու համար էր, որ Սալլանթյանը գրեց լատիներեն լեզվով մի գրվածք «Ճառ շատագովութեան ուղղափառութեան եկեղեցույս հայոց» խորագրով. նա ցանկացել է իր ծախքով Դորպատում տպագրել տալ այդ գիրքը, որի համար էլ գրել է հիշյալ նամակները Աբովյանին, որն այդ ժամանակ ուսանող էր Դորպատում. նամակների միջոցով նա ծանոթանում է Աբովյանի ու վերջինիս միջոցով էլ Պարրոտի հետ:

«Ճառը» նա գրել է լատիներեն, որպեսզի ամբողջ Եվրոպայի գիտական աշխարհը կարդալ ու հասկանալ կարողանա, իսկ տպագրության տեղ ընտրել է Դորպատը, որովհետև այդպիսի գիտական գործի տրպագրության համար Մոսկվան չի ունեցել այն հարմարությունները, ինչ որ Դորպատը՝ ցենզուրական, լատինագետների և մանավանդ Աբովյանի աշխտեղ գտնվելու տեսակետից. իսկ Աբովյանի աշխատասիրության, ուսումնասիր լինելու, հայերենագիտության և նման գործերի ընդառաջելու նրա պատրաստակամության մասին Սալլանթյանը շատ գովասանական կարծիքներ էր լսել:

Հարկավոր էր մի հմուտ լատինագետ, որ գրվածքի լատին լեզվի մեջ սպրդած սխալներն ու վրիպակներն ուղղեր, շարվածքը սրբագրեր և, որ գլխավորն է, ցենզուրական գործը ժամանակին հոգար:

Այս բոլորը հոգալու և իր պատվերները կատարելու համար նա իրեն գործակից է կարգում Արուսյանին, իսկ վերջինիս խորհրդատու ընտրում Պարոտին: Գիրքը գրված էր հիմք ընդունելով հայ եկեղեցու հայերի, գլխավորապես «փիլիսոփա» կոչված Հովհան Օձնեցու ուսմունքը և այլ աղբյուրներ: Տպագրության համար անհրաժեշտ դրամը ճիշտ ժամանակին և լրիվ նա ուղարկել էր Արուսյանին ու նրանից էլ հաշիվ և տեղեկություն պահանջել բոլորի մասին, իսկ հաճախ էլ շնորհակալություն ու գոհունակություն էր հայտնել Արուսյանին:

Շատ մեծ աշխատանք ու ջանք է թափվել Արուսյանի, Պարոտի և մանավանդ իր՝ հեղինակի կողմից այդ գործը գլուխ բերելու համար. սակայն մեզ անհայտ է մնում, թե վերջինվերջ գրքի տպագրության գործը գլուխ եկե՞լ է, թե՞ ոչ: Մեր ձեռքի տակ եղած նամակներից, գտնե, այդ չի երևում: Սալլանթյանը հիշյալ աշխատությունը Դորպատ ուղարկելուց առաջ նախ ուղարկել էր Լայբցիգ, բայց ձեռագիրը կորսվել էր. այս անգամ էլ Արուսյանը խորհուրդ էր տվել նրան դարձյալ Լայբցիգ ուղարկելու: Սալլանթյանն ընդունել էր այդ խորհուրդը, բայց կատարել է, թե ոչ, չենք կարող ասել:

Ի՞նչն է արգելք հանդիսացել գրքի տպագրությանը. գրաքննիչը պահանջել էր էջմիածնի պաշտոնական թույլտվությունը և հատկապես Դորպատին մոտակա հայկական թեմի առաջնորդի պաշտոնական վկայությունը: Այդպիսին հանդիսանում էր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը, որի առաջնորդն էր այդ ժամանակ Ներսես Աշտարակեցին. վերջինիս քանիցս դիմում է արվում այդ մասին, բայց բացասական պատասխան է ստացվում: Աշտարակեցին, իհարկե, շատ ուրախ էր, որ էջմիածնի միաբաններից մեկի ձեռքով կատարվել է մի այդպիսի կարևոր գործ, որը պետք է հրատարակվեր, բայց քաշվում է պահանջվածը տալ, որովհետև ինքը լատիններեն չէր իմանում և ի վիճակի չէր անձամբ կարգալու ու հավաստիանալու «Ջատագովութեան ձառ» հարազատությանը. ուստի նա խընդրում է նախ տպագրել գրվածքի հայերենը և ապա արդեն լատիններենը: Սակայն Սալ-

լանթյանը պնդում է, որ առաջին հերթին տպագրվի լատիններենը, որ ամենակարևորն էր և հետո ոչ միայն հայերենը, այլ և ռուսերենը, ինչպես որ ինքն էլ վաղուց մտադրել էր անել:

Ե՛րբ է գրել Սալլանթյանն այդ «ձառը». հասկանալի է, որ նա չէր կարող գրած լինել մի այդպիսի բան այն ժամանակ, երբ դեռ կաթոլիկ էր, որովհետև «ձառը» լեփեցուն է եղել ելույթներով ընդդեմ պապականության:

Մեզ թվում է, որ դա կարող է գրված լինել միայն և միայն Սալլանթյանի կաթոլիկությունից հայ եկեղեցու գիրկը վերադարձած ժամանակները և այն օրերին մոտավորապես, երբ նա գտնվել է էջմիածնում կամ առնվազն Մոսկվայում՝ Լազարյան ձեմարանի ուսուցչության առաջին տարիներին: Այս ենթադրության հավանականությունը փաստ կարող է ծառայել Սալլանթյանի կողմից Արուսյանին գրված առաջին նամակը 1830 թվի սեպտեմբերի 25-ին, որի մեջ Սալլանթյանը առաջարկում է գրված-պատրաստված իր այդ գործը Դորպատում տպագրել:

Սալլանթյանի Մոսկվայում վարած պաշտոնները, որոնցից հիմնականը եղել է ուսուցչությունը Լազարյան ձեմարանում, շատ հանգիստ, նյութականի տեսանկյունից էլ արդյունավետ ու պատվավոր պաշտոններ են եղել: Որ Սալլանթյանը բացի հայոց լեզվի և կրոնի դասատու լինելուց ուրիշ պաշտոններ էլ վարել է, այդ երևում է մեր ձեռքին գտնվող այն նամակներից, որ գրել է նա թե Արուսյանին, թե Նոր Նախիջևանի հայտնի քաղաքագլուխ ու խալիբյան դրպրոցի հիմնադիր Հարություն Պողոսի Խալիբյանին և թե Նոր Նախիջևանի Աստվածատուր քահանային: Այդ նամակներից պարզվում է, որ նա եղել է Մոսկվայի «հաջորդ», հայ եկեղեցական գրվածքների «գրաքննիչ» և էջմիածնի «նուիրակ» Բեսարաբիայի թեմում:

Մոսկվայի հաջորդության, գրաքննության և նվիրակության գործերի սակավության ու թեթևության հետևանքով նրա ամբողջ աշխատանքը համարյա թե կենտրոնացած է եղել ձեմարանի ուսուցչության և գրական պարապմունքի վրա: Նա դաստիարակված ու ուսած լինելով կաթոլիկյան հին վանական կարգերում, հեռու է պահել իրեն այդ կարգերի հոգի կողմներից և ժառանգել է կարգապահություն, աշխատասիրություն ու սեր ուսանելու և ուսուցանելու,

որոնք հատուկ են եղել նրան հենց մանկությունից: Սալլանթյանը, ինչպես երևում է նրա կազմած քերականությունից և «Ճարտասանութեան տետրակից», հին մեթոդով է դասավանդել, սակայն կպած է եղել գործին, սիրել է իր աշակերտներին, ջանք ու աշխատանք է թափել իր գիտցածը նրանց հաղորդելու: Բայց այդ նրան չի հաջողվել, կամ ավելի ճիշտը հաջողվել է միայն մասամբ, մի բան, որ չի քաշվել խոստովանելու նաև ինքը, իր Աբովյանին գրած նամակներում: Այս մասին նա իր 1831 թվի մայիսին գրած նամակում գրում է Աբովյանին. «Միտ դիր զտիւ և զգիշեր, զի լիցիս կատարեալ գրագէտ, կատարեալ ասեմ, զորոց զօրինակս առաջի աշացդ ի պրոֆեսորդ տեղուդ և ոչ թերակատար համբակ (պեղանտ, շառլատան) իբրև զիս և զիմ աշակերտս ի ճեմարանիս, ընդ որս արտասուեմ այդ, այլ զգործմ կատարելագործել վասն բազում արգելանաց տեղուդ և անձանց և իւր պարագայից, և այլն»:

Ասացինք, որ նրա վարած պաշտոնները Մոսկվայում հանգիստ են եղել, ապահով ու արդյունավոր, բայց նա, ինչպես երևում է, չի սիրել այդ պաշտոններն ազգին օգուտ չբերելու տեսակետից. ուսուցչությունը, որ նրա սրտովն է եղել, չի հաջողվել նրան բազմաթիվ արգելքների պատճառով, Կրաբըննությունը ապարդյուն է եղել՝ տպագրելիք հայ եկեղեցական գրվածքների սակավաթիվ լինելու պատճառով, իսկ նվիրակությունը, ինչպես պարզվում է, առկա էր մնացել նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու ղեկավարության և Սալլանթյանի այդ պաշտոնին «սիրահար» չլինելու պատճառներով: Նրա իսկական ցանկությունն է եղել հայ վանքերից մեկում նստել, հավաքել «ձագուկներ», ուսուցանել և պատրաստել հոգևորականներ, ուսուցիչներ ու գրականագետներ, այսինքն ստեղծել մի երկրորդ Մխիթարյան միաբանություն, միայն հայադավան: Այդ նպատակով նա 1833 թվին հատկապես գնում է էջմիածին, բայց ծրագրած գործը հաջողություն չի ունենում. դրա փոխարեն նա ձեռնադրվում է եպիսկոպոս ով Բեսարաբիայի թեմի էջմիածնի նվիրակ կարգվում: Այս մասին էլ Սալլանթյանը իր վերջին նամակում (1834 թ. նոյեմբ.) գրում է Աբովյանին. «կամ լուեալ ես ցարդ գգալ և զդառնալ իմ աստ, կամ ազնիւ գրաբերս պատմեսցէ քեզ, որոյ այս է թովանդակութիւն: Գնացի յուսով գտանե-

լոյ և զվանս ինչ առ ի հաւաքել և կրթել զեկեղեցական մանկունս վասն տպագայ պայծառութեան ազգիս: Խնդիր մատուցի երկոցանց հայրապետաց. ժողովեցան, խորհեցան, վճռեցին և հայտնեցին թէ կամին ձեռնադրել զիս եպիսկոպոս, տալ ինձ զվանս Ղալաղու (Հառինջ), որ ի Շիրակ, մօտ ի Գիւմրին: (Գում-Այրի) հանդերձ ժողովրդովք, զի եկամտիւ տեղոյն հաւաքեցից և զարգացուցից զաշակերտս, և այլն: Հաճեցալ և ուրախ եղէ և օրհնեցի զԱստուած, զի հուակ ուրեմն յաջողեաց ինձ հասանել բազմամեայ ցանկութեանս, և այլն: Բայց զկնի ձեռնադրութեանս, վասն ինձ անծանօթ պատճառի, փոխեցին զբանս, յանձնեցին ինձ զնուիրակութիւն վիճակիս այսորիկ, որում եկեալ այսր, Ներսես սրբազան յայտնեաց զղեկամտութիւն իբր ընդ առաջարկութիւն Հայրապետին (Յովհաննէս Կարբեցու), վասն որոյ և նուիրակութիւն կայ միայն կախ, որում չէի և չեմ սիրահար»:

Սալլանթյանը, ինչպես մենք արդեն տեսանք, երկու նվիրական ցանկություն է ունեցել. առաջինը՝ հիմնել Մխիթարյան միաբանության նման, բայց հայադավան, մի միաբանություն իր գլխավորությամբ, և երկրորդ՝ տպագրել իր լատիներեն «Զատագովութիւնը»: Նրա այդ երկու ցանկությունն էլ ինչպես տեսանք, չի կատարվում, չնայած դրա համար նա չէր խնայել ոչ ջանք և ոչ էլ դրամ: Մեզ հայտնի է միայն, որ 1837—1838 թվերին նա իր ծերության պատճառով հրաժարվել է պաշտոնից և նրա տեղը, Ներսես Աշտարակեցու ցուցմունքով, 1838 թվին Լազարյան ճեմարանում նշանակվել է Մսեր Զմյուռնացին: Հայտնի է նույնպես, որ երբ Ներսես Աշտարակեցին 1843 թվին կաթողիկոս ընտրվելուց հետո կայսեր հրավերով Պետերբուրգ է գնում, ի միջի այլոց արքունի գանձարանից հազար ռուբլի ճանապարհածախս է դուրս գրել տալիս Սալլանթյանի համար և ըստ վերջինիս ցանկության ուղարկում նրան իր հայրենիքը՝ Տաճկաստան: (Տես Նիշիշի Գեղամեանի «Պատմական քաղաքներ» պրակ 8, Ներսէս Ե. Կաթողիկոս Աշտարակեցի, էջ 126):

Սալլանթյանը պաշտոնից հրաժարվելուց հետո մինչև հայրենիք վերադառնալը թե որտեղ է ապրել, մենք չենք կարող ստույգ ասել, բայց կարծում ենք, որ մնացած պիտի լիներ Մոսկվայում: «Փարոս»-ի խմբագիր Զարմայր Մսերյանցի ասելով Սալլանթյանի թղթերը մնացել են Մոսկվայի ա-

վագ քահանա Տեր-Հարություն Կեդրիյանցի մոտ: (Տես Փարոս» 1874, տետրակ շորորդ):

Մեզ հայտնի նրա տպագրված գրվածքներն են «Քերականութիւն», «Ճարտասանութիւն», «Թամիրաս կուրածիւն» և «Կրօնագիտութիւն», իսկ ձեռագիր շտապագրվածները-- «Ջատագովութիւն», «Նտրոց հաւատոյ»:

«Պատմական քաղաածքներ»-ի հեղինակ Եղիշե ավագ քահանա Գեղամյանը կանկած է հայտնում այն մասին, որ Սալլանթյանը իր ցանկությամբ չի վերադարձել հայրենիք: Այդ կասկածը մենք ճիշտ ենք համարում: Այո, այդ մի ուրիշ պատճառ պիտի ունենար և ունեցել է: Մեզ թվում է, որ այդ հանդամանքը կապված է եղել մի դժգոհության հետ, որ տեղի է ունեցել նրա ունեթանս Աշտարակեցու մեջ: Ինչպես հայտնի է, ներսեսը Պետերբուրգում ցանկացել էր հայ դավանության ուղղափառությունը էլ ավելի պարզած լինելու համար վերստին տպագրված տեսնել Հովսեփ Արղությանի ռուսերեն լեզվով գրված «Հայ եկեղեցու դաւա-

նութեան թուղթը» նոր հավելվածներով, հավանորեն, ըստ Սալլանթյանի կատարած նոր ուսումնասիրության, որ կոչվում էր «Ջատագովութիւն ուղղափառութեան հայ եկեղեցւոյ» և այդ մասին առաջարկություն էր արել Նախարարության՝ տպագրությունը արքունի ծախքով կատարել: Նախարարությունը սիրով ընդառաջել էր, բայց որովհետև «Ջատագովութիւնը» գրված էր լատիներեն և անհասկանալի էր ներսեսի համար, մի հանգամանք, որ արգելք էր հանդիսացել նրա տպագրությանը մինչ այդ, առաջարկվում է Սալլանթյանին թարգմանել այն հայերեն: Սալլանթյանը մերժում և պահանջում է, որ, առաջ հավանություն տրվի լատիներենը տպագրելու, հետո արդեն թարգմանվի հայերեն, մի բան, որ ներսեսը չէր կարող անել, քանի որ լատիներեն չգիտեր: Պետք է կարծել, որ այդ պատճառով չեն տպագրվել հիշյալ երկու գրվածքները և ինքը Սալլանթյանն էլ, հակառակ իր ցանկության, արքունի ծախքով ուղարկվել է իր հաւրենիքը՝ Պոլիս:



Հառիճավանի բնդհանուր տեսքը հյուսիսային կողմից (Արքիկի շրջան). կանուցել են Զաֆարե և Իվանե Եղբայրները (մ. Գ դար)

ԵՐԴՈՒՄԸ ՈՒ ԱՆՈՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԵԶ



Ն. Մագոսյան



րդումը ծանոթ սովորություն մըն է հնագույն դարերեն ի վեր: Անոր սկզբնավորությունը հեթանոսական առաջին շրջաններում մեջ կարելի է որոնել: Քրիստոնեությունը շանաց սահմանափակել զայն: Օտարներեն՝ Հովհաննես Ոսկեբերան, իսկ հայերեն Հովհան Մանդակունին, շատ հակառակ կճառեն երդումի դեմ: Մանդակունին գրեց ամբողջ ճառ մը «Վասն չար սովորութեան երդման» վերնագրով:

Երդումը կրնանք բաժանել երկու մասերու.

Սովորական երդումը, որ ռամիկ դասակարգին կողմն կկիրարկվեր առօրյա խոսակցության մեջ ու պաշտոնական երդումը, որ տեղի կունենար կարևոր դիպվածներու մեջ, ամենայն լրջությամբ ու միշտ հրապարակավ: Այս երկու ձևերը իրարմ կզանազանվին ու հարկ է ինձ անջատարար գրել անոնց մասին:

Սովորական երդումը կրնանք անվանել «Անկանոն երդում» իսկ պաշտոնական երդումը՝ «Օրինական երդում»:

Անկանոն երդումը հիննն ի վեր սովորություն դարձած էր հայոց մոտ, որոնք շատ ուռույտ սուտ կամ հոռավ երդումներ կրնեին

իրարու միջև: Մանդակունին կավանդե, որ խոսքեն առաջ երդումը կվազեր ամենուն բերնեն, իսկ պոփոզիք և աղտեղաբանք», կավելացնե Մանդակունին, իրենց ըսելիքը դեռ չխորհած՝ երդումը պատրաստ ունենին իրենց լեզվին ծայրը: (Տես Հ. Մանդակունին «Ճառք»-ը, 114):

Սուտ երդումը այնքան տարածված էր հայոց մեջ, որ նույնիսկ տղաք իրենց խաղերուն հաջողությունը կամ անհաջողությունը երդումներով կհաստատեին: Կամ վաճառականները իրենց արդարությունը հաստատելու համար հաճախ երդումի կդիմեին, կըսե Մանդակունին, (տես իր «Ճառք»-ը 115):

Այս կարգի երդումներն ընդհանրապես կկատարվեին՝ արեգակին, լուսինին և աստղերու անունով, որոնք հայոց հեթանոսական շրջանին գլխավոր աստվածներն էին, ինչպես նաև, երդումները կըլլային գլուխի և աչքի վրա: Երբեմն երդումներ կըլլային նաև Աստուծոյ ու Քրիստոսի վրա, կամ Քրիստոսի խաչին, կամ անոր շարշարանաց վրա, կամ մարգարեներու, առաքյալներու ու մարտիրոսներու վրա, որոնց դեմ տրտնջալով

դում», ու «կատարյալ ուրացութիւն» անունները: (Տես իր «Ճառք»-ը 111 ու 115):

Այս հոսի սովորութիւնը շարունակվեցաւ մինչև ԺԲ դարը, երբ ժամանակակից Մխիթար Գոշը՝ երկարորեն կգրե իր «Դատաստանագիրք»-ին մեջ, դանգաւորելով, որ երգումը կմտնէր սովորական խոսակցութեան մեջ, իր իսկ բառերով՝ «Ի փողոցս և ի հրապարակս և ի բանակոռութիւնս»: Մխիթար Գոշը կը բացատրէ, որ դատախազները ատյանին առջև չելած փողոցներում կամ ճամբաներում վրա ստակալի երգումներ կը ներին, բայց երբ դատավորի առջև ելնին, կատարյալ սուրբեր կդառնային ու կդժվարանային ընել օրինական երգում, զոր իբր թե կնկատեին ավետարանի հակառակ արարք մը: (Տես «Դատաստանագիրք» էջ 48):

Մխիթար Գոշ իբր երգումի ձևեր, կառնէ հետևյալ սովորութիւնները, որոնք ռամիկներու կողմէ կգործադրվեին, երբ մանավանդ այլազգիները վիրենք պարտադրեին.—

- ա) եկեղեցի մտնելով ճրագը մարել:
- բ) բերանով փշել չուրին ու ձիթին վրա:
- գ) գետինը խաշ նկարել ու վրան կոխել:
- դ) շան պոչին բռնել:
- ե) ձեռքերու մեջ ոսկոր բռնել:
- զ) գետնի վրա երկու ծիր գծել ու մեկին մշուսը անցնել:

Այս բոլոր ձևերուն իմաստը կրնանք հետևելով կերպով բացատրել:

- ա) մարել քրիստոնեական հավատքը:
- բ) մկրտութեան շուրին ու մեռնին շնորհքը մերժել:
- գ) կոխել փրկաւորութեան խորհուրդը:
- դ) անհավատ շան մը հավասարել:
- ե) մեռնել ու ոսկոր դառնալ:
- զ) ծիր փոխելով՝ կրոնափոխ ու ուրացող լինել:

Այս բոլոր ձևերուն դեմ գգուշութիւն կբարոզէր Մխիթար Գոշ (Տես «Դատաստանագիրք» էջ 51):

Օրինական երգումներ

Օրինական երգումը հայոց մեջ ծանոթ է ոսկեդարյան գրողներու շրջանին, որոնք «ուխտ» անունը կուտային անոր:

Մանդակունին ու Շնորհալին իրենց գրութիւններուն մեջ մատչեալ ներողամիտ կերեւիլն օրինական երգումին: Շնորհալին իր «Ընդհանրական»-ին մեջ կըսէ.— «Մի՛ եղիցի ձեզ յօժարութեամբ դիմել երգմունս... առանց մեծագոյն հարկի», (Տես «Թուղթ ընդհանրական», էջ 192):

Մխիթար Գոշ կընդունի օրինական երգումը, պայմանաւ, որ դատավորը հրամայէ զայն (Տես «Դատաստանագիրք», էջ 46):

Ջաքարիա եպիսկոպոս Մործորեցին միշտ կարդարացնէ դատաստանական երգումը, զոր համաձայն ալ կգտնէ Սբ. գրոց հոգիին: Իր «Թուղթ»-ին մեջ որոշապես կըսէ «Զի ուրիշ է երգումն ատել անձամբ վասն միոյ փողոյ և սուտ, և ուրիշ է երգումն տալ առաջնորդաց և դատաւորաց՝ վասն ճշմարտութեան հաւատալոյ»:

Գրիգոր Տաթևացին ևս երգումը կթույլատրէր, բայց միայն անհատներուն առջև: Երգումի ձևերը հայոց մեջ այլևայլ դարերու ընթացքին տարբեր տարրեր կներկայանան ու հարկ է մի քիչ ծանրանալ այս հարցին վրա: Հին հայոց մեջ օրինական երգումները կրնային տեղի ունենալ, երբ ծանր խնդիրներ կներկայանային, այլապես միշտ հակասութիւն կար երգումին դեմ: Մանր ու կարեւոր խնդիրներ կամ պարագաներ կհամարվին հետեւյալները.

Ա. Կենցաղային խնդիրները. այսինքն, երբ առևտրական ու կալվածական խնդիրներ կային և կամ հարստահարումի ու զեղծումի խնդիրներ պիտի քննվէին: Երգումը հոս ընդունելի էր, բայց ըստ Մխիթար Գոշին ու Մործորեցիին այն ատեն միայն, երբ վկա չէր գտնվեր:

Բ. Քրեական հանցանքները. այսինքն գողութիւն, շնութիւն, սպանութիւն ու ավազակութիւն ու նման հանցանքները փաստելու համար եղած հրդումը: Վերոհիշյալ հանցանքները ծանր պատիժներով կփոխտրեւնէին:

Գ. Կրոնի հանդեպ հավատամուտը. այսինքն, անձի մը հավատքը ապացուցանելու համար և կամ եկեղեցւոյ պաշտպանութեան համար: Այսպիսի պարագա մը ստեղծված էր Միհրնեսեհի առ հայոց գրած նամակին առիթով, երբ կրոնափոխական առաջարկը ջատագովված կամ պարտադրված էր Ամարայրի դուցազնամարտի նախօրյակներուն:

Ըստ Եղիշեի հայերը ընդարձակ թուղթով մը պատվական պատասխան մը տվին պառսից ու ամբողջութեամբ Գաթողիկոս, եպիսկոպոսներ, նախարարներ և այլն «անսուտ հոռմամբ եղին վկայութեան ենեօք և մահու ի նմին կալ հաստատուն»: Ու երբ հայ նահապարհներ ստիպմեցան ապրսից դուռը երթալ, անոնք կրկին երդումներ րրին հաստատ մնալու իրենց հավատքին վրա: Նույն ստիժով էր, որ երգում մը ևս տեղի ունեցած էր. երբ Վարդան Մամիկոնյան և ուխտաւաճ հաւատարմները ուղարկուեցան իրենց օտարած էին ապրսից դեմ: Անոնք պաշտոնական երգումով զիրար համոզած էին.

թե հանապազորեն պիտի կռվեն պատվոյ դաշտը:

Դ. Նիգալակցութեան. այսինքն, թե՛ օտարներու և թե՛ հայոց նիգալակցութեան տարներու և թե՛ հայոց նիգալակցութեան համար եղած պաշտոնական երդումը: Հայոց պատմութեան մեջ այս տեսակ երկու պարագաներ ունինք:

1) Մեր Արշակ Բ. թագավորը ստիպված էր նիգալակցութեան երդում տալ պարսից Շապուհին, ու 2) Վարդան ու իր ընկերները 451-ին հոնաց հետ զինակցում էին երկուստեք տրված երդումներով:

Ե. Հաջորդութեան. այսինքն պատերազմի մը վերջ երկու ազգերը կամ երկու պատերազմող կողմերը պաշտոնական երդումով զիրար կապահովեն ստեղծվելիք խաղաղութեան համար: Ասոր բազում օրինակներ կան հայոց պատմութեան մեջ, ու կրնամ երկու դեպք երևան հանել:

1. Բազրատունաց հարստութեան շրջանին, Աշոտ թագավորին օրով, Աբաս սպարապետը ձերբակալած էր վրաց Ասրեբերդի իշխանը, դոր խոստացավ արձակել, եթե անոր փոխարեն վրացին «եղբար» տար: Այս «երդումը» տրվեցավ, բայց դժբախտաբար հայոց թագավորը երդմանդրուժ եղավ:

2. Աշոտ Արծրունին իր հորաքեռորդի Հասանը գերի առնելով իբր փրկանք առավ անոր Սևանա մեջ դառնված ամրոցը, ու պաշտոնական երդումով մը ապահովեց զինքը բնավ չվնասի:

Զ. Հպատակութեան. այսինքն, ճորտերը իշխաններուն կուտային հպատակութեան երդումը, ու զիրենք կապահովեն միշտ հյուսնալի:

Ստորե կուտամ օրինակներ հայոց պատմութենեն:

1. Հայոց Պապ թագավորին ժամանակ Մուշեղ Մամիկոնյան սպարապետը թագավորին պահանջքին պրա ստիպվեցավ հավատարմութեան երդում տալ թե՛ կաթողիկոսին ու թե՛ թագավորին՝ Զյուլալի ճակատամարտին մեջ:

2. Գագիկ Բ. թագավորին օրերուն Վեստ Սարգիս ու հայ իշխանները թագավորը երդումով համոզեցին Կոստանդնուպոլիս մեկնելու:

Երբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսն հայ իշխաններու դեմ բարկանալով Անիեն մեկնած ու Վասպուրական առանձնացած էր, Հովհաննես Սմբատ թագավորը ու բոլոր հայ իշխանները երդմագիր մը զրկեցին կաթողիկոսին, ձինկ ունկնդիր ամենալն հրամանաց նորա, կրսե Մատթեոս Ուռհայեցին:

Է. Արեայական օծումը

Այս արարողութիւնը ազգային ու քաղաքական ամենաշքեղ աղիթն էր պաշտոնական երդումին համար: Այսպիսի երդում մը ազգը պարտավոր էր տալ թագավորին:

Այսպիսի պարագա մը կալանդեմ մեզ Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութեան» մեջ, երբ կնկարագրեմ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ու հայ իշխաններուն տված երդումը Գագիկ Բ. թագավորին օծման օրը:

Պետք է գիտնանք, սակայն, թե Ռուբինյան թագավորութեան շրջանին թագավորը պարտավոր էր երդում տալ ազգին ու ոչ ազգը՝ թագավորին:

Վերոհիշյալ յոթը զլիսավոր պարագաները ծանրակշիռ խնդիրներ կհամարվեն ու զանոնք երդումներով գործադրելը պարտավորի էին հին հայոց մոտ:

Երդումներ կրնային տեղի ունենալ նաև տարբեր կրոնքի պատկանողներուն միջև, երբ յուրաքանչյուր կողմ իրավունք ունէր իր սեփական օրենքներուն հետեւելու: Իսկ երբ երկու կողմերը քրիստոնյա էին, հետեւյալ պայմանները պետք էին նկատի ունենալ ըստ Մխիթար Գոշի.—

1. Երդում տալու համար հարկ էր 25 տուրեկանէն վար չըլլալ:

2. Երբերը ու հիվանդները պետք էին երդում տալ:

3. Ապաշխարողները չէին կրնար երդում տալ:

4. Հավատարիմ կիներեն ընդհանրապէս երդում չէր պահանջվեր:

5. Անպարկեշտ ու պառավ և կամ ծնելու մոտ եղող կիները չէին կրնար երդում տալ:

6. Մաքսավորները, արեքցողները ու մեղավորները չէին կրնար երդում տալ, որքան ժամանակ որ ալդպէս կմնային:

7. Երդում կրնային տալ բոլոր մերձավոր ազգականները ու բարեկամները:

Հովհաննես Մանգակունիի շրջանին երդում ընելու իրավունքը չարախոսին կատարաներ, իսկ Մխիթար Գոշի շրջանին՝ այս կանոնը փոխված էր:

Երդումը նախապէս կկատարեին ընդհանրապէս եկեղեցիին մեջ, բայց հետո դատաւտանական երդումը կրնար տարբեր մարտերու մեջ ալ տրվիլ, ինչպէս ատյանին մեջ, ու երբեմն ուր որ հարկը կամ պետքը կը պահանջէր:

Երդումը կրնար արժունիքին մեջ ալ տրվիլ, ինչպէս որ Հայոց Արշակ թագավորը տված էր Պարսից Շապուհ թագավորին:

Երդումը կրնար պատերազմի դաշտին մեջ ալ տրվիլ, ինչպէս որ Մուշեղ Մամիկոնյան

սպարապետը տված էր կաթողիկոսին ու Պապ թագավորին նպատ լեռան վրա:

Երգումը կրնար նաև ճամբաներու մեջ ալ տրվիլ, ինչպես որ Վարդանանք իրարու տված էին, երբ Պարսկաստանին կվերադառնալին ու ամեն ոք իր տեղը պիտի վերադառնար:

Երգումը կրնար տան մեջ կամ ապարանքի մեջ ալ տրվիլ, ինչպես որ դավաճան Վասակ Մարզպանը տված էր հայ ուխտապահ նախարարներուն իր սեփական ապարանքին մեջ ըստ պատմիչին (Նղիշեին):

Մխիթար Գոշ կարգել է թեթև պարագաներու մեջ տրված երգումը. զոր օրինակ՝ տալիս տարեկան տղու մը համար երգում տալը արգելված էր: Ու եթե այսպիսի պարագա մը ստեղծվեր դատարանին մեջ, առանց պահանջելու փոքր տղայոց երգումը, կրնալին դատը շարունակել: («Դատաստանադիրք» էջ 53):

Երգումները ընդհանրապես տեղի կունենան հետևյալ սրբություններու անունով. — ա. Կաթողիկոսին կամ թագավորին աջին վրա.

- բ. Ավետարանին վրա.
- գ. Մասնավոր ուխտի կամ երգման ավետարանի վրա.
- դ. Ավետարանին զորություն վրա.
- ե. Խաչին վրա.
- զ. Ավետարանին ու խաչին վրա.
- է. Աստուծո անվան վրա.
- ը. Եկեղեցվո անվան վրա.
- թ. Անիին «Հազար ու մի» եկեղեցիներուն վրա.

ժ. Պատարագի բաժակին (սկիհ) վրա:

Կրնայի յուրաքանչյուրին վրա օրինակներ բերել պատմութենին, եթե նպատակ ունենալի նյութը իր լման սահմաններովը պարզել, բայց առ այժմ ավելորդ կհամարեմ:

Երգումը ուներ իր արարողական որոշ ձևերը: Կրոնքի հավատարմության համար եղած երգումները ունեին իրենց հարմար աղոթքները, որոնք երգումն առաջ պետք էին ըսվիլ:

Երգումի պահուն, սրբություններուն մասնավանդ խաչին ու Ավետարանին առջև երկրպագություն տեղի կունենար, որմն վերջ դանոնք կհամբուրեին:

Հազար Փարպեցին կավանդե, թե երբ Վարդան Մամիկոնյան ու մյուս նախարարները պաշտոնական երգում պիտի տալին՝ նախ Ավետարանը համբուրեցին: Իսկ Փալլատոս Բյուզանդացին իր պատմության մեջ կավանդե, որ Մուշեղ Մամիկոնյան

Պապ թագավորին աջը համբուրեին առաջ երկրպագած էր անոր առջև:

Իսկ երգում ընելու համար եկեղեցի մը տնելու պահուն անոր օծյալ որմերը կհամբուրեին:

Նույնը տեղը ունեցած էր Արծրունյաց Տիկին Մարիամին կողմն, որ Սուրբ Կարապետ սրբավայրը մտնելով «Համբուրեց զորմ տաճարին» կըսե շուրջ Մանգակունին:

Սրբությունները համբուրեին վերջ, ձեռքերը կհանգչեցնեին անոնց վրա ու կարտասանեին երգման բանաձևը:

Ձեռքերու հպում տեղի չէր կրնար ունենալ, երբ Աստծո վրա և կամ Անիին «Հազար ու մի եկեղեցիներու» վրա երգում տեղի ունենար: Այս պարագաներուն, սակայն, սովոր էին ձեռքերն ղեպի երկինք վերցնել ու այնպես երգում ընել:

Հոս կարծի բացատրել երգումներու քանի մը բանաձևերը: Անոնցմե պիտի հիշեմ աշխարհիկ կրոնական ու աստեղական ձևերը:

Աշխարհիկ երգման ամենահին ձևն է Մուշեղ Մամիկոնյանին Պապ թագավորին առջև արտասանած հետևյալ բառերը.

«Կեցից և մեռաց ի վերայ քո՝ որպէս նախնիքն իմ ի վերայ նախնեացն քաջ, որպէս հայրն իմ ի վերայ Հօրն քո Արշակայ, այնպէս

և ես ի վերայ քո, բայց միայն

չարախոսացն ունկն մի՛ ղնիսցես»:

(Տես Փալլատոս Բյուզանդ Ե. Դ.):

Կրոնական երգման քանի մը բանաձևեր կան, որոնցմե միայն պիտի հիշեմ Վահանյանց գործածած բանաձևը ըստ Ղ. Փարպեցիին.

«Որ խոստովանեսցի զհաւատս զայս, զոր Փրկիչն ամենեցուն և տէր Յիսուս Քրիստոս վարդապետեալ գրեաց ի սմա, և որդի մարդոյ խոստովանեալ դարձցի զնա առաջի հօր իւրոյ, ժառանգեցուցանել նմա զերկնից

բարութիւնս: Եւ որ ոք կատարեալ ուրասցի ի հաւատոյս յայսմանէ, և նենգեալ ստիցէ Աւետարանիս երգման, և որդի մարդոյ ուրացեալ զնա ի խաւարն արտաքին որ չալ աշացն է և կրճել ատամանց»:

Ատենական երգման ձևերը երկու մասերու կբաժանվին. ա) «խոստովանության» ու բ) «ուրացության»:

ա) «խոստովանության» երգումին առիթով ընդհանրապես հետևյալ հասարակական բառերը կարտասանեին.

«Գիտէ Աստուած, և խաչս և Աւետարանս վկայ է սրտիս, զի այնպես է

որպէս ասեմ և ոչ ստեմ»:
կամ՝

«Փառք սոցա. և զօրութիւն զի
ձշմարիտ ասեմ զոր ասեմ, և ոչ ստեմ»
(Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք», էջ 54):

բ) «Ուրացութեան» առիթով երդում ընողը
իր վկայած դեպքին կամ խոսքին ստուգու-
թյան համար պայման կցուցներ հակառակ
պարագային քրիստոնյա չհամարվելու:

Ահավասիկ օրինակ մը.

«Քրիստոնեա ո՛չ եմ, եթէ չիցէ այդ այդ-
պէս» (Տես «Դատաստանագիրք» էջ 54):

Երդումները միշտ ալպպես բերանացի էին
տրվել: Շատ ծանրակշիռ դեպքերու առթիվ
բերնով արտասանվածը գրավոր ալ կտրվել,
որպեսզի, ան մնար անուրանալի վկայու-
թյուն մը: Այսպիսի գրավոր երդումները
կոչվին «գիր» կամ «չետկար երդման»:
«Գիր երդման» ըսվածը լարով մը կկապեն
Ավետարանին հետ ու այնպես կուտային,
եթե խնդիրը շատ լուրջ էր:

Այսպես ըրած էր Սյունյաց Վասակ իշխա-
նը, ըստ Նղիշեի, երբ իր այս դործով փա-
փագեցավ նախարարներուն առջև երդում
տալ, թե հար պիտի շարունակէր օգնելու
հայկական շահերուն: Նմանապես Աշոտ
Նրկաթ թագավորը ու իր աները գրավոր եր-
դում ըրին (ըստ Հովհաննես կաթողիկոսին):

Գրավոր երդում տված էր նույնպես
Սմբատ սպարապետը ի նպաստ Ատրնեբոս-
հին: Նույնը ըրած էր Աշոտ Արծրունին Հա-
սան հայ իշխանը արձակելու համար: Նույ-
նը պատահած էր Գեղարքունյաց Վասակ
իշխանին ու Աշոտ թագավորին միջև դրված
երդումին առիթով: Իսկ երբ Գագիկ Բ. Անի
մայրաքաղաքն պիտի բաժանվեր, հայ իշ-
խանները «երդման գիր» տված էին, կըսե
Մ. Ուռհայեցին:

Երդումները գրվելն վերջ պաշտոնապես
կկնքվեին, ինչպես ըրած էր Վասակ մարզ-
պանը ըստ Նղիշեին, ու ըրած էին Վարդա-
նանք ըստ Փարպեցիին, որ կըսե, Վե կնքված
էր «Նախարարաց մատանեօք»:

Այն գրված երդումները, որոնք տրված
էին Աբասին կողմն Ատրնեբոսհին ու Աշո-
տին կողմն Սահակին, «Կնքված երդման
յետկարներ» էին, կըսե Հովհաննես կաթո-
ղիկոս:

Անգիր երդումները ընդհանրապես կկնք-
վեին Ավետարանին վրա, այսինքն մատա-
նին լուսանցքներուն վրա դրոշմները կշա-
րեին իրարու մոտ: Այսպես կնքված Ավե-
տարանը վկա կմնար պաշտոնական, բայց
անգիր երդման:

Պաշտոնական երդումներու ընթացքին

միջնորդներ կըլլային կաթողիկոսը կամ Ն-
պիսկոպոսները ու երեցները, անշուշտ ոչ
ամենքը միասին, ալ խնդրույն կարևորու-
թյան համաձայն յուրաքանչյուր աստիճա-
նավոր կրնար միջամտել:

Ու այս ձևով Մուշեղ Պապ թագավորին
տված երդումին մեջ իբր միջնորդ ունեն
Ներսես Կաթողիկոսը: Վարդանանք Հազկեր-
տի արքունիքը մեկնելիս առաջ երդում ըրին
Հովսեփ կաթողիկոսին առջև: Աբաս սպա-
րապետին ու Ատրնեբոսհին իշխանին միջև
տեղի ունեցած երդումին միջնորդն էր Գե-
վորգ կաթողիկոսը, որ նույնպես միջնորդն
էր Աշոտ Արծրունիին ու Հասան իշխանին
միջև տրված պաշտոնական երդումին:

Նույնպես Անիին իշխանները Գագիկ ար-
քային երդմագիր տված էին Պետրոս Գեօտա-
դարձ կաթողիկոսին միջնորդութեամբ:

Նպիսկոպոսներու ու երեցներու կողմն
կիրարկված միջնորդութեան բազում օրի-
նակներ ալ կան:

Այսպիսի կերևոր պաշտոնները հին հա-
յերը եկեղեցականներուն կվստահեին հետև-
յալ պատճառներով:

ԺԲ դարեն առաջ Հայաստանի մեջ գո-
յություն չունեցող քաղաքական ատենական
կազմակերպութիւն մը, ոչ ալ հատուկ օրի-
նագիրք, ինչպես գոյութիւն ունեցող Բյուզան-
դիոնի մեջ: Ասոր փոխարեն գոյութիւն
ունեին միայն եկեղեցական կանոններ, ու-
րոնց մեջ բովանդակված էին նաև դատաս-
տանական շատ մը խնդիրներ, որոնց վրա
հենվելով Մխիթար Գոշ պատրաստած էր իր
արժեքավոր գործը: Հայոց մեջ օրինագիրքե-
րու պակասը արդյունք էր աշխարհական
ատյաններու ու դատավորներու չգոյու-
թյան: Հայաստանի մեջ այս պաշտոնը մինչև
միջին դար հանձնված էր եկեղեցական ու
կրօնական ատյաններուն, որով դատաստա-
նական իրավունքը կմնար հայ կղերին սե-
փական իրավունք մը: Մխիթար Գոշի օրով
այս իրավունքը դարձաւ կկիրարկվեր հայ
կղերականութեան երեք գլխավոր աստիճա-
նավորներուն կողմն (կաթողիկոս, եպիսկո-
պոս և երեց), որոնց հետ աշխարհականներ
ալ կբազմեին: Ատյանին մեջ եպիսկոպոսը
առաջին դատավորն էր, իսկ կաթողիկոսը
գլուխ էր ամենայն դատավորաց: Պետք է
գիտենալ, թե հայ կղերականները ընդհան-
րապես գիտութեամբ ալ բարձր էին հին
ատեն:

Այս է գլխավոր պատճառը, որ կաթողի-
կոսը երբեմն հայ թագավորին ալ բարձր
գերիշխանութիւն մը ունեցող մեր ազգին մեջ,

որմե հաճախ կականածին նախարարները ու նույնիսկ թագավորները:

Արեւմուտքին անժանոթ էր կրոնապետի այսպիսի բարձր ու համազգային հանգամանքը:

Հայոց թագավորները նույնիսկ արտոնութեամբ միայն կրնային ներկայանալ կաթողիկոսին պալատը, իսկ կաթողիկոսը առանց հրամանի ու փափագած ժամանակը խորհրտաբար կմտնէր արքունի պալատը ու առանց արտոնութեան կբազմէր արքային առջև: Թագավորը կաթողիկոսին առջև կըրնար բազմիլ այս վերջնույն հրամանով միայն:

Միայն թե պատժական գործերը, որ անպատեհ կհամարվէին եկեղեցականներուն համար, կաթողիկոսին հրամանով կհանձնէին յուրաքանչյուր գավառի աշխարհական իշխաններուն (Տես Հ. Վ. Հացոյանի «Երդումն հին հայոց մէջ» էջ 81):

Կաթողիկոսին բարձր հանգամանքը կրնամ պարզել մեկ երկու օրինակներով: Երբ հզոր Աշոտ Արծրունին դրժած էր Հովհաննէս կաթողիկոսին (պատմաբան) տված մեկ խոստումը Հասան իշխանը ազատ արձակելուն մեջ, կաթողիկոսը պաշտոնապես բանադրեց արքան ու քովէն հեռացավ անգամ մ'ալ երեսը շտեմանելու պայմանով:

Նույն կաթողիկոսին օրով, երբ Աշոտ Երկաթ Բագրատունի թագավորը Վասակ իշխանին համար տված իր մեկ երդումը դրժելով զինքը կալանավորած էր Կայան ամրոցին մեջ, իսկույն կատղած առյուծի մը նման թագավորին առջև տնկվեցավ Մեծն Հովհաննէս պատմաբան կաթողիկոսը ու ըստ իր իսկ բառերուն «սաստկագոյն բան լանդիմանութեան ի վերայ ածեալ թագաւորին պաշարեցի զնա կշտամբութեամբ մեծաւ վանն ատելոյ ուխտին երդման» (Պատմ. Մ. Թ.):

Ու Աշոտ Երկաթ թագավորը մոմի մը պէս կակղեցավ կաթողիկոսին առջև (Հ. Վ. Հացոյանի «Երդումն հին հայոց մէջ», էջ 95):

Սուտ երդումներու հանդեպ հին հայերը շատ խիստ էին: Հին Հռոմեական օրենքով մասամբ կպատժվէին սուտ երդում ընողները: Հաճախապատումին մեջ սուտ երդում ընողներուն մասին կկարդանք հետեւյալ տողերը.

«Ձորս բանտիւր ե երկաթի կապանօք և պէսպէս տանջանօք խոշտանգեն և մահ ի վերայ ածեն»: Ուրեմն հինգերորդ դարին իվեր հայոց մեջ սուտ երդումները ծանր հանցանքներ կնկատվէին:

Երդմնազանցութիւնն ալ թեպետ և պժգա-

լի կնկատվեր հայոց մեջ, բայց քաղաքական պատճառներով այս թերութիւնը որոշ ժամանակի մը համար բավական ծավալած էր հայոց մեջ, զոր կրնանք հետեւյալ կերպով բացատրել:

Երբ Հայաստան իր քաղաքական անկախութիւնը կորցնելով Արշակունյաց գահին անկումով ենթարկվեցավ օտար պետերուն ու մանավանդ ոչ քրիստոնյա բռնապետներուն, երկու տիրապետող կողմերէն որ մեկը որ նպաստավոր քաղաքականութիւն կվարէր հայոց նպակտմամբ, հայերը անոր հետ կկապվէին նիզակակցական կապերով, որոնց ընթացքին երդումները անպակաս կըլլային:

Այսպիսի երդումներուն հաճախական խզումները պատճառ կըլլային երդմնադրութիւններու բազմանալուն, ու այս ախտը ավելի արաբացի ոստիկանները տարածեցին հայոց մեջ: Այս ոստիկանները սուտ երդումով միայն կրնային նվաճել հայ իշխանները, որմէ վերջ հաճախ երդմնադրույթ կըլլային կալանավորելով կամ սպանելով մեր պատմական հայ նախարարները ու առանց սերունդը: Այսպիսի պարագաներու մեջ հայերն ալ իրենց կարգին երդմնադրութեան կերակային երբեմն: Բայց պետք է գիտենալ, թե այս պիտանի միջոց մըն էր իրենց ազատութեան համար:

Սակայն ասոր դեմ կըորոքէին ներսես Շնորհալին, իր «Ընդհանրական»-ին մեջ, երբ կըսէ— «Մի՛ որ մեղիցէ զանթողի յանցանս ուրանալով զերդումս և երդմնազանց լինելով»: Ու մեզ կպատվիրէ ոչ միայն ուխտապահ ըլլալ առ հավատակիցս, «այլ և առ ալլազգիս. և մանաւանդ առ նոսա առաւել» (Տես «Թուղթ ընդհանրական» 192—194):

Մանր պարագաներու մեջ երդմնադրութեան մեծ պատիժներով կհալածվէին ու կրնամ օրինակ մը տալ հայոց պատմութեան:

Երբ Վարդանանք Պարսկաստանէն վերադառնալէն վերջ գիշեր մը հանկարծ հայ եպիսկոպոսները ավետարան ի ձեռին մտան մեծ սպարապետ Վարդանին ընակարանը ու պահանջեցին, որ առաջը առնել Վասակին ու մողերու ի գործ դրած անկարգութիւններուն, Մամիկոնյան առյուծը ու ներկա մլուս իշխանները ոգևորված Ավետարանի սիրով, կրկին ու կրկին ուխտեցին պաշտպանն հանդիսանալու Հայաստանյայց եկեղեցւոյ ու արգիլելու Պարսկական խժժութիւնները: Հոն գտնվող նախարարներէն մին, որ Զանդավան կկոչվեր (ու որ նախապէս իրենց ուխտակից էր), հանկարծ ընդ-

վզելով ինքզինքը երդմանազանց ցույց տվավ: Այս ուխտադրութիւնը իսկուհին տեղովուհին վրա քարկոծվելով սպանվեցավ (Ջանդավանին անունը մեզ կալանդե Փարպեցին, իսկ դեպքը կպատմեմ Եղիշեն):

Բարեմիտ մարդիկ երբեմն ջերմ կրոնասիրութենէ մղված անխորհուրդ երդումներ կընեն, որոնց պահպանութիւնը շատ անգամներ անկարելի կըլլաւ: Այսպիսիները «երդմանասխալ» կըսվեն, որոնց դեմ խիստ էր Ջաք. Մործորեցին: Բայց հայ եկեղեցին, որ միշտ գթութիւն ցույց կուտաւ մարդկային տկարութեանց հանդեպ, երդմանասխալներուն ներողամիտ կըլլար հաճախ, որոնց փրկութեան համար գրված էր Մաշտոցին հետեւյալ կանոնը, զոր հայ քահանայն երդմանահարին կկարդար.

«Աստուած, որ զմարդոյ բնութիւնս փոփոխական և տկար գիրքս և զառ ի մտածութենէ մերմէ խորհուրդս ճշմարտապէս ճանաչես զառ ի խաբէութեանց մերոց եղեալս, որ անոխակալդ ես, արժանաւորեալ թողութիւն, որք յանդգնեցան յերդումն շաղախիլ, վասն զի դու միայն գիտես զգաղտնիս սրտից մերոց: Խնդրեմք ի քէն թողութիւնս սոցա և մեզ գտանել քո անճառելի բարերարութեամբդ: Քանզի աւրհնեալ է անուն քոյ և փառաւորեալ թագաւորութիւն Հաւր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս ամէն»:

Այս մաղթանքն վերջ հայ հավատացալը իր երդումն ազատված կհամարվեր:

Կրոնարույր ու մաքուր կենցաղի այսպիսի խիստ օրենքները ոչ միայն հայոց մոտ, այլ նաև օտարներու քով նշմարված է:

Հրեաները երդմանապահութեան մեջ հայոց չափ խիստ էին: Երբ երդում պիտի տային, անոնք սովորութիւն ունեին որթ մը երկու մասերու բաժանել ու անոնց մեջն անցնել: Այս սպառնալիքը ցույց մըն էր համանման մահվան անոր, որ երդմանադրութ կլինէր (Երեմիա Դ. 18):

Ասորիները և պարսիկները հեռու էին հայոց և հրեից կրոնական այսպիսի խիստ խղճատութենէն: Սեւեկյաններու օրով եր-
նիկոսիա (Կիարոս)

դմեադրութեան շատ օրինակներ կան պատմութեան մեջ, իսկ Պարսից քով երդում դրժելը շատ սովորական արարք մըն էր:

Հին հելլեններն ալ շատ շէին դանազանվոր ասորիներն ու պարսիկներն: Ասոնք ավելի տեսականորեն կճանչնային հավատարմութիւնը քան գործնականապէս: Աղամեմնոն անգամ կգանգատեր տրուագացիներու՝ աքայեցիներու դեմ ցույց տված երդմանադրութիւնները ու կըսէր, թէ Արամազդ վրեժ պիտի լուծեր իրենցմէ: («Իլիական» Դ. 157—168):

Հույն կիներու տված երդումները «շուրիկ վրայ գրված» կհամարվէին, բայց ամենաերդմանադրութենէն էին սպարտացիները:

Այս պատճառով հույն իմաստասերներն աւտվածներուն հասած անարգանքներուն առաջք առնելու համար աննշան վկաներու, այսինքն բույսերու և անասուններու վրա երդումներ հնարեցին:

Այսպէս՝ Ջինոն երդում ըրած էր բույսի մը վերա, Սոկրատ երդում ըրած էր շան մը ու սոսիին վերա, իսկ Աթենացի կախարդ Լամպոնը երդում ըրած էր սագի մը վերա*):

Հռոմայեցիք, սակայն, հայոց ու հրեաներու նման հավատարիմ էին տրված երդումներուն հանդեպ: Կիկերոն կըսէր, թէ երդումը ոչ թէ աստվածներու բարկութեան, այլ արդարութեան ու վստահութեան կվերաբերի: Կիկերոնն առաջ հռոմայեցիք այն համոզումը ունեին, թէ աստվածները վրեժխնդիր էին երդմանադրութներուն դեմ, ու կվարձատրէին երդմանապահները:

Հնադարյան հայ պատվական ազգը իր դասական անցյալով, կրոնարույր կենցաղով ու արժեքավոր պատմութեամբ կրնա մրցել Արեւմուտքի և Արեւելքի շատ մը ընտրված ազգերու հետ: Եթէ մանրամասնորեն ու գիտականորեն զբաղինք և ուսումնասիրենք հայոց պատմութիւնը, միշտ պիտի հանդիպենք հայ անցյալին այն փառավոր ու եզակի վսեմութիւններուն, որոնց կարող կզգանք այսօր աներկբայորեն:

Պետք է գիտենալ, սակայն, որ Հայաստանյայց եկեղեցին հայկական փառավոր անցյալն մեզի փոխանցված եզակի գանձերն մեկն է:

*) Sht. "Daremberg et Saglio Diction des Antiquites Greco et Romaines" էջ 769 և 169—170



ՄՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ



Ստ. Մալխասյանց

այ ազգի մեծ զավակի և նրա անզուգական բարերար Մեսրոպ Մաշտոցի ծագման մասին մենք շատ քիչ տեղեկություն ունենք: Նրա կենսագրության ամենահեղինակավոր աղբյուրը, Կորյունը, որ նրա աշակերտն ու աշխատակիցն էր, գրել է համառոտ կենսագրության «Վարք սրբոյն Մեսրոպայ վարդապետի» վերնագրով, որի մեջ հետևյալ տեղեկություններն է տալիս նրա ծագման մասին. «Առն, զոր ի նախակարգ բանին նշանակեմք... է Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կաշեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինէր սպասաւոր արքայատուր հրամանացն»: Ուրեմն Մեսրոպ վարդապետի անունը եղել է Մաշթոց կամ Մաշտոց. նա եղել է Տարօնի Հացեկաց գյուղից, Վարդան անունով մի երանելի մարդու որդի: Մանկության հասակում սովորել է հունարեն լեզուն, եկել հասել է Մեծ Հայք, Արշակունի Հայ թագավորների դուռը, ծառայության է մտել արքունական դիւանը և կատարել է

արքայական հրամանները:—Այսքան միայն, շատ քիչ, շատ ժլատ տեղեկություն: Խորհնացին, որ նույնպես եղել է աշակերտ և ժամանակակից Մեսրոպին, այս տեղեկության վրա մի խոսք է ավելացնում. —«Մենալ և ուսեալ առ մեծին Ներսէսի» (Գ. Խէ): Հին աղբյուրներից ուրիշ լրացուցիչ տեղեկություններ պակասում էին: Վերջերս, երբ բանասիրական գրականությունը սկսեց մեր մեջ զարգանալ, բանասերներից ոմանք, ինչպես Ղ. Ալիշան (Հայագատում), Գարագաշյան (Քննական պատմություն) ավելի ոչինչ չստացին Մեսրոպի ծագման մասին: Ուրիշները, որոշ հիմունքներով, մի քանի առաջ գնացին: Այսպես, Մ. Օրմանյան Ազգապատումի մեջ (եր. 266) գրում է. «Նորա ամուսն է Մաշթոց, հայրը Վարդան, ծննդավայրը Հացիկ գիւղ Տարօն գավառի մէջ, որով կլինի Մամիկոնեան ազգի կամ ցեղի սերունդ, քանի որ արքունիքի մեջ պաշտօնավարութեամբ ռամիկ դասակարգէ չլինելն ալ կվկայվի, Ներսէսի օրով աշակերտած է... յուն և ասորի դպրութեանց և իւր յաջողութեան և թերևս ազգատոհմին ալ շնորհիւ արժանի եղած է Ներսէսի հավատարիմ աշակերտներէն մեկն ըլլալ»: Այս խոսքերում ես

անհավանական եմ համարում Օրմանյանի եղբայրացությունը, թե Մեսրոպը պետք է Մամիկոնյան ազգի կամ ցեղի սերունդ լիներ, քանի որ Տարոնը՝ նրա ծննդավայրը, Մամիկոնյան տոհմին էր պատկանում այլ յամանակ, որովհետև Տարոնը պարունակում էր խիստ բազմությամբ գեղջուկ ժողովուրդ, շինական կամ ծառա, իսկ Մամիկոնյան տոհմը հազիվ մի քանի տասնյակ անձից բաղկացած լիներ, ուրեմն տարոնացի լինելուց չի կարելի եղբայրացնել, թե Մեսրոպը այդ ընտրյալ սակավաթիվ անձերից մեկն է եղել և ոչ տարոնացի լուկ շինական:

Մ. Աբեղյանն էլ նման կարծիք է հայտնում (Գրականության պատմություն, հր. 72). Շնա (Մեսրոպ) ծառայությունը թողնում է 394 թվին և դառնում կրոնավոր, ռեբեկանալով իշխանակիր ցանկութիւնները — գրում է Կորյունը: Այս ակնարկից, ինչպես և այն հանգամանքից, որ նա շատ երիտասարդ հասակում արժանացել է արքունի քարտուղար դառնալու և եղել է զինվորական, այն էլ ոչ սոսկական զինվոր, պետք է կարծել, որ նա ծագումով ազնվական է եղել և ոչ ժողովրդի ստորին խավերից, ինչպես առանց որևէ հիմքի գրել են վերջերս: Այս խոսքերում էլ ես անհավանական եմ համարում Մ. Աբեղյանի բացատրությունը Կորյունի «իշխանակիր ցանկութիւնները» իբրև ապացույց Մեսրոպի իշխանական ծագման: Այս խոսքը ես հասկանում եմ իբրև իշխանություն բանեցնելու ցանկությունները, որպիսին նա կուեննար լինելով արքունի քարտուղար:

Այս երկու կարծիքները, որքան և հավանական, բայց և այնպես ենթադրություններ են, քանի որ հին աղբյուրներից դրական ապացույցներ չկան: Մակայն ուշադիր քննողը հին մատենագրության մեջ էլ կգտնի Մեսրոպի ազնվական ծագումը նշանակող ապացույցներ:

Վերցնենք ամենից առաջ Կորյունին: Նրա վկայության մեջ ինչպես վերը բերինք, Մեսրոպ Մաշտոցը կոչված է «որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ»: Այս վկայությունը բերված է համաձայն Կորյունի հինգ ձեռագրերի, որոնք բոլորը շատ նոր ժամանակից են՝ 18—20-րդ դարերից: «Երանելի» բառն այստեղ շատ անտեղի է. մի անձանոթ մարդու մասին, որի ոչ սրբությունն է հայտնի, ոչ բարձրաստիճան հոգևորական լինելը և ոչ որևէ առաքինություն՝ գրաբարում չեն ասում երանելի. այսպիսի դեպքում, պատվի համար գործ են անում ռա-

րեպաշտ» բառը. «որդի առն բարեպաշտի», սակայն Կորյունի պատմության երկու ձառնտիրը, 14—15-րդ դարերից, «երանելի» բառի փոխարեն ունեն «երեւելի» — «որդի առն երեւելոյ», որ շատ ավելի տեղին է և բնական: Այս երկու ձառնտիրները բազմաթիվ ընտիր վարիանտներ են պարունակում, որոնցով ուղղվում են նորագույն ձեռագրերի աղավաղված թմազերը, բայց Մ. Աբեղյանը ցավոք չի մոռնել բնագրի մեջ, ինչպես երկվում է ժամանակի շտապողականության պատճառով (որ հիշում է առաջաբանում): Համենայն դեպս մենք լիակատար իրավունք ունենք պնդելու, որ Կորյունը Մեսրոպին ճանաչում է որդի մի երեւելի՝ այսինքն նշանավոր, աչքի ընկնող մարդու, որ կարող է միայն ազատ-ազնվական ծագում նշանակել: Ավելի պարզ գրում է այս մասին Անանիա Շիրակացին իր ժամանակագրության մեջ (հր. 389), որ Դաւիթիւյան նշանագիրները 29 հատ են, «իսկ զեօթն գրոցն պակասութեան Մեսրոպը՝ երանելի ի Հացեկաց Տարաւոյ յազատ տալէ հայցեալ յԱստուծոյ և ցուցաւ նմա ի տեսեանս: Ուրեմն թե՛ աշխարհ բանսերները, և թե՛ իրեն հին վկայությունները ցույց են տալիս, որ Մեսրոպ Մաշտոցը ազատ տանից է եղել, այսինքն ազնվական դասակարգից, առանց ավելի մանրամասնության: Ես ուզում եմ մի համարձակ քայլ էլ անել ավելի պարզ որոշելու համար նրա ծագումը, օգտվելով Փավստոս Բլուզանդի մի քանի տեղեկություններից: Բլուզանդը պատմում է (Դ. ե. 1), որ Վրթանես կաթողիկոսի որդուն՝ Հուսիկին շատ փոքր հասակում (ըստ ոմանց տասներկու տարեկան) ամուսնացնում են Տիրան թագավորի աղջկա հետ: Մի անգամ միայն Հուսիկը ամուսնական կապ է ունենում իր կնոջ հետ, որը հղանում է և ծնում երկուորակ՝ Պապին և Աթանագենեսին: Այնուհետև նա զգվանքով դադարում է կնոջ հետ կենակցելուց, որ եղբորական հետևանք է ունենում երկուսի համար էլ: Ուրիշ տեղ (Դ. ժե) Բլուզանդը պատմում է, թե Պապն ու Աթանագենեսը անտակ կյանք էին վարում, հոգևորական կյանքը արհամարհում ու ծաղրում էին, չէին կամենում հայրապետական աթոռի ժառանգ դառնալ: Նրանք ամուսնացել էին թագավորի որդյրի հետ: Աթանագենեսի որդին եղավ Ներսես մեծ անվանի կաթողիկոսը, իսկ Պապի կնոջ անունն էր Վարազդուխտ, որ ամուսնազավակ մեռավ: Մի երրորդ տեղ (Դ. ժԹ) պատմում է, թե Պապը կնոջից որդի չունեցավ, բայց նա ուներ մի հարձ, Տարոն գավառից, Հացեկաց կարճազատների գյուղից:

այս Հացեկացի կնոջից մի զավակ ունեցաւ. որին Վրիկ էին ասում:

Իմ կարծիքով մեծ հավանականութիւն կա Կորյունի և Շիրակացու հիշած ազատ վարդապետի Հացեկաց գյուղից նույնացնելու. Բյուզանդի հիշած Հացեկաց գյուղի կարճա-զատ Վրիկի հետ, Վրիկ բառը համարելով վարդապետ անվան մանկական փաղաքշական ձևը (ինչպես ասում են Հովհաննէս—Օնիկ, Գրիգոր—Գորիկ, Մարիամ—Մարիկ և այլն) որով Մեսրոպ հան-

դիսանում է Հուսիկի թոռնորդի (Հուսիկ—Պապ—Վրիկ—Մեսրոպ), այսինքն Գրիգոր Լուսավորչի թոհմից:

Հետաքրքրական է «կարճազատ» բառը Փափստոսի մոտ «ի գեղջէ կարճազատից»: Հայկազյան բառարանը շունի այս բառը, ոչ էլ Ֆեշտմաճյանը և Արմատականը: Առձեռն բառարանը միայն ունի այս բառը և բացատրում է շատ տարօրինակ կերպով. — «օձ ու կարիճ, ճարաճճի»: Ինձ թվում է, թե կարճազատը ոչ թե կարիճ բառից է, ինչպես կարծել է Առձեռն բառարանի հեղինակը, այլ ուղղակի կարճ բառից, այսինքն նշանակում է կարճ-ազատ, ազատ՝ ազնվական կարճ, սահմանափակ իրավունքներով: Եթե ազատի օրինավոր ժառանգը նրա շափ ազատ էր, վայելում էր հոր բոլոր իրավունքները, ապա նրա ոչ-օրինական զավակը՝ հարձորդին վայելում էր նվազ իրավունքներ. նա դարձյալ ազատ էր, բայց ստորին աստիճանի ազատ: Հացեկաց գյուղը Փափստոսի ժամանակ (մոտ 475-ին) կարճազատների գյուղ է եղել, այսինքն այս գյուղն իբրև ժառանգութիւն տրված է եղել Վրիկին—Վարդանին իբրև հարձից ծնված որդու: Հակառակ դեպքում, այսինքն, եթե Վրիկը ծնված լինէր օրինական կնոջից, նա կունենար լիակատար ազատի ընդարձակ իրավունքներ, ինչպես իր հայրը, որ Արշակունի թագավորներից հետո գուցե առաջին

բարձր ազնվականն էր թե՛ հոր և թե՛ մոր կողմից:

Մի կետ էլ կա այստեղ քննելու՝ ժամանակագրական հարցը: Արդյո՞ք Մեսրոպի գործունեության և մահվան ժամանակը (400—440) հարմարվում են Հուսիկի թոռնորդին կամ Պապի թոռը լինելուն: Այս տեսակետից այս հարցի պատասխանը միանշանակաբար դրական է:

Ըստ Խորենացու

ժամանակագրության (նրա պատմության յոթ թարգմանության էջ 365) Հուսիկը կաթողիկոսութիւն է արել 331—337 թվականներին: Եթե ենթադրենք, թե նրա երկվորյակ Պապի և Աթանագենեի ծնունդը տեղի է ունեցել 235 թվականին, ապա նրանց որդիքը—Ներսէս և Վրիկ—ծնված պետք է լինեն նրանց մոտ 20 տարեկան հասակում՝ մոտ 355-ին, իսկ սրանց որդիքը՝ Սահակ և Մեսրոպ, էլի 20 տարի հետո, այսինքն մոտ 375-ին, այնպես որ Մեսրոպը գրի գյուտին ձեռնարկելիս կլինէր մոտ 30 տարեկան, իսկ



Մեսրոպ Մաշտոց

վախճանվելիս՝ 70 տարեկան: Եթե որդեծնության տարին վերցնում եմ հայրերի 20 տարեկան հասակը, ես իրականից ավելի եմ վերցնում, որովհետև հին ժամանակ շատ վաղ էին ամուսնացնում որդոց: Մեր կանոնագրքերը պարունակում են օրենքներ տղա հասակում շամուսնացնել, որ հաճախ տեղի է ունեցել հոգևոր և մարմնավոր մեծամեծ վնասներով: Նույն եզրակացության հասնում ենք և ուրիշ հաշվով: Եթե ճիշտ է մեր տեսությունը, այսինքն որ Սահակը և Մեսրոպը զավակներ են Պապ և Աթանագենես երկվորյակ եղբայրների, կազմելով նրանց երրորդ սերունդը, ապա, բնականապես, նրանք ժամանակակից պետք է լինեին միմյանց: Իրոք էլ տեսնում ենք նրանց միաժամանակ ապրած և մեռած: Սահակ կաթողիկոսը մի քանի տարով մեծ էր Մեսրոպից, ըստ Օր-

մանյանի՝ 5 տարով։ Սա նշանակում է, որ նրա հայրը կամ պապը քսան տարեկանից ավելի վաղ էին ամուսնացել՝ 16—18 տարեկան հասակներում։

Մի տարի Կողմնակի ապացույց էլ ենք գտնում մեր այս կարծիքին։ Փավստոսը (Դ. Ե.) պատմում է, թե երբ Հուսիկը հոգ էր առնում իր այս զեռահաս մորից որք մնացած երեխաների մասին, հրեշտակը տեսիլ տրամ նրան երևաց ու ասաց. «Հուսի՛կ, որդի Թրիգորի, մի՛ վախենար, Տէրը լսեց թափաթները, քո այդ զավակներից՝ Կծնին ու Վրիշ զավակները որոնք Հայաստան աշխարհի համար կլինեն լուսավորութեան ու դիտութեան, հոգևոր իմաստութեան աղբիւրներ, նրանցով Քրիստոսը կհառաւորվի շատ բնիկներով...»։ Տեսիլը երկար է, բոլոր ժամանակ այս նոր զավակների մասին գործ է ածվում հոգնակի ձեռնարկ, քոցա, Խնոցանք ներկա բանասիրություն, այս տեսիլը հասկանում է այն մտքով, թե դա գրված է ոչ ժամանակ, թե դա ոչ թե տեսիլ է, այլ հայտնի իրողության նկարագիր։ Նույնը պարզապես նկատվում է ոչ թե մի անգ, որպիսին կարող էր լինել Սահակ կաթողիկոսը, այլ ավելի անհերքի, այսինքն Սահակի և Մեսրոպի, իրենց ավելի են հարմարում վերջին խոսքերը։ Քրիստոս ներանցով կհառաւորվի շատ բնիկներով, որով նկատվում է վրաց և աղվանների համար գրեթե գոտու։ Սրանից ևս մենք հետևեցնում ենք, որ Փավստոսի պատմության

անհայտ հեղինակին ծանոթ էր Մեսրոպի ծագումը։

Այս վերադավ մենք ստանում ենք հետևյալ ճյուղավորությունը Հուսիկից սկսած.

ՀՈՒՍԻԿ

Արաճագենես

Պապ

Ներսես

Վրիկ

Սահակ

Մեսրոպ

Այսինքն, որ Սահակն ու Մեսրոպը ոչ միայն գործակից և աշխատակից են եղել իրրե հավան և հավասար ամուսնու մեր ազգի լուսավորության գործում, այլև ծնունդով արյունակից ազգականներ են եղել, իրրե երկու հարազատ եղբայրների թոռներ։ Սրանով ավելի ևս արդարանում է խորհրդող վկայությունը, թե Մեսրոպը սնվել ու սովորել է ներսես կաթողիկոսի մոտ։ Ներսեսը սնուցել և սովորեցել է ոչ թե մի օտար երեխայի, այլ իր արյունակից կրտսեր ազգականին, իր հորեղբոր թոռանը։

Այս տեսությունը, իհարկե, ենթադրություն է և ոչ հաստատուն փաստ։ Բայց եթե նկատի ունենանք, որ բոլոր տեսակետներից քննելով տեսնում ենք այս տեսությունը արդարանում է իրականությամբ, և չկա ոչ մի առարկություն, որ նրա հակառակը վկայեր, ապա պետք է համոզվենք, որ նա ավելի է, քան լիկ ենթադրություն, և ստուգության հանգամանք է ստանում։





Պրոֆ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

**ՆՈՐ ՎԱԿԵՐԱԳՐԵՐ ՊԵՏՐՈՍ ՄԵՍԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅԵՐՋԱՆԻ ՀԱՅ-ՌՈՒՍ
ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ՄԱՍԻՆ**



Ա. Արամյան



այ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ 18-րդ դարը բացառիկ կարևորություն ունեցող ժամանակաշրջաններից մեկն է: Նա կարևոր է, որովհետև 18-րդ դարում է, հիմնականում, որ հայ հասարակական առաջավոր և հայրենասեր գործիչները հայ ժողովրդի քաղաքական ազատագրության գործը վերջնականապես կապեցին Մեծ Ռուսաստանի հետ:

Հայ ժողովրդի պատմության համար առանձնապես կարևոր է Պետրոս Մեծի շրջանը, որովհետև Պետրոս Մեծն առաջինն էր ռուս ցարերից, որ իր 1723 թվի հունիսի 3-ի հրովարտակով հայտարարեց, որ նա իր հովանավորության տակ է վերցնում հայ ժողովրդին: Պետրոս Մեծի ժամանակաշրջանն սկիզբ հանդիսացավ մի շրջանի, երբ հայ ժողովուրդը իր ազատագրությունն սկսեց կապել Մեծ Ռուսաստանի հետ, դրանով իր բախտը կապելով ռուս ազնիվ ժողովրդի բախտի հետ:

Ըիշտ է, Պետրոս Մեծի ժամանակ միջազգային քաղաքական աննպաստ պայմանները թույլ չտվեցին իրականացնել հայ ժողովրդի վաղեմի ցանկությունը՝ վերա-

կանգնելու նրա քաղաքական անկախությունը. և հարյուր տարի հետո միայն հնարավոր դարձավ Հայաստանի Արևելյան շրջանների միակցումը Ռուսաստանին, իսկ քաղաքական ազատությունը հնարավոր եղավ միայն Սովետական իշխանության ժամանակ, սակայն Պետրոս Մեծի ժամանակ հայ առաջավոր հասարակական շրջաններում վերջապես ձևակերպվեց Հայաստանի ազատագրությունը պարսկական և տաճկական լծից Ռուսաստանի օգնությամբ և այն գործարար հողի վրա դրվեց:

Ահա թե ինչու այս շրջանից մեզ հասած յուրաքանչյուր վավերագիր, որ այս կամ այն չափով լույս է սփռում մեր և ռուս ժողովրդի հարաբերությունների պատմության վրա, այնքան թանկ, այնքան գնահատելի է մեր պատմության համար:

Պատմական այս կարևոր ժամանակաշրջանին վերաբերվող բազմաթիվ սկզբնաղբյուրներ են հրատարակվել: Երոնցից կարելի է մատնացույց անել Վազարյան ճեմարանի հրատարակությամբ լույս տեսած «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», իր հրատարակվել է Մոսկվայում 1833 թվին, 4.

ուր իմ որդիներն են սովորում»): (Մեր ժող., էջ 16):

Եվ, վերջապես Օրին իր այդ դիմումի մեջ խնդրել է Պետրոս Մեծին՝ թույլ տալ իր հետ վերցնել և Կյուրֆուրստին տանել զանազան կենդանիների՝ սպիտակ աքել, սև և սպիտակ ազվեանների, կզաքիսի և այլ կենդանիների մորթիներ (Մեր ժող., էջ 15—16):

Օրու Ռուսաստանից մեկնելուց ուղիղ իննը ամիս հետո, 1704 թվի նոյեմբերի 3-ին, Մինաս վարդապետը Իսրայել Օրուն գրել է հայերեն լեզվով հանդիմանական մի ընդարձակ նամակ, որը հայտնաբերված է մեր կողմից: Այդ նամակում նա Օրուն մեղադրում է այն բանում, որ Օրին անպարտաճանաչ է գտնվել իր խոստման մեջ, խոստացել է շուտ-շուտ նամակ գրել, սակայն չի կատարում իր խոստումը, գրել է ընդամենը երկու նամակ, մեկը՝ Լվովից, իսկ մյուսը՝ Վիեննայից: Հակառակ դրան, նա սխառեմատիկ ձևով նամակագրություն է ունեցել կողմնակի մարդկանց հետ և տեղյակ պահել իր գործերի մասին: Ահա զրանից նեղացած Մինաս վարդապետը գանգատվում է իր նամակում. «Մահանա լանես, թէ չեմ կարել գրել. քո մտքը կանես, թէ կարող եմ ամեն բան մին պատճառի խաբել և թէ զիս խաբես, աստուած ո՞չ կարես խաբել, ամենայն ինչ ի ձեռինս նորա է... պարտ է, որ ամենայն ինչ ճարտար ինձն է իմանան, ես կու գնամ մունեթով նոցան է իմանամ, աստուած էդպէս ընկերութիւն չի վերցնիր...» (Մեր ժող., էջ 25):

Մինաս վարդապետի նամակից երևում է, որ Օրին Կյուրֆուրստի մոտ գնալու ժամանակ ճանապարհին հանդիպել է որոշ նեղությունների. «Ինչ նեղութիւն որ հանդիպեր է ձեզ, իմացայ, — գրում է նա, — աստծոյ հաղար անգամ գոհութիւն, որ այս խառնակ ժամանակին սալամաթ հասեր ես ի Վիենն» (Մեր ժող., էջ 21):

Մինաս վարդապետն իր այդ նամակում խորհուրդ է տալիս Օրուն, որ նա վեգիրին (հավանական է ի նկատի ունենալով Գոյովինին) տրված խոստումներն անպայման կատարի, որովհետև նրանից է կախված իրենց գործի բախտը, որովհետև նրա ձեռքումն է մեծ մարդու, այսինքն Պետրոս Մեծի մեծ բանալին, իսկ կողմնակի մարդիկ միայն սեղանի բարեկամներ են. «Կու խնդրեմք ի քեզնէ, — գրում է նա, — որ ինչ ասացեր ես այս տեղս վեգիրին, ջանք գնես, որ սուտ չեղնուս, ամենայն ինչ հրա-

ման մեզ պիտանի, ի ձեռինս նորա է, աստծով, ինչպէս որ կամի, կարող է առնել, այս մեծին մեծ բանալիքն ի ձեռինս է, ես որ կամի, շուտով կու բանայ զմեր դուռն, այլ ամենեքեան՝ ոչի՛նչ, ուտելոց բարեկամք են» (Մեր ժող., էջ 25):

Մինաս վարդապետի այս նամակից երևում է նաև, որ Օրին չնայած շատ վատ, բայց այնուամենայնիվ հայերեն գրել կարողացել է: Այդ երևում է Մինաս վարդապետի գրած նամակի այն անկարկից, որ նա պատվիրում է Օրուն. «Այն, որ առանձին բան է, դու միտ ածելով, իմ գրին օրինակովն, Բո ձեռովն ինձ գրէ (ընդգծումն մերն է Ա. Ա.), որ ես իմանամ, թե ինչ պետք է մեր բանին» (Մեր ժող., էջ 25):

Իր նամակում մի այլ տեղ Մինաս վարդապետը կրկնում է իր խորհուրդը. «Թէ ինչ առանձին խօսք ունիս, թէ ինձ, թէ վեգիրին և թէ խանին, քո ձեռովն, միտք ածելով հենց գրես, որ իւրեանց սրտի հաճելին իւրեանց պատմեմ» (Մեր ժող., էջ 26):

Բերված փաստերը կարևոր են, որովհետև հայագիտության մեջ կարծիքներ են եղել, որ իբր Իսրայել Օրին — հայերեն չի իմացել:

Եվ, վերջապես, Օրու նամակից երևում է նաև, որ Թարդուլի և Օրու միջև ինչ որ գծություններ են տեղի ունեցել, որի համար նա իր այդ նամակում հորդորում է ն' Օրուն, և՛ Թարդուլին՝ իրար հետ քնդհանուր լեզու գտնել: Մինաս վարդապետն իր նամակում խնդրում է. «Դարձեալ պարոն Թարդուլդ կաղաչեմք որ վասն աստուծոյ խաթրին համար, չը լինի թէ աստանայ խօսացն յուշ գնես և պարոն Իսրայելին հակառակիս, քանի որ հակառակիս, քո հոգուն և շատ աշխատանացն կու հակառակիս, աստուած որ սաղ պահէ, քո աշխատանքն չի կորիլ, քո մին մազն պարոն Իսրայել ամենայն վաճառակա՛նաց չի փոխիլ... ապա հիմի դու գիտակ ես, որ կարողութիւն չկա քո բարութեան փոխարէնն լցուցանել, կու խնդրեմք, որ քանի կարողութիւն ունիս, խովաթ տաս և հաշտ լինես հետ պարոն Իսրայելին» (Մեր ժող., էջ 23—24): Երևում է, որ Թարդուլը նյութական խոշոր աջակցություն է ցույց տված եղել Օրուն:

Օրու գործունեության հետ կապված՝ մեր հայտնաբերած վավերագրերից առանձնապես արժեքավոր է 1712 թվի ապրիլի 8-ին նիաղովում Օրուց գողացված ապրանքների

նղյանի կազմած վավերագրերի ժողովածուն «Сношения Петра Великого с армянским народом» խորագրով, որը լույս է ընծայվել 1898 թ., Պետրոս Սարգիս դի Գիլանենցի օրագրությունը, որը հրատարակվել է «Կոռնկ» ամսագրում, (նույնը թարգմանվել է ռուսերեն պրոֆ. Բ. Պատկանյանի կողմից «Дневник осады Испагана, введенный Петросом ди Саргис Гилагенц в 1722 — 1723 г. г.» վերնագրով), Աշ. Հովհաննիսյանի «Հայ-ռուս օրինատացիայի ծագման խնդիրը», որը հրատարակվել է 1921 թվին (հեղինակն այստեղ հրատարակել է մի քանի արժեքավոր վավերագրեր), Դավիթ Բեկի պատմությունը, որը հրատարակել է Գյուլամիրյանը 1871 թվին «Ընտիր պատմութիւն Դավթ Բեգիւն և պատեհազմացն հայոց Խափանու, որք եղէն բնդէմ բուրաց...» վերնագրով, և մի քանի մանր ու երկրորդական աղբյուրներ:

Հայ-ռուս բարեկամական հարաբերությունները հայագիտության մեջ բավականաչափ ուսումնասիրված են և ուսումնասիրությունների մեծ մասը կապված է մեր սովետական շրջանի հետ: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է նշել դոց. Զ. Գրիգորյանի, դոց. Վ. Պարսամյանի և դոց. Մ. Ներսիսյանի արժեքավոր աշխատությունները:

Սակայն եղած ուսումնասիրությունները և հրատարակված նյութերը դեռ չեն սպառել հայ-ռուս հարաբերություններին վերաբերվող մեր սկզբնաղբյուրները: 1934—1937 թ. թ. Մոսկվայում ինձ և ընկերոջս՝ Դանիել Գաբրիելյանին, հաջողվել է Մոսկվայի արխիվներում, իսկ հետագայում նաև ՀՍՍՖ Մատենադարանում, հայտնաբերել Պետրոս Մեծի ժամանակաշրջանին վերաբերվող 70-ից ավելի վավերագրեր, որոնք ամփոփված են առանձին ժողովածուի մեջ և պատրաստված հրատարակության համար: Մեր ներկա աշխատությունն այդ ժողովածուի պարունակած վավերագրերի մասին նախնական հաղորդում է հանդիսանում:

Մատենադարանում և Մոսկվայի արխիվներում հայտնաբերած մեր վավերագրերը, հիմնականում, չորս գլխավոր խմբի կարելի է բաժանել՝ ա) Իսրայել Օրու և Մինաս վարդապետի գործունեության հետ կապված վավերագրեր, բ) Նղիաս Մուշեղի նամակները, գ) էլլի Կարապետի պատվիրակության հետ կապված վավերագրեր և դ) ժամանակակից այլ անձանց նամակներ, դի-

մումներ և գրություններ: Կանգ առնենք դրանց յուրաքանչյուրի վրա և աշխատենք ցույց տալ նրանց արժեքը հայ ժողովրդի պատմության համար:

Նորահայտ նյութերի մեջ Իսրայել Օրու անվան հետ կապված ամենահին վավերագիրը—այդ Օրու 1704 թվի փետրվարի 2-ի դիմումն է ուղղված Պետրոս Մեծին: Այդ դիմումից երևում է, որ 1704 թվի փետրվարին, երբ Օրին գնդապետի պաշտոն ստացած պատրաստվում էր թողնել Մոսկվան և գնալ Պֆալցի Կյուրֆուրստի մոտ, անհոգ չի գտնվել դեպի իր լծակից Մինաս վարդապետը, որը պիտի մնար Մոսկվայում և իր բացակայության ժամանակ փոխարիներ իրեն, այլ դիմել է Պետրոս Մեծին և խնդրել, որ իրեն տրված հինգ ալթին օրապահիկը, ի հավելումն նրա ստացածի, տալ Մինաս վարդապետին:

„Прошу Вашего превосходительства, корм, который мне был 5 алтын на день, чтобы пожаловали давали на прокормление ему же вардапету к прежнему ему корму“.

(«Զերդ գերազանցությունից խնդրում եմ, որ ինձ տրված 5 ալթին օրապահիկը ևս ի հավելումն իր նախկին ստացածի, տրվի (Մինաս) վարդապետին» (Մեր ժող. էջ 15*):

Օրու այդ նույն դիմումից երևում է նաև, որ Պետրոս Մեծը ցանկացել է Օրու հետ երկու—երեք աշակերտներ ուղարկել Նվրոպա՝ ֆրանսերեն սովորելու համար և Օրին հանձն է առել տանել նրանց իր հետ ու տեղավորել սովորելու այն դպրոցում, ուր սովորելիս են եղել իր տղաները: Պետրոս Մեծին ուղարկած իր նամակում Օրին այդ մասին գրում է.

„И буде Ваше превосходительство изволите каких приказных людей для учения французского языка послать двух или трех человек со мною, я рад взять их и отдавать их в школу, где и мои дети учатся“.

(«Եթե Զերդ գերազանցությունը կցանկանա պաշտոնյաներից երկու—երեք հոգի ինձ հետ ուղարկել ֆրանսերեն սովորելու, ես ուրախ եմ վերցնել նրանց ինձ հետ և տալ այն դպրոցը,

*) Բոլոր դեպքերում «Մեր ժող.» ասելով ի նկատի ունենք հրատարակության համար մեր պատրաստած վավերագրերի ժողովածուն:

մասին կազմած արձանագրությունը Արձանագրություն սկսվում է հետևյալ ձևով. «Հրամանաւ մեծի թագաւորին Մօսկովու Պետրոս Ալեքսանտրի, պատճառ գրոյս այս է. ես էլ ինչ իզրայէլ Օրիս, որ Շամախի էի, չորս անգամ մեծ գողութիւն եղե քմ տանն. Յորժամ կիրակի օրն պատարագ զնացի, եկած ժամանակն տեսնէի, որ թագաւորական ապրանքէն շատ իբժին վեր առած: Այս պատճառէս Ղամպար անուն արապն բռնեցի, հափս արի, երկու անգամ ղամաչի տալ տուի, երեք անգամ սրտին կրակ տուի: Նա էլ վախո՛ւն: և ցափ կսկծոյն շատ թուրքեր մատնեց, զնոքա էլ բերի զնձին տրի» (Մեր ժող. էջ 51):

Սակայն այս բոլորից հետո գողութիւնը, ինչպես երևում է արձանագրության բովանդակութիւնից, չի վերջանում: Կատարվում է մի ավելի խոշոր գողութիւն: Գողացված ապրանքների ցուցակում թրվարկված են «ԳՌ (3000) շահի ըռուի թագաւորի փող, ԲԺՌ (12.000) կտրած ապասի փող, մէկ ոսկի խանջալ—տաստան հակի տանտան» և այլն: Պարզվում է, որ գողութիւնը կատարել է ոմն Զաքարի Վիտաշովը իր կնոջ հետ միասին: Այդ բանը պարզվում է Օրու Շամախում եղած ժամանակ, սակայն նա այնտեղ չի ցանկանում բացահայտել, վախենալով գողերի հավատափոխութիւնից: «Գողութիւնը»,— գրում է Օրին արձանագրության մեջ,— «Շամախի աշքար շարի, պատճառն այն, շինի թէ փախչեն թուրքաց իմամն մտնուն և կամ հաւատն ուրանան, թագաւորին ապրանքն կորչի և հաւատոյ պակասութիւն լինի» (Մեր ժող. էջ 51): Նիսիւնովայում արդեն Օրին գողերին ձերբակալում է, խուզարկութիւն կատարում և ապրանքների մեծ մասը հայտնաբերում, որը ամենայն մանրամասնութեամբ նշված է արձանագրության մեջ: Գողացված ռպրանքների մի մասը գտնվում է Զաքարի անկողնու մեջ, իսկ մյուսը նրա մուրաբայի: Արձանագրության մեջ այդ մասին ասված է («Զաքարէի») մէկ հակն բացին, որ իւրեանց քնելու շորն էր և հաքնելու լճեպ, բարձ, խրշա և այլ իբժին: Սոցա մէջն մէկ նախշուն բարձ, աստառը կարմիր կտաւ, մէջը բամբակով լիքն: Բացին, տեսանք ներսն մէկ ոսկի խանձալ, տաստան հակի տանտան, մէկ ոսկէ դանակ: Այս մեր աշօք տեսաք այն հակումն: Այլ և յետու բացին... շաքարլամայ մուրապայ բամբակով շինած: Սորա մէջէն հանեցին մէկ փոքր կանաչ շալէ բարձ խոտով

լիքն կարած: Բացին, տեսանք Գ (3) ոսկի ճոհարով ճղած ներսն, խոտումն շինած ու կարած» (Մեր ժող. էջ 53):

Ուշագրութեան արժանի է, որ արձանագրությունը կնքված է երեք աշքի ընկնող հոգեւորականների կնիքներով— Եսայի կաթողիկոսի, Նղիշե վանքի վանահայր Հոհան վարդապետի և Խաչատուր վարդապետի:

Եվ, վերջապես, Օրու և Մինաս վարդապետի հետ է կապված Օրու այն ապրանքների ցուցակը, որը մնացած է եղել Աստրախանում և Կազանում նրա մահից հետո, որոնք պետք է որ տրվեին Մինաս վարդապետին՝ Օրու մահից հետո նրա թողած պարտքը վճարելու: Այդ վավերագրերում, որը դարձյալ հայտնաբերված է մեր կողմից, ասված է. «В прошлом же де 711 году он Израиль из Персиды прибыл в Астрахань и жил в Астрахани 2 месяца и умер, а после смерти его товары и пожитки всякие и вещи, которые с ним были вывезены из Персиды в Астрахань переписаны и ценены... и по его Великого государя указу отданы ему в 712 году для расплаты долгов Израилевых...» («Անցյալ 1711 թվին նա, Իսրայելը, Պարսկաստանից եկավ Աստրախան, ապրեց 2 ամիս և մահացավ, իսկ նրա մահից հետո նրա ապրանքները և բոլոր տեսակ իրեղենները, որոնք նրա հետ բերված էին Պարսկաստանից Աստրախան, ցուցակագրված են և գնահատված... և Մեծ թագավորի հրամանով տրված են նրան (Մինաս վարդապետին) 1712 թ. վճարելու Իսրայելի պարտքերը» (Մեր ժող. էջ 63):

Ցուցակում թվարկված են հարյուրից ավելի զանազան ապրանքների անուններ, որոնց թվում հազար քսան ուսուլու մետաքսյա գործվածքներ, 418 ուսուլու մետաքսի հումք, 9 պարսկական ձի և այլն:

Մեր հայտնաբերած Մինաս վարդապետի նամակներից արժեքավոր է նաև նրա 1719 թվին Մոսկվայի բարեկամներին գրած մի նամակը, ուր նա հույս է հայտնել հայերի ազատագրության մասին, Պետրոս Մեծի օգնությամբ. «Թագաւորն այսօր Ժ (10) օր է,— գրում է նա,— որ գնացեալ է իբր տաք շուրն: Կրաֆն և մեծ պարոն Շաֆիրովն, և ամենայն իշխանքն և զօրքն այստեղ են... Տէր Աստուած թագաւորին երկար ժամանակ տա, որ պոլ ա, աստու-

ծով մեր խեղճ եղեալ ազգին հանգստութիւն լինի» (Մեր ժող. էջ 62):

Եվ, վերջապես, մեր հայտնաբերած կարևոր վավերագրերից է Մինաս վարդապետի 1725 թվի օգոստոսի 13-ի նամակը, որն ուղղված է Եկատերինա առաջին կայսրուհուն: Նամակում գրված հարցերը փաստորեն ամփոփում են հանդիսանում Պետրոս Մեծի շրջանում հայ ժողովրդի մղած ազատագրական հերոսական պայքարի ընդդեմ տաճիկ և պարսիկ բռնակալության: Անհրաժեշտ ենք համարում բերել նրա համառոտ բովանդակությունը:

Իր ընդարձակ նամակում Մինաս վարդապետը խնդրում է կայսրուհուց ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրների վրա:

1. Երեսուն տարի է, որ հայ ժողովուրդը իր ազատագրության հույսը կապել է Մեծ Ռուսաստանի հետ և սպասում է նրա օգնությանը: Նա իր ռուսասիրության համար հալածվում, հետապնդվում է տաճիկ և պարսիկ կառավարությունների կողմից. «Մեր ազգն,— գրում է նա,— մեծ իմփոյատորի ուխտին և հրամանին հնազանդեալ նեղութիւն քաշում են և յոյս ունեն, որ մեծ թագաւորէն ողորմութիւն լինի իւրեանց» (Մեր ժող. էջ 137):

2. Պարսիկները շատ են աշխատում հայերին իրենց դաշնակիցը դարձնել:—Նրանք հայերին խոստանում են՝ «թէ՛ մեծութիւն, թէ՛ խազնայ», սակայն հայերը չեն ընդունում և «մեծ թագաւորի ուխտին հաստատ կան» և կռվում են թշնամու դեմ: Սակայն եթե Ռուսաստանից օգնություն չհասնի, հայերը երկար դիմանալ չեն կարող, որովհետև նրա թշնամիները շատացել են: Իսկ եթե հայերին վերացնեն մեջտեղից, հետագայում կայսրության համար շատ մեծ դժվարություններ կստեղծվեն: «Եթե չորս կողմէն անօրէնը գա»,— գրում է նա,— «հայք չեն կարիլ դիմանալ վասն էս պատճառի. որ թագաւոր չունին, կամ խազնայ, կամ ճէպխանայ» (Մեր ժող. էջ 137):

3. Գիլան եկող բոլոր հայ առևտրականները թողնում են իրենց գործը և առանց որևէ շահախնդրության զենք են վերցնում թշնամու դեմ, «և իւրեանց մահն չեն ափսոս գալիս» որ լինի՝ աստուծով՝ յաղթեն զուշմանն» (Մեր ժող. էջ 128):

4. Հայերը ցանկանում են, որ հայ զինվորները ռուսաց բանակում որքան կարելի է շատ լինեն, որպեսզի «ինչ տեղ որ զնալիս լինեն, առաջնորդեն ռուսաց բանակը, որ ոչ մին կողմանէ խաֆիլ պակասութիւն

չհանդիպի, որ ամօթ լինի» (Մեր ժող. էջ 138):

5. Թույլ տրվի հայ զինվորներին թշնամու երկիրը մտնելին թալանել, գերել և զորանալ: «Եւ այլ իմ խնդիրքն այս է՝ մեծ թագաւորէն, երբ մեր հայերն որ կռոււմ են, ինչ ձեռ ընկնի, իւրեանց լինի ճէպխանէն ի գատ, զէրէ փողի և ապրանաց սիրոյ սրտով կուի կու մանում» (Մեր ժող. էջ 138):

6. Թագավորի մահը մեծ տրամաբյուն է առաջացրել հայոց մեջ և ոմանք սկսել են հուսահատվել, անհրաժեշտ է հուսադրական մի նամակ ուղարկել հայոց և քաջալերել նրանց:

7. Եվ, վերջապես, 1701 թվին ինքը Մինաս վարդապետը եկել է հանգուցյալ Պետրոս Մեծի մոտ, նա գրող խոստումներ է տվել և այդ խոստումների համաձայն ինքը մինչև այժմ աշխատում է: Եթե մինչև վերջերս գաղտնի էր պահվում Պետրոս Մեծի խոստումը, ապա այժմ հինգ տարի է, որ բոլոր թշնամիները գիտեն և դրա համար հալածում են հայերին: Եվ անհրաժեշտ է, որ Ռուսաստանը հովանավորի հայոց և վրաց. «Եթէ աստուծոյ ուժովն,—գրում է նա,— ջանք դնէք, որ այս երկու ազգն, վրաց և հայք, որ ձերում թագաւորի ծառայութեան պահէք, աստուծով ամենայն հակառակորդն միջակտուր ամօթ լինելոց են» (Մեր ժող. էջ 140):

Երկրորդ խումբ վավերագրերը կապված են Պարսկաստանի նշանավոր առևտրական Եղիան Մուշեղի անվան հետ: Նա ժամանակին կազմած է եղել զանազան մարդկանց «ուղարկած իր նամակների պատճենների ժողովածուն» (նամականին)՝ երեք հատորից, որոնք Աստրախանում նրա ձեռքակալության ժամանակ բռնագրավվել են իշխանության կողմից և այժմ գտնվում են

ГАФКЭ-ում:

Ի դեպ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Եղիան Մուշեղը հայ հասարակական առաջավոր գործիչներից մեկն է հանդիսացել: Նա Հայաստանի ազատագրության գործը շեշտված ձևով կապած է եղել Պետրոս Մեծի հետ: Այդ երևում է նրա հուշատետրից, ուր գրում է. «...Տէր աստուած, մի ի տասանց կենացն իմոց հատ յինէն և դիր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին: Տէր տուր նմայ առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողու-

թեամբ գայ և ազատէ գմեր ազգն»*):

Մուշեղի նամակներում մանրամասն տեղեկություններ են պահված աղվանների արշավանքի մասին: Նրա մի քանի նամակներին մեջ, որոնք գրվել են աղվանների ասպատակությունների ժամանակ, վերին աստիճանի արժեքավոր նյութեր ենք գրտնում իր ժամանակի պատմական իրադարձությունների մասին: Այսպես օրինակ, նա իր 1722 թվի մարտի 23-ին գրած նամակում հետևյալն է գրում. «Միրվիյսոյ որդի Մահմուտն, 5—6 հազար մարդով եկաւ, Սպահանու երեք աղաճ հեռու նստաւ: Յնչին քաղաքիս ամենայն օմարիքն և որչափ որ ձեռիցն բան եկող որ կան՝ սուտ լինի շիտակ, 40.000 ընտիր մարդկանց կային: Մարտի 8, յետ ԿԱ (61) աւուր կոռնցան, ոչ կարացին դիմանալ, կոտորումն մեծ եղև պարսից, փախան, միայն թէ ղուլար աղասին 500—600 մարդով դիմացաւ և սպանեցաւ: Մնաց 24 թուփ, 30 բեռ արճիճ, հրափող, և այլ ամենայն գանձ և ամէն իբմին ի ձեռն աղուանից, քուլաբանդ արարին քաղաքն, նստան: Մարտի 10 հանեց շահն իւր մեծ որդին, անունն Ապաս Միրզայ, իւրեան տեղն նախպաւթին անէ: Տեւան, որ շատ զօրեղ և հզօր էր: Մարտի 12 կրկին դրին ներս: Մարտի 15 հանեց միւս որդին՝ քան զայն մի տարով փոքր, անունն Սիֆի Միրզա՝ ոչ թե շահ է, այլ թէ փոխանորդ շահին: Այս փոխանորդ Սիֆի Միրզաս, մարտի 18 յեկա օրտում զարկեց Չարպաղն և նստաւ, որ սան տեսնու, կրկին գնալ կուի: Բայց երկնչին և կսպասեն, թէ շուտով հասանեն զօրքն իւրեանց առ ի օգնութիւն տալ: Եւ մինչև ցայսօր ոչ ոք եկաւ օգնել քաղաքիս: Այս մարտի 19 ինքն Մահմուտն, ամենայն զօրք եկաւ մտաւ Ֆարապատ և Զուլայ և նստաւ անդ: Եւ նեղին Զուլայս եղեալ քրիտոնիցն» (Մեր ժող. էջ 70—71):

Նույն դեպքն ավելի մանրամասն ձևով պատմում է Մուշեղն իր 1722 թվի մարտի 31-ին էրզրում՝ Ղազարին գրած նամակում, որն ավելորդ ենք համարում բերել այստեղ:

Նույն տարվա օգոստոսի 14-ին Նղիաս Մուշեղի Լանգլուային գրած մի նամակից երևում է, որ աղվանական վտանգը Պարսկաստանի համար, ուռաական զորքերի միջամտության շնորհիվ, վերացել է: Մու-

*) «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց Նղիայիս» (տես «Հանդէս ամսօրեայ» 1927 թ., էջ 132):

շեղն իր նամակում այդ մասին գրել է Լանգլուային. «Նոր մի նամակ եկաւ Կիլանու, գրած է թէ մին ուռուսի շափառ նաւ յեկա... և գրած է թէ լազկուցն էլ երկյուղ չկայ շունքի ուռուսն գնացել է լազկուն վրայ, որ կոտորել են» (Մեր ժող. էջ 75):

Մուշեղի անվան հետ կապված նորահայտ վավերագրերից արժեքավոր է Մուշեղի եղբոր՝ Գասպարի ոտանավոր նամակը, որտեղ ի միջի ալլոց, գովաբանված է Մոսկվայի արաղը: Մուշեղի եղբոր նամակում մենք կարդում ենք, որ Մուշեղի խմածը՝

Մոսկովիտ արաղ է,

Ամանն կապուտ շուշա է,

Ֆնջանն ալմաստ քար է,

Որ խմողն ուրախ առնէ:

(Մեր ժող. էջ 55):

Նղիաս Մուշեղի մեզ հասած գրական ժառանգությունից արժեքավոր են նաև նրա հաշվեմատյանները, որտեղ մանրամասն տեղեկություններ կան Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքներում վաճառվող ապրանքների, նրանց գների, տարբեր դրամների փոխարաբերությունների, առևտրական ճանապարհների և տնտեսական նշանակություն ունեցող բաղամթիվ այլ խրնդիների մասին: Մուշեղի հաշվեմատյանները կազմված են հետևյալ ձևով.

«Աստծով, եօթն կրանքայ պարութ առի, մի կրանքան մին հարիւր դինով, շամն կանէ ինն հարիւր ութսուն դին»:

Աստծով, լընկերովի շրի ոսկի ծախեցի ին (25) մսխալ, մի մսխալն մին ՌԸԾՄ (1850) դինովն, որ փողի շամն կանէ ԴԶՌԲԾ (46200)»:

«Աստծով, Բ (2) թիմալ ծախեցի ԲՌ (2000) դին, որ Մօսքովու Ժ (10) հատ Շահանի հետ ընկերովի առել էինք»:

Եվ հաշվեմատյաններում այս ձևի հազարավոր հատվածներ կան գրված, որոնք մեզ տալիս են այն ժամանակի Անդրկովկասի տնտեսական կյանքի ամբողջական պատկերը:

Մեր հայտնաբերած նոր նյութերի զգալի մասը կապված է Պետրոս Մեծի էլքի Իվան Կարապետի հետ: Սա այն Կարապետն է, որի միջոցով Պետրոս Մեծն ուղարկեց իր հրովարտակը, հայ ժողովրդին իր հովանավորության տակ վերցնելու առթիվ: Կանգ առնենք Իվան Կարապետի անվան հետ կապված կարևորագույն վավերագրերից մի քանիսի վրա ըստ ժամանակագրա-

կան կարգի և աշխատենք ցույց տալ նրանց արժեքը հայ-ռուս հարաբերությունների համար:

Ինչպես հայտնի է, 1723 թվի հունիսի 3-ին, Արտաքին գործերի դեպարտամենտում, Պետրոս Մեծի, իշխան Ապրակսինի և գաղտնի խորհրդական Տոլստոյի ներկայությամբ քննվում էր Պետրոս Մեծի հայ ժողովրդին տրված հրովարտակը իր հովանավորության տակ վերցնելու մասին և հաստատվում: Նույն նիստում հաստատվում է և Կարապետի ուղեգիրը: Մեր հայտնաբերած ուղեգրին մի վավերագրից երևում է, որ բացի գրավոր հանձնարարություններից, Իվան Կարապետին բանավոր ձևով հանձնարարվել է հայտարարել հայ ժողովրդին հետևյալը. (բերում ենք այն թարգմանաբար). «Հայ ժողովուրդը մեզ գրել է իր մեծագույն հալածանքների մասին... և խնդրել է ուսական հովանավորության տակ մտնել... Կարապետը պիտի նրանց հայտնի, որ նորին Մեծությունն իր հովանավորության տակ է վերցնում և պատրաստ է ազատել նրանց... Բայց նախ ցանկանում է Կասպից ծովի վրա հաստատվել, ապա իր ուժեղ օգնությամբ ազատել հայերին... իսկ դրա համար հայերն իրենց ջանքերը չպիտի թուլացնեն և բոլոր տեսակ միջոցներով պիտի աշխատեն որոշ ժամանակ իրենց պահել: Իսկ եթե այնպիսի մեծ վտանգի ենթարկվեն, որ անհնար լինի աչքի ընկնող և դեկավար մարդկանց մեղքը երկրում, այն դեպքում թող նրանք տեղափոխվեն Կասպից ծովի այն քաղաքները, որոնք գտնվում են ուսաց գերիշխանության տակ, իսկ ժողովրդին պատվիրել որոշ ժամանակ լուռ մնալ» (Մեր ժող., էջ 179):

Մեր հայտնաբերած նյութերից երևում է, որ 1723 թվի հունիսի 6-ին Արտաքին գործերի կոլլեգիայից կանցլեր իշխան Գոլովկինի, Պյոտր Տոլստոյի, Անդրեյ Օստերմանի և Վասիլի Ստեփանովի ստորագրությամբ մի հրամանագիր է ուղարկվել Աստրախան գնեբալ մայոր Մատյուշկինի վրա, որպեսզի նա ապահով ճանապարհով Իվան Կարապետին ուղարկի Հայաստան: Այդ հրամանագիրը հայտնաբերված և տեղավորված է մեր ժողովածվում: Հրամանագրում հանձնարարվում է Մատյուշկինին. «Ежели помятой армянин приедет в Астрахань до отъезда Матюшкина в поход, чтоб оного из Астрахани взял с

собой, и оттуда отправил его к армянскому народу» «եթե նշված հայը կգա Աստրախան մինչև Մատյուշկինի արշավանքի դուրս գալը, այն դեպքում թող նա վերցնի իր հետ Աստրախանից և այնտեղից ուղարկի նրան հայ ժողովրդի մոտ» (Մեր ժող., էջ 180):

Իվան Կարապետը Աստրախան է հասնում 1723 թվի հոկտեմբերի 10-ին: Նա իր գրությունը ներկայացնում է գնեբալ-մայոր Մատյուշկինին, հանձնարարական նամակ է վերցնում նրանից հասցեագրված իշխան Բարյատինսկուն և ճանապարհով գնալի Բագու (Մեր ժող., էջ 180):

1723 թվի նոյեմբերի 28-ին Իվան Կարապետը հասնում է Բագու, 16 օր մնում է այնտեղ, և դեկտեմբերի 14-ին վեց հոգու հետ միասին ճանապարհով գնալի Սրղ-նախները: 28 ժամ ճանապարհ կտրելով գալիս է Միսարի վանքը, գաղտնի մնում 18 օր և ապա ծալված, շաթիրի շորերով, դեկտեմբերի վերջին հասնում Սղնախները: Այդ մասին Կարապետն իր գեկուցման մեջ գրում է. «Բաքոն վեր կացի ԻԸ (28) սահաթում եկինք Միսրոյ մանաստէրն, ԺԸ (18) օրում մանաստէրում կացինք, գաղտուկ, որ մարդ չտես: Մարթ ուղարկեցի Շամախոյ, մին տէրտէր, երկու քաղխողայ եկին մեր կոշտը... Սօրին է մարդին խետ ձեօլ գնացի խալերին Սղնաղն, ու ես շորերս փոխեցի, վարդապետին շաթիր դարձալ, ոտնով գնացի, որ մարթ յիմանալ ոչ... (Մեր ժող., էջ 80: Այս վավերագրի ուղեգրին թարգմանությունը հրատարակել է Նդանո, իսկ հայերենը նոր է հայտնաբերվել մեր կողմից):

Սղնախներում Իվան Կարապետը մնում է մոտ չորս տառի: Գորս տարի գտնվելով Սղնախներում, նա Պետրոս Մեծի արքունիքին գրել և արքունիքից ստացել է բազմաթիվ նամակներ, որոնց մեծ մասը մենք հայտնաբերել ենք և տեղավորել մեր ժողովածուի մեջ:

Այդ նամակները հնարավորություն են տալիս մեզ, ամենից առաջ, պարզությամբ տեսնել այն ժամանակվա Սղնախները և այն ամբողջ աշխատանքը, որ տարել է Պետրոս Մեծի էլլին:

Կարապետի հենց առաջին գեկուցումից երևում է, որ հայկական հինգ Սղնախները մասնատված են եղել առանձին վարչական փոքրիկ միավորների, ամեն մի վարչական միավորի գլուխ է կանգնած եղել մի առանձին մելիք ֆեոդալ, որը և իրեն ենթա-

կա գյուղերին իշխել ու շահագործել է։ Ըստ որում, Հայկական Սղնախները կենտրոնացած մի ղեկավարություն չեն ունեցել, րոնացած մի ղեկավարություն չեն ունեցել, ամեն մեկը առանձնորդվել է իր անձնական շահերով և ղեկավարել է իր հպատակներին կամայականությամբ։ Այդ մասին Կարապետն իր նամակում հետևյալն է գրում. «էս խայրին գլուխ չկայ, առանց գլուխ են, չում ուրենց մեծաւոր շունին» և «ամէն մին մարդ մին երկու գեղ այ գաֆել, ուտում այ» (Մեր ժող., էջ 86)։

Սղնախների մեղքները և յուզբաշխները իրար նկատմամբ գտնվել են թշնամական հարաբերությունների մեջ և Անդրկովկասի մյուս խան ու բեկերի նման զբաղվել են ալան-թալանով։ Մեղքները և յուզբաշխները «տասը—քսան հազար մարդով գնամ ան չափիսուն»,— գրում է էլլին իր 1724 թվի ապրիլի 4-ի զեկուցագրի մեջ։

Ինչպես երևում է, մեղքները հաճախ թալանել, «չափմիշ» են արել ոչ միայն օտարի, այլև իրենց հարևան հայկական շրջանները։ Այսպես, օրինակ, մեղք Բաղրի մասին Կարապետը գրում է. «Յեփ որ ֆրսանթ այ գդաման, գնամունայ խայրին գեղարէնքն չափմիշ անում, և տներն էրումանայ, փախմանայ, մտամունայ բերթն» (Մեր ժող., էջ 81)։

Էլլի Կարապետը տեղ հասնելուն պես շրջել է Սղնախներում, եղել է Գանձասարի նսայի կաթողիկոսի մոտ, ցույց է տվել իր բերած հրովարտակը և աշխատել է գրավոր ձևով ձևակերպել հայկական Սղնախների ուսաց հովանավորության տակ մտնելու հարցը։ Մեղ հաջողվել է արխիվներում հայտնաբերել և տեղավորել մեր ժողովածվում նման բնույթի երկու վավերագիր։ Վավերագրերից մեկում կարգում ենք. «Մենք Դիզաղո և Վարանդոյ երկրիս ուզբաշխքս, թամամի մեծով և փոքրով, վարդապետօք և քահանայիք, մեղքով և քյաղխուղէքով, քէֆխով և ըռայաթով, թամամի մեր ասկարով, ներքո գրեալքս, մեր կամօքն և մեր յօժարութեամբ ծառայ դառնամք մեծ արքային...» (Մեր ժող., էջ 92)։ Վերջում ավելացված է, որ եթե ներանք թագավորի կարգադրության հակառակ քան անեն, կամ չանեն, այն դեպքում «Մեր գլուխն և մեր ապրանքն թագաւորին լինի»։

Նվ երկու վավերագրի վերջումն էլ ստորագրել են բազմաթիվ յուզբաշխներ, մեղքներ և քյաղխուղաներ։

Կարապետի զեկուցագրից երևում է, որ

Ռուսաստանի հովանավորության տակ մըտնելու հարցում ոչ բոլոր յուզբաշխներն են, որ Պետրոս Մեծի հրովարտակի մասին լսելուն պես միակամ իրենց հպատակությունն են հայտնել։ Սկզբում հպատակվել են միայն երեք Սղնախները, մյուս երկու Սղնախները հրաժարվել են հպատակությունից. «Ներք Սղնախն Մեծին արքային հնազանդեցան և երկու Սղնախն հնազանդեցան ոչ» (Մեր ժող., էջ 86), գրում է իր առաջին զեկուցագրի մեջ էլլի Կարապետը։ Չհպատակողներից մեկը հանդիսացել է Չարաբերթի մեղք Սարգիսը, որն ունեցել է պարսկական օրինետացիա, իսկ մյուսը՝ Գյուլստանի մեղք Նսային, որն ունեցել է տաճկական օրինետացիա։

Էլլի Կարապետը, ինչպես երևում է նրա՝ Պետրոս Մեծի արքունիքն ուղարկած զեկուցագրից, չհպատակվող յուզբաշխներին հրապատակության բերելու խնդրում գործ է դրել սպառնալիք։ Էլլի Կարապետն այդ մասին գրում է. «Մին Սղնախն մարդ ուղարկեցի, թէ գաս թագաւորին թաբհ կո դառնաս, քայտա չէ, դամբարո կը շինեմ, կը գոմ բերդթ կո քանդեմ։ Վախեցաւ, արեկ թագաւորին հնազանդեց» (Մեր ժող., էջ 93)։

Այնուհետև մնում էր միայն մեկը, Գյուլիստանը, որի համար գրում է. «Մնացել այ մէկ Սղնախն, որ օսմանլուին այ ուղում, են էլ գօռով կոյ բերեմք մեծ թարէ կոյ շինեմք» (Մեր ժող., էջ 84)։ Նվ, իսկապես, հետևյալ զեկուցումից երևում է, որ նրան հաջողվել է վերջինիս ևս հպատակեցնել։

Էլլի Կարապետը ուսաց հպատակության բերելու հարցում չի սահմանափակվել միայն Սղնախներով։ Նա իր ձեռքը մեկնել է ավելի հեռուն, մինչև Երևան։ Այդ երևում է նրա 1724 թվի ապրիլի զեկուցումից. «Նս մին գիր գրեցի Երևանայ մեծ և փոքրին վերէն թէ խաթիրճամ կացէք, որ մեր թագաւորը շատ այ սիրում ձեզ բարի» (Մեր ժող., էջ 124)։

Իսկ դրանից առաջ, մարտի 13-ին ըստացվել է Սղնախի ալքի ընկնող յուզբաշխների անունով էջմիածնի աթոռակալ Հովասափ վարդապետի, էջմիածնականների և տեղական հայերի անունից գրած մի նամակը, որտեղ նա Պետրոս Մեծի էլլի Կարապետի գալու կապակցությամբ անհրաժեշտ է համարել հայտնել, որ տեղի հայերը «Շատ նեղութեան մէջ են, անպատմելի և անասելի և... միայն հիւսիսայնոցն կու ըս-

պասեն, դոցա օգնականութիւնն և դաշուտն շուտով լինի, քանի որ թշնամեաց ձեռն չենք մատուցել, գերի և աւար չեն հարկաներ, շուտով գային, մեզ այցելութիւն և ազատութիւն լիցի» (Մեր ժող. էջ 118): Հովասափ վարդապետն իր նամակում նաև խնդրում է յուզբաշիններից, որ նրանք նախօրոք տեղեկացնեն էլլիի գալու մասին, որպէսզի տեղացիները պատվովոր ընդունեն նրան. «լաւ մեհմանդար թային անեն, որ գայ, առջնն ընկնի, լաւ աղօթով և պատուով բերեն տեղս» (Մեր ժող. էջ 118):

Մեր հայտնաբերած վավերագրերից երկուսն է, որ էլլի Կարապետը Սղնախներում մեծ աշխատանք է տարել մեկիքների շրջանում՝ իրար հետ կոված, իրար նկատմամբ անհաշտ մեկիքներին իրար մոտ բերելու և հաշտեցնելու գործում: «Ես եկի Սղնախներն, տեսի որ քանի մարդ մինմինո խետ խոռով են, բարիչեցուցի» (Մեր ժող. էջ 94), գրում է էլլին Գանձակի աղբբջանական աղալարներին գրած հորդորական իր նամակում: Եվ նա խորատում է Գանձակի խաններին. «Ես էլ լաւ ամ, որ դուք խայերին ետ մինգմինոյ չափմիջ էք անում, էդ խոռ լաւ չէք անում» (Մեր ժող. էջ 94): Եվ էլլին ամեն կերպ աշխատում է համոզել նրանց, որ նրանք հաշտ ու խաղաղ լինեն հայերի հետ:

Էլլին մեծ ջանք է դնում նաև Գանձակի աղբբջանականներին ուսաց հովանավորութեան տակ վերցնելու գործում: Եվ այդ, ի վերջո, հաջողվում է նրան. Գանձակից մարդ են ուղարկում և իրենց հպատակութունը հայտնում:

Էլլի Կարապետին հաջողվում է նաև բարեկամական հարաբերութուն ստեղծել Ղարաբաղի հայերի և Գանձակի աղբբջանցիների միջև: Հայերը և աղբբջանցիները պայմանավորվում են ո՛չ միայն հաշտ ապրել, այլ և որոշում են իրար օգնել՝ եթե տաճիկները կամ ուրիշ որևէ թշնամի հարձակվելու լինի նրանց վրա: Մոսկվայի արխիվներից մեկում մեզ հաջողվել է հայտնաբերել Ղարաբաղի մեկիքների այդ առթիվ էլլի Կարապետին տված վստահագիրը: Վստահագրում կարդում ենք. «Էս գիրս տիք էլլի բէկ Կարապետին էս ջահտան, որ էլլի բէկն մեզ Գանջեցոց խետ բարիչեցուցանի... որ մինգմինոյ հետ սէր մօհբաթ առենք և մինգմինոյ քօմակ առենք... Թէ օսմանլուի և թէ լազկու ղօշում գայ, մեր հայոց ազգս թամամ ի վերոյ գրեալքս գընան գանջեցոց քօմակ, շուն Գանջա էլ մեր

թագաւորին թաբէ աւ եւ թէ մեզ վըրէն օսմանլու կամ լազգի գայ, գանջեցիք գան մեզ քօմակ» (Մեր ժող. էջ 108):

Անդրկովկասի ժողովուրդների համար ըստեղծված ծանր, կրիտիկական այս շրջանում, երբ Արևելքից տաճիկներն էին գալիս, հյուսիսից լեզգիները, իսկ հարավից պարսիկները, հայերի և աղբբջանցիների գինական այս դաշնադրութունը խիստ կարևոր փաստ է Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի պատմության համար: Նա մի նոր վավերագիր է հայ և աղբբջանական ժողովուրդների միջև անցյալում գոյութուն ունեցող սերտ բարեկամական փոխհարաբերութունների:

Ի դեպ, նորահայտ վավերագրերի մեր ժողովածուի մեջ կան այլ վավերագրեր ևս, որոնք ցույց են տալիս, որ աղբբջանականները ևս ուժեղ կերպով ձգտել են ընդունելու Ռուսաստանի հպատակութունը: Այսպես, Նիազովայի Սադուղ յուզբաշին, հաջի Ահմադի տղան 1724 թվի մարտի 6-ին Դերբենդի ուսաց գեներալին գրած իր նամակում հետևյալն է գրում. «Մեր աչքը սևացավ շատ ձեր ճանապարհին նայելով, շգիտենք ի՞նչ գործի վրայ էք թաղաֆիլ գալ, լա՛ւ չէ, եկէ՛ք, ժամանակ է» (Մեր ժող. էջ 110): Հետաքրքրական է, որ նամակը գրված է հայերեն լեզվով: Հավանական է, որ նրանք վախենալով ճանապարհին բռնվելուց, նրպատակահարմար են համարել գրել հայերեն:

Սադուղ յուզբաշու այս նամակից, ինչպես և Մարտիրոս վարդապետի՝ Դերբենդի ուսաց գեներալին գրած մի այլ նամակից, երևում է, որ այս Սադուղը մի քանի անգամ ազատել է Նիազովայի հայերին կոտորածից: Մարտիրոս վարդապետն այդ մասին գրում է. «Սադուղ ուզբաշին շատ ու շատ մեր քօմակ է, մինչի այսօր մեզ բահել ա» և Մարտիրոս վարդապետը խնդրել է գեներալից. «Մին մատիկ թուղթ գրեք սորա վրան, սրտովամիջ արէք, զմեզ չի թողի կոտորելու» (Մեր ժող. էջ 114):

Մեր հայտնաբերած վավերագրերի մեջ արժեքավոր նյութեր կան նաև հայ-վրացական հարաբերութունների մասին: Պարզվում է, որ երբ Կարապետը հասնում է Սղնախները և այդ մասին լուրը հասնում է վրաց վախտանգ խանին, որը հերոսական և անհավասար կռիվ էր մղում տաճիկական և պարսկական բռնակալութունների դեմ՝ աշխատելով վրաստանն ազատագրել ուսաց օգնութեամբ, նա էլլի Կարապետի մոտ

պատգամավոր է ուղարկում Նիկոլ Սահապաճեանի և հետաքրքրվում Կարապետի միկաճին և վախտանգ խանը իր նամակում, սխալով: Վախտանգ խանը իր նամակում, որը թվագրված է 1724 թվի մարտի 2, էլի որը Կարապետից խնդրում է. «Պիտի որ ձեր ամենայն խապար, ամենայն ահվալ հայելար գրէք և մեզ հասցնէք, ոնց որ դուք էդտեղ էգել էք, տեսնենք թագաւորի հրամանն ի՞նչ ա»: Վախտանգ խանը, միաժամանակ խնդրել է Կարապետից, որ նա նամակ գրի Պետրոս Մեծին, որպեսզի վերջինս «մէկ փիքը քաշէ» նրա համար, որովհետև վախտանգը շատ է նեղվում (Մեր ժող. էջ 105):

Էլի Կարապետը Նիկոլին ցույց է տալիս իր հրովարտակը, մանրամասն պատմում իր միսիայի մասին, իսկ Վախտանգին ուղարկած նամակում գրում է միայն այն մտահոգութեան մասին, որն ունի Պետրոս Մեծը նրա նկատմամբ. «Ժմ մեծաւորն» (այսինքն Պետրոս Մեծը — Ա. Ա.), գրում է նա Վախտանգ խանին, «ձեր կոնթէ շատ ֆիքրում էր, եարաք ի՞նչպէս ան, շատ նիգարան էր, էշալայ, որ ձեր գրած գիրն ուղարկեցի, որ տեսնի, ձեր խօշխալ կոյ լինի» (Մեր ժող. էջ 107):

Կարապետը Նիկոլից հարցրել և մանրամասն գրի է առել նրա տված տեղեկությունները տաճկական մասի Վրաստանում ունեցած զորքերի և զինվածության մասին: Այդ վավերագիրը ևս հայտնաբերված է մեր կողմից:

Նյութական վրաց և ադրբեջանցի ժողովուրդներին վերաբերող այս և մի քանի այլ վավերագրերը, որոնք հայտնաբերված են մեր կողմից, բացառիկ արժեք ունեն Անդրկովկասի ժողովուրդների պատմության համար:

Էլի Կարապետի նորահայտ մի զեկուցումից երևում է, որ Պետրոս Մեծի արգունիքը հետաքրքրվել է Հայաստանի բնական հարստություններով և Կարապետն անհրաժեշտ է համարել կանգ առնել այդ խնդրի վրա. «Էս երկրումս առճճի մադան շատ կայ», գրում է նա, — «հենց մադան կայ, որ յեփ խալես, կէս վը կէս դուրս կը գոյ, և պղնձին և արկաթին շափ չկայ, և զօրայ շատ, անխէսար: Եւ մէշա էլ կայ, ամայ ուրենք խաբար չեն և մադան ունեն, բանացնում չեն» (Մեր ժող. էջ 86):

Պետրոս Մեծի արքունիքը հետաքրքրվել է նախ հայկական Սղնախների գինական ուժով, ցանկացել է իմանալ նրա քանակը, որքան հեծյալ և հետևակ զորք ունեն նրանք: Այդ մասին Սղնախի Ֆելիքներն իրենց ծածկագիրն նամակում, որ թվագրված

է 1724 թվի մարտի 3, Պետրոս Մեծին հետևյալն են գրել. «Էստեղ խրիդ շատ կայ, փող փոքր ունենք, որ իմանաք, իմ (20.000) ըռսթլայ խրիդ ենք արարել, ճմ (10.000) փողն տուել ենք, իմ (5.000) նիսեայ ենք առել... խնդրեմք հրամանոցէդ, որ թէ հրամանքդ գաս Շամախի կամ մարթ աղարկես, մեք խաթըրջամ լինեմք, մեր խրիդն մեր ձեռնեն տանեն ոչ» (Մեր ժող. էջ 109): Այստեղ ուրվին գործ է ածված զինվորի իմաստով, իսկ խրիդը — զորամասի:

Չորրորդ խումբ վավերագրերը կողմնակի մարդկանց կողմից գրված, բայց հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական կացությանը վերաբերող վավերագրեր են:

Այս խմբի վավերագրերի թվումն է ոմն Եսայու Քիֆլիսից Գանձակի իր բարեկամներին՝ Սարգսին, Աբրահամին և Եսայուն գրած նամակը: Նա այդ նամակը գրել է 1724 թվի հունիսի 12-ին Պոլսում, Ռուսաստանի և Թյուրքիայի միջև կնքված պայմանագրից անմիջապես հետո: Եսային կնքված պայմանագրի մասին գրում է. «Նոր շափար եկաւ փաթիշահէն, որը ըրաղամ բերաւ, բաց կարդացին, գրել էր թէ... բարի շեցի, Դարբանդ, Բաքոյ, Գիւլան, Արսախէն դէն ռուս թագաւորն վեր առաւ, Մսկուրայ վերն, Շամախոյդ դէսն, թամամ Դաղըստանաւ Գանջայ, Գորջըստան, Էրեւան խոնթկարըն» (Մեր ժող. էջ 101):

Այս դաշնադրությունից հետո, ինչպես հայտնի է, Վախտանգ խանը թողեց Վրաստանը և իր կուսակիցներով տեղափոխվեց Աստրախան: Տաճկները վերցրին Երևանը, Նախիջևանը և սկսեցին իրենց արշավանքները դեպի Ղարաբաղ: Ղարաբաղում միայնակ մնացած մի բուռն հայություն սկսեց երկարամյա և արյունալի պատերազմ տաճկական կազմակերպված բանակների դեմ:

Ղարաբաղի հայերը տաճկաց դեմ մղված այս պատերազմում ցույց տվին բացառիկ հերոսություն և համառություն: Նրանք ոչ միայն քաջաբար կարողացան պաշտպանվել, այլ և ժամանակ առ ժամանակ ջարդում էին տաճկական բանակները: Այդ տեսակետից ուշագրավ է 1725 թվի գարնանը հայերի՝ տաճկաց համար պատրաստած ծուղակը: Տաճկական հինգ հազարանոց մի բանակ մտնում է Ղարաբաղ: Հայերը խորամանկությամբ կոտորում են դրանց՝ կեղծ հպատակություն ցույց տալով և ընդունելով իրենց մոտ:

Մեր հայտնաբերած հայատառ ուսանելի

մի նամակից, որ գրել է Մարտիրոս Եպիսկոպոսը Պետրոսի արքունիքին 1726 թվի մարտի 8-ին, երևում է, որ տաճիկները ծրագրած են եղել նախ՝ դուրս գալ դեպի Կասպից ծով, բայց միևնույն ժամանակ չցանկանալով իրենց թիկունքում թողնել այնպիսի սպառնական ուժ, ինչպիսին Սղնախնե-րինն է, ուստի և ամեն կերպ աշխատել են վերացնել այն։ Մարտիրոս Եպիսկոպոսը իր հայատառ ուսանողներին նամակում նշում է, որ Գանձակից հայ առևտրականներ են եկել, որոնք պատմում են տաճիկների մտադրության մասին հետևյալը (բերում ենք այն ձևով, ինչ ձևով գրված է վավերագրում)։ «Նաշ նամերենիայ տոտ (խոսքը տաճիկների մասին է— Ա. Ա.) շտոբըլ նա արմեանցկի սաբրանի իդտի, կակ էտայ վոզմեոմ, Թուփեր ըստրպում Շամախի, ի Բաքու ըստանեմ վզատ» (Մեր մտադրությունն է, որպեսզի նախ զնալ հայկական շրջանների վրա (բառացի հայկական հավաքույթի վրա), հենց որ նրանք վերցրինք, այնուհետև կըմտնենք Շամախի, և Բազուն էլ կվերցնենք) (Մեր ժող. էջ 156)։

Վերջին խմբի վավերագրերի մեջ արժեքավոր է նաև ուսոխների՝ 1724 թվի մարտի 20-ին Պետրոս Մեծին ուղարկած դիմումը։ Ուսոխները իրենց դիմումի մեջ, ի միջի այլոց, գրել են. «Մեք աղուանք եմք և ազգով ուղիք, Նղիշէի Առաքելոյն քարոզութեամբն մեր նախնիքն աստուած հաւատացեալք են, սուրբ առաքելոցն նահատակութեան տեղիքն առ մեզ է, քո հրամանոցն յայտնի է, որ յառաջէ մեր ազգին իշխանութիւն ոչ կայր, որ սուրբ առաքելոյն նահատակութեան տեղն փառաւոր վանք շինէինք, միայն թէ մեր նախնիքն մին փոքր եկեղեցի շինեալ էին, մեք նովաւ կեանք էինք անցուցանում, այժմ այրեցին և մեզ զորով ուրացուցին... հիմա լսեցինք, որ սայուլու տուն մեր գլուխն կոխելու գալիս է։ Մեր աչքն լոյս, կու խնդրեմք ի Քրիստոսէ, որ մեր կեանքն կարճ առնէ և հրամանոց կեանքն երկար արասցէ, որ զմեզ ի գերութենէ ազատիս...» (Մեր ժող. էջ 120)։

Ընդհանրապես ուսոխների մասին պատմական քիչ տեղեկություններ կան և այս վավերագիրը վերին աստիճանի արժեքավոր է նրանց պատմության համար։

Վերջին խմբի վավերագրերի մեջ կան նաև այնպիսիները, որոնք արժեքավոր են Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության համար։ Այդ

կարգի վավերագրերից են տիրոջ և ծառայի միջև կնքված երկու պայմանագիր, մեկը՝ 1716 թվի, իսկ մյուսը՝ 1718 թվի։ Այս պայմանագիրը տիրոջ և ծառայի միջև կնքված մեզ հասած հնագույն պայմանագիրն է հանդիսանում։ Հնում աղաները ծառաների հետ իրավահավասար կողմ չէին համարվում և նրանց հետ, սովորաբար, գրավոր պայմանագրեր չէին կնքում։ Այս երկու պայմանագրերը, մեր մատենագրության պատմության մեջ, բախտավոր բացառություններ են հանդիսանում։ Ըստ պայմանագրի, տերը ծառայից պահանջում էր, որ նա իր «հոգևոր կամքը կատարի»։ «Խմելիք շիմի, թամբաբու չըաշի, լեզու չտայ... տան սրբը դուրս չտանի, վաղախալֆ դուրս չենէ, շարութիւն, խալուսութիւն չառի, իմ սիրելոյն սիրել և իմ ատելոյն ատելի լինի» (Մեր ժող. էջ 58)։ Ավելին, ծառան, ինչպես երևում է պայմանագրից, պարտավոր էր և տիրոջ համար մատնություններ ղրաղվել։ Պայմանագրում ծառայի այդ «պարտականությունը» ձևակերպված է այսպես. «Իմ (այսինքն տիրոջ—Ա. Ա.) բարեկամն և թրշնամին ինձ ծանուցանի»։ Ճիշտ է, պայմանագիրը կնքված է Մոսկվայում և արտացոլում է այնտեղ գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, սակայն այնքան, որքան կնքված է Հայաստանից Մոսկվա գնացած հայ աղայի և նոքյարի միջև, պիտի ենթադրել, որ այդ հարաբերությունները խորթ չէին և բուն Հայաստանի համար։

Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության համար արժեքավոր է մեր ժողովածուի մի այլ վավերագիրը՝ մոր նամակը իր տղաներին՝ Շահինին և Գիրումին, որը սկզբից մինչև վերջ գանգատ է պարտատիրոջ հասցնին. «Այստեղ մարթի արեխներք ցերի ին աւնում, տանում», գրում է մայրն իր որդիներին, «հայրն գնում ա, տասը, տասը հինգ թուման տալիս, ազատում, բերում։ Մենք այլ գերի ենք պարտապանի ձեռաց, դուք այլ զմեզ ազատ արարէք» (Մեր ժող. էջ 143)։

Մեր մայրաքաղաքի՝ Երևանի պատմության համար արժեքավոր է մեր ժողովածուի մեջ մտնող Մեղքոնի նամակը նշանավոր առևտրական Նղիաս Մուշեղին։ Նամակում արժեքավոր տեղեկություններ կան որոշ ապրանքների գների և ձկնավաճառության մասին։



Սակայն մեր հայտնաբերած վավերագրերի նշանակությունը չի սահմանափակվում միայն նրանց ունեցած պատմական նշանակությամբ։ Վավերագրերը արժեքավոր են լեզվի, քերականության և կենցաղի ուսումնասիրության համար։ Մեզ մոտ, սովորաբար, աշխարհաբարի մասին խոսելիս շեշտ է դրվում Արովյանի վրա։ Բայց Արովյանից շատ առաջ, ինչպես մենք տեսնում ենք վավերագրերում գործածված լեզվից, դարաբաղի բարբառը Արևելյան Հայաստանում նամակագրության մեջ գործածված բարբառներից մեկն է հանդիսացել։

Կարելի է կանգ առնել վավերագրերի ունեցած այլ արժեքների վրա ևս, բայց կարծում ենք, բերված փաստերը բավական են պատշաճ ձևով զնահատելու հայտնաբերված վավերագրերի նշանակությունը մեր մոտիվ անցյալի պատմության համար։ Նրանք արժեքավոր են ինչպես մեր քաղաքական պատմության, այնպես և մեր սոցիալ-տնտեսական կյանքի, մեր լեզվի պատմության համար։

Սակայն այդ բոլորի մեջ ամենակարևորը վավերագրերի ունեցած մեծ նշանակությունն է հայ-ռուս բարեկամական հարաբերությունների պատմության համար։

Պետրոս Մեծի ժամանակ և նրանից հետո բազմաթիվ հայ հասարակական գործիչներ պայքարեցին և երազեցին հայ ժողովրդի քաղաքական ազատագրությունը։ Այդ ձգտումների պատկերավոր օրինակը մեզ տալիս է Նղիաս Մուշեղը, որը իր ձեռքով գրած հուշատետրում խոստանում է «աստծոմն տալ» իր ամբողջ կյանքը մի ժամ միայն Հայաստանի քաղաքական անկախությունը տեսնելու պայմանով։ Սակայն Մուշեղին և նման հարյուրավոր հայրենասերներին վիճակված չէր տեսնել հայ ժողովրդի քաղաքական անկախությունը։ Այդ հնարավոր դարձավ միայն սովետական իշխանության ժամանակ, նոյեմբերյան ռևոլյուցիայի կենսատու արևի տակ ուսումնառելով ժողովրդի ղործնական օգնության շնորհիվ։



«Մագիստրոսի ճեմարանը» Սաեանի վանքում



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԱԶԱԽՏ ՏԻՏՈՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Մարաջախտ Տիտոն խոսելով Յուզոսլավ և Սովետ պահանջների մասին, ի միջի այլոց ասաց թե.—

«Հայ ժողովուրդը երկու պատերազմների ընթացքին միշտ կանոնադր է եղել դաշնա-

կիցների կողքին և միշտ տանջվել է նրանց դատի համար:

Հայ ժողովուրդի արդար իրավունքն է մի մեծ Հայաստան ունենալը:

(Ելեհաձայնող՝ թիվ 1345 Թեհրան)

ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԺՈՒԹՈՒՆ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Աշխարհահռչակ գիտնական պրոֆեսոր Ժոլիո Կյուրին, որ տնտեսն է Ֆրանսիայի Գիտական հետազոտության կենդրոնի, հետևյալ սրտազին խոսքերով ողջունած է Սովետ Հայաստանի 25-ամյակի տարեդարձը:

«Սովետ Հայաստանի Հանրապետության 25-րդ տարեդարձի առթիվ ուրախությամբ է, որ այս քանի մը խոսքերը կուղղվեմ իրեն:

«Մարտիրոս ժողովուրդ մը, որ իր դարավոր պատմության ընթացքին հոգիով ու մարմնով տառապած է ամեն տեսակ խեղճությունների և կոտորածների, քանհինդ տարին ի վեր վերջապես գտած է իր փրկությունը:

«Սովետ Միության ծոցին մեջ Հայաստանը յուրյն տվավ մեծ հաղթանակություն մը տնտեսական և մշակութային մարզերուն մեջ:

«Սրտանց կմաղթեմ, որ 1914—1918-ի

դեպքերեն հտք, ամբողջ աշխարհի մեջ ցրված հայերը, իրենց ներկա հայրենիքին մեջ գտնեն վերածնության կենդրոն մը և հոն ապրելու կարելիությունը, զարգացնելու համար իրենց նախահայրերուն երիցս հազարամյա ստեղծագործության արժանի քաղաքակրթություն մը:

«Մենք շահագրգռությամբ և համակրությամբ կհետևինք Սովետ Հայաստանի հաղաթանակության:

«Ֆրանսան ուրիշ բան չի կրնար ընել, եթե ոչ քաջայերել ժողովուրդ մը, որ միշտ իր կողքին գտնված է և իր մշակութային ներկայացուցած է Մերձավոր Արևելքի մեջ:

«Ոչ մեկ տարակարծություն երբեք չի լինի ունեցած է այս երկու ժողովուրդներուն միջև, և փոխադարձ համակրությունը ի հայտ եկած է զանազան ձևերով:

(«Ժողովուրդի ձայն» փետր. 17 1946 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆ ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԲՈՎ

Մվարած Փոքր Կովկասի լեռանց և սարահարթերուն մեջ, Վրաստանի հարավային արևելյան կողմը կգտնվի ն. Հայաստանի Ընկերվարական Հանրապետությունը, որ ունենալով մոտավորապես Պեճիքայի մեծությունը, հորհրդային Միությանց ամենեւի փոքրն է: Իր բնակչությունը շուրջ 1.300.000 է, դիտավորապես Հաբեթական ցեղը և Հայկական ազգութենն կազմված: Բայց ուրիշ մեկ միլիոն հորհրդային Հայեր այս հանրապետության սահմաններեն դուրս կապ-

րին, որոնց մեծամասնությունը դրացի Վրաստանի և Ադրպեյճանի մեջ է: Հայաստանի մայրաքաղաքն է Երևան, որ ժողովակերեսն 3.200 ոտք բարձր է: Հայաստան ունի երկար և խոլավահույժ պատմություն մը, որ կսկսի Քրիստոսն առնվազն 1500 տարի առաջ, երբ Հեթիթներու շառավիղ մը կբնակեր հոն: Ի վերջո ասոնք խառնվեցան Մեդացիոց, Պարսկաց, Հուճաց և ուրիշ հեթանոս ցեղերու հետ և կազմեցին հայկական հիմնական տիպը: Քսենոփոն և իր Տասն

Հազարը, Քրիստոս 401 տարի առաջ, կրովելով Հայաստանի մեջն անցան, և Հունաց մեծն Աղեքսանդրը ներմուծեց զայն արևմտյան քաղաքակրթության գլխավոր հոսանքին մեջ, երբ ան նվաճեց այս մահանգը պարսկական կայսրութենեն՝ Քրիստոսից 331 տարի առաջ։ Առաջին դարեն սկսյալ՝ նախ քան Քրիստոս, հաղթողներու հաղթող Հռոմայեցիները ընդմիջաբար տիրեցին Հայաստանի զինուց զորութեամբ, թեև ազատասեր Հայերը իրենց ամենամեծ զորութեան շրջաններուն կրցան անկախ թագավորութիւն մը պահել, որ երբեմն տարածվեցավ Սև ծովէն մինչև Կասպից ծով։

Քրիստոսի 303 թվականին, Հայաստան անցուց լուրջ դարաշրջան մը, երբ առաջին ազգը հանդիսացավ պատմութեան մեջ, որ ընդունեց քրիստոնեութիւնը իբրև պետական կրօն։ Հռոմեական կայսրութիւնը շուտով հետևեցավ անոր, բայց նույն դարուն վերջը հայկական եկեղեցին խզեց իր կապերը ուղղափառ եկեղեցիին հետ և մինչև այսօր կմնա ինքնավար քրիստոնեական եկեղեցի մը։ Քրիստոնեութեան շրջանին դարերով տառապող Հայերը պատերազմեցան ասպատակչներու հաջորդական ալիքներուն դէմ։

1926-են մինչև 1939 Հայաստանի Խ. Ս. Հանրապետութեան բնակչութիւնը ավելացած է ավելի քան 45 առ հարյուր, չափաւիշ, որ ավելի բարձր է քան Միութեան ուրիշ որեւէ հանրապետութեան աճումը։ Երեւան, որ այսօր կճանչցվի հայկական մշակութի կեդրոնը, 1914 թվականի 29.000 բնակչութենէն 1937-ին բարձրացած էր 150.000-ի։

Այս քաղաքը կներկայացնէ Խ. Ս. Հանրապետութեանց Միութեան ամենն ընտիր և արդիական ճարտարապետութեան ծաղկումի տեսարանը։ Նոր շինութիւններէն շատերը կառուցված են Հայաստանի հատկանշական վարդապետին փխրաքարէն (տուֆ), որ հաճելի է աչքերու. կարելի է սողցել զայն դանազան ձևերով, և ավելի թեթև է, բայց նույն աստիճանով զորավոր սովորական քարէն կամ կղմինտրէն։

Հայ մը, որուն անունը հաճախ կհիշատակվի սովետ պատերազմական հաղորդա-

գրութեանց մեջ, Կարմիր Բանակի զորավար Հովհաննէս Բաղդամյանն է։ Հայաստանի ականավոր ուրիշ բնիկ հայ մըն է Կարո Ս. Հալապյանը, որ Նյու-Յորքի համաշխարհային ցուցահանդեսի սովետական պալատի զործակից ճարտարապետը և Ստալինկրատի վերակառուցման ճարտարապետներու հանձնաժողովի պետն է։

Վրաստանի նման, Հայաստան գերազանցողին երկրագործական երկիր մըն էր առաջին համաշխարհային պատերազմէն առաջ, բայց անկէ ի վեր ճարտարարվեստական կարևոր զարգացման հասած է. անոր տնտեսութեան, ճարտարարվեստական արտադրութեան համեմատութիւնը բարձրացած է 21,7 առ հարյուրէն մինչև 71,6 առ հարյուր՝ 1913-ի և 1937-ի միջև։ Զուգընթացաբար իր երկրագործութիւնը ամբողջովին արդիականացած է։ Բամբակի դաշտերը, այգիները, մրգաստանները, ծխախոտի մշակավայրերը և արջառաքածարանները կազմակերպված են հավաքական հիմքով։ Վրա։ Երկրագործական արտադրութիւնը շոշափելիորեն ավելացած է ոռոգման մեծ ձեռնարկութիւններով։

Անոնցմէ ամենն տպավորիչը այն ծրագիրն է, որ ի գործ կդրվի օգտագործելու համար Սեան լճի հոսանքը, որ աշխարհի ամենն մեծ և ամենն գեղեցիկ լեռնային բարձր լիճերէն մեկն է։ Անոր հյուսիսային անկյան վրա հրաբխային լքված կղզեկի մը մեջ կբարձրանա հայկական հին վանք մը, որ կառուցված է ավելի քան 1.500 տարիներ առաջ։ Մրագրված է օգտագործել Սեանա լճի ջրին մեկ մասը, որմէ տարեկան 300.000 կայուն կշռքանա, ընդարձակելու նատաակով Զանգու գետի ծավալը, և արտախոյսով աստիճանաբար և ճշգրտորեն համասարակշռելու լճի գոյորդիացումը և անոր ջրային պարունակութիւնը։

Զանգու գետի արագ հոսանքը ուժ կմատակարարէ ջրաէլեկտրական մեծ հաստատութեանց համար, որոնցմէ մեկը արդեն նշանավոր դարձած է կրթաբոլմ համադրական ձգախեղ արտադրելուն համար։

ՔՈՐԼԻՍ ԱՄՈՆԹ

«Սովետի Ռաիա Թուտե»-ի

(«Նոր օր» փետրվ. 9 1946 թ. Յրեզն)

ՆՈՐ ԼՈՒՍԱՐԱՅ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՀԱՄԱՐ

«Ա. ՊՈՒՐՍ ԷԺԻՐՄԻՆ» իր 22 դեկտ. թվին մեջ վերևի խորագրով Հայոց համար համակրալից և արդարակորով խմբագրական մը հրատարակած էր իր խմբագրապետ Պ.

Ժան Լյուկովի ստորագրութեան տակ։ Ահա-վստիկ ամբողջական թարգմանութիւնը.

Մեր համակրանքին արժանանալու այնքան պատճառներ ունեցող ազգի մը երկար

ու վշտալի պատմությունը արդյոք պիտի փակվի՞ վերջապես: Հայերը — որոնց աստվածաշնչական ծագմամբ անունը՝ Արամ կհիշեցնե հնագույն դարերը — պիտի կարենա՞ն վերջապես համախմբվիլ և խաղաղության մեջ ապրիլ հայրենի հողին վրա: Այս հարցերը, և շատ ուրիշ հարցեր ալ, կրնանք ուղղել մենք մեզի այն պահուն՝ երբ Խորհրդային Միությունը կշահա Երևանի Սովետական հանրապետության մեջ հավաքել սփյուռքի հայերը: Ըստ կարգ մը թվերու 1.400.000 հայեր հաստատված են բուն իսկ Հայաստանի մեջ, 800.000 Կովկասի և սովետական զանազան հանրապետություններու մեջ և շուրջ 800.000 աշխարհի մնացյալ մասին մեջ:

Այս արևելյան ժողովրդին մարտիրոսությունը ծանոթ է: Համաշխարհային առաջին պատերազմին ընթացքին ան կգտնվիր ուսու և թուրք ռազմաբեմին վրա: Հուսահատ, Օսմանյան կայսրությունը, որուն գեշ խորատներ տվին գերման զորավարները, ձեռնարկեց պարպելու այդ հեռավոր նահանգներու բնակչությունները: Տեղահանությունը, սպանություններու և գրկանքներու հետ միասին, սարսափելի եղավ. ըստ հայկական աղբյուրներու՝ մեկ միլիոն ավելի զոհեր եղան այդ ժամանակ: 1918-ի դաշնակից հաղթանակին հոք ֆրանսական զորքեր գերավեցին Կիլիկիան, զոր հետո ստիպվեցան թողուլ Մուստաֆա Քեմալի հետ համաձայնելի վերջ. ֆրանսա Սուրիո և Լիբանանի մեջ տեղավորեց շուրջ 200.000 գաղթականներ, որոնք հաստատվեցան հողատարության ենթակա այդ երկրներու մեջ: Մեծն Բրիտանիա անոնց առջև բացավ Կիպրոսը: Պաղեստինը, Սուդանը, Նիլոսի, համառ աշխատանք, սակավապետ ցեղ — ինչպես հալածված բոլոր ժողովուրդները — այդ հայերը շուտով իրենց համար ստեղծեցին նոր և հարաբերաբար խաղաղ կյանք մը: Անկե ի վեր քիչ խռովեցավ իրենց մասին:

Վերջերս միայն, երբ աշխարհը հանկարծ վերհիշեց թուրք և սովետական դրախտությունը, հայկական հարցը երևան եկավ: Անիկա երկու երևույթ ունի՝ ազդաբնակչական և հողային: Մեկ կողմն՝ Հայաստանի սովետական հանրապետությունը կուզե զորացնել իր մարդկային կարողությունը իրեն կանչելով սփյուռքի բոլոր գաղութները, և մյուս կողմն՝ ըստ կաթողիկոս Գևորգ Զ-ի կողմն Երեք Մեծերուն ուղղած պահանջի մը՝ ան կպահանջե վերադարձը «Թուրքիո կողմն բռնագրավված հողերուն և հատուցում այն պատմական մեծ անարդա-

րության համար, որ գործուած է հայ ժողովրդին հանդեպ»:

Մանոթ է թե այդ արարքը գործնական ի՞նչ հետևանքներ ունեցավ:

Խորհրդային Միության դեսպանատներն ու հյուպատոսարանները հրահանգ ստացան հայրենիք վերադարձնել ախ բոլոր հայերը, որ կհափաքին վերադառնալու Հյուպատոսական և մաքսային ձևակերպությունները նվազագույնին իջեցված են:

Կթվի թե Անկարա գեշ աշքով կդիտե այս զանգվածային գաղթը, հայտնապես՝ Թուրքիա ի վիճակի չէ ատոր ընդիմանալու: Սուրիո և Լիբանանի մեջ պաշտոնական ոչ մեկ հակադրեցություն կմատնանշվի տակավին:

Հարկ կա՞ կրկնելու թե պետք է մեծ համակրանքով մը ողջունել ցեղային այս ընդարձակ շարժումը, որ բաց աստի, կհարուցանե շարք մը հարակից հարցեր: Հուսանք միայն, որ անիկա կարենա ամենուրեք կատարվիլ առանց բախումների, վասնզի հայերը, որոնք կերթան, պետք չէ մոռնան, թե իրենց ետին պիտի ձգեն համայնքներ, որոնք կոչված են ապրելու ասպնջական ժողովուրդներուն միջև, որոնք ընդունած են զիրենք:

Պետք է մանավանդ խուսափիլ գաղափարաբանական բնույթ մը տալն այս տեղափոխությանց, որոնք ուզվի կամ ոչ, կդիպչին մեծ և փոքր տերությունց շահերուն:

Հայերը, ինչպես դժբախտության մեջ իրենց եղբայրները՝ հրեաները, պետք է ավելի քան երբեք հետևեն Երեմիա մարգարեին հռչակավոր հանձնարարության Բաբելոնի աքսորականներուն. «Աղոթեցե՛ք խաղաղությանը համար թագավորության ուր հաստատած պիտի ըլլամ զձեզ. վասնզի իր խաղաղությունը ձե՛ր խաղաղությունն է»:

Այս հոգվածին եզրակացությունը պարզ պիտի ըլլա. պետք է դարմանել անհամար անարդարությունները, որոնց գոհ է եղած հայ ազգը այնքան երկար ժամանակ և մրստահ ենք, թե նոր Թուրքիան իր օժանդակությունը պիտի բերե այս անհրաժեշտ գործին: Անիկա պետք է կարենա մեծնալ և բարձրանալ իր նախահարեբուն հողին վրա:

Այս զույգ նշանակետը պետք է միշտ ներկա ըլլա մտքին մեջ պատասխանատու մարդոց, որոնք հոս և այլուր առաքելությունը ունին Հայաստանը առաջնորդելու վերածնունդի ճամբուն մեջ:

ԺԱՆ ԼՅՈՒԿՈՒ

(«Առաւօտ» հունվ. 1 1946 թ.)

ԱՐԱՐ ՄԱՍՈՒԼԸ ՆԵՐԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Հայկա հրատարակվող «ԷԼ ՀԱՎԱՏԵՍ» ա-
րաբ օրաթերթը իր 1946 թ. փետրվարի 18-ի
թվով, Ներգաղթի արձանագրությանց առի-
թով փնտհատական հետևյալ ջերմ տողերը
կարձանագրե հայերու հասցեին.—

«Մեր թղթակիցը կտեղեկացնե, թե Սովետ
Հայաստան մեկնիլ փափաքողներուն արձա-
նագրության գործը շատ կանոնավոր կեր-
պով առաջ կտարվի և թե ներգաղթի Կոմի-
տեի Հայկալի մասնաճյուղը իր անդամներեն
ոմանք ձեզիդեի և Նփրատի շրջանները
պիտի դրկե, հոն ևս արձանագրությանց
սկսելու համար»

«Այս առթիվ պիտի փափաքեինք այս երկ-
րին լիակատար գոհունակությունն ու գնա-
հատանքը արտահայտել արձանագրվողնե-
րուն և իրենց հոս մնացած կարճատև ժա-
մանկամիջոցին հայտնաբերած վարվելա-
կերպին համար: Անոնք փաստեցին թե իս-
կական քաղաքացիներն են այս երկրին, որ
ջերմորեն ողջագուրեց զիրենք և բնակատեղի
հայթայթեց իրենց»

«Անոնց մեկնումեն ետք, մեծ պակասը

պիտի զգանք անոնց արդյունաբերական
ձիրքերուն, որոնք այնքան մեծ դեր խաղա-
ցին մեր երկրին մեքենական արդյունաբե-
րության և ձեռային աշխատանքի գոր-
ծին մեջ:

«Բայց միաժամանակ շենք կրնար դեմ կե-
նալ իրենց առաջին հայրենիքին մեջ, իրենց
հայ եղբայրներուն հետ մեկտեղություն փա-
փաքին»

«Իրենց կմաղթենք ամեն երջանկություն
իրենց առաջին հայրենիքին մեջ, զանոնք
նկատելով տևական բարեկամության պատ-
գամավորները այս երկու ժողովուրդներուն
միջև, որոնք երկար ատեն պայքարեցան ի-
րենց գերիշխանություն, ազատության և
անկախության համար»

Սուրիացիներն ու սուրիական կառավա-
րությունը կհուսան ու սրտանց կմաղթեն,
որ իրագործվին հայերու հառաջադիմու-
թյան, մեծության և հողային ծավալումի
բաղձանքները:

(«Ժողովուրդի ձայն» մարտ 6 1946 թ.)

«ԷԼ ԱՅՐԱՄ» ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Եզրպատուի «ԷԼ ԱՅՐԱՄ» թերթը կգրե.—

Հայ Ազգային Խորհուրդը՝ Լոնտոնի մեջ
գումարված Միացյալ Ազգերու Կազմակեր-
պության ուղղած է մանրամասն հուշագիր
մը որուն մեջ կպարզե Հայկական Դատին
ճարգացումը Առաջին Համաշխարհային Պա-
տերազմին վերջավորութենեն ի վեր, և
կմատնանջե Հայոց կրած նեղությունները
և ըրած զոհաբերությունը:

Հուշագրին մեջ ըսված է թե Ռուսական
ճակատին վրա կուվող Հայ զինվորը կար-
միր դրոշը Պերլինի վրա առաջին բարձրա-
ցողներեն՝ եղավ: Մինչ ուրիշ Հայեր Ամերիկ-
յան Բանակին և դեռ ուրիշներ Ֆրանսական
Բանակին մեջ կուվեցան թշնամիին դեմ:

Հայ ժողովուրդը իր Սովետական հայրե-
նիքին մեջ մեծ հառաջադիմություններ ար-
ձանագրեց գիտության, արվեստի, գրակա-
նության և ճարտարարվեստի բնագավառնե-
րուն մեջ:

Իսկ արտասահմանի մեջ ցրված բոլոր
Հայերը, որոնց թիվը մեկ ու կես միլիոնի
կհասնի, ջերմորեն կբաղձան իրենց երկիրը
վերադառնալ: Սակայն Սովետ Հայաստանը
փոքր ըլլալով, չի կրնար բովանդակել ամ-

բողջ Հայ ժողովուրդը: Ուստի անհրաժեշտ
է, որ նախապես Հայերն բնակված շրջաննե-
րը Հայկական Պետության կցվին»:

Հետո հուշագիրը մանրամասնորեն խոսե-
լե ետք նախապես Թուրքիո մեջ Հայոց ու-
նեցած վիճակին մասին, կպարզե Հայ ժո-
ղովրդին տեղահանությամբ ստեղծված ներ-
կա կացությունը: Հուշագիրը կշարունակե-
«Սովետական Հայաստան մասնակցեցալ
հաղթանակին իրագործման, ռազմաճակատ
հասցնելով 300.000 զինվոր, ավելի քան 50
զորավարներու հրամանատարության տակ
Կարմիր Բանակի շարքերուն մեջ: Այս մար-
տիկներեն ավելի քան 32 հազարը իրենց
հերոսության համար պարգևատրված են և
անոնցմե ութսունը արժանացած են «Սովե-
տական Միության Հերոս»-ի տիտղոսին:

Խորհուրդը կեզրափակե իր հուշագիրը
ըսելով.

«Աշխարհի բոլոր Հայերը կպահանջեն, որ
արևելյան նահանգները Սովետ Հայաստա-
նին կցվեն: Այս նահանգները ծաղկյալ Հայ
բնակչություն մը ունենին չորս հազար տա-
րի ի վեր՝ մինչև 1915»:

(«Լրաբեր» մարտ 6 1945 թ.)



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍՍՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փետրվարի 10-ին՝ Գերագույն Սովետի ընտրությունների օրը տոնական տրամադրությամբ էր տիրում ողջ Սովետական Հայաստանում։ Քաղաքներում, ավաններում, չյուղերում հիմնարկները, տները, փողոցները դրոշազարդված էին։ Հայ ժողովուրդն այդ օրը քվե էր տալիս իր արժանավորագույն ղավակներին։

Հայ հոգևորականությունը թաժանելով հայ ժողովրդի տոնական տրամադրությունը նույնպես շտապում էր քվեատուփերի մոտ, իր քվեն տալու ստեղծագործ հայ ժողովրդի տաղանդավոր ղավակներին, որոնք ջանք չխնայեցին Հայաստանը ծաղկած երկրի վերածելու և համայն հայրենաբաղձ հայ ժողովրդի սկեռակետը դարձնելու համար։



Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ.
փվատուփի մոտ

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՍԵՍԻԱՆ

Մարտի 12-ին Մոսկվայում՝ Կրեմլյան մեծ դահլիճում տեղի ունեցավ ՍՍՌՄ Գերագույն Սովետի առաջին սեսիայի բացումը։ Սեսիան զբաղվեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թ. թ. հնգամյա պլանի

քննարկմամբ և օրենք ընդունեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թ. թ. հնգամյա պլանի մասին։ Ստորև տալիս ենք այդ օրենքի Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկային վերաբերյալ մասը։

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԼԱՆԸ

Հաստատել ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թ. թ. հնգամյա պլանի հետևյալ առաջադրանքները միութենական ռես-

պուբլիկաների գծով ներկա օրենքի 2-րդ և 3-րդ բաժիններում սահմանված ամբողջ Սովետական Միությանը տրվող առաջադրանքների սահմաններում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅՈՒՄ

107. Հաստատել Հայկական ՍՍՌ-ում 1950 թվի համար արդյունաբերական արտադրանքի հիմնական տեսակների արտադրության պլանը հետևյալ չափերով.

էլեկտրոէներգիա (միլ. կիլովատտով)	160
Ավտոդոդեր (հազար հատ)	180
Սուպերֆոսֆատ (հազար տոննա)	15
Կաուստիկ սոդա (հազար տոննա)	12
Մետաղահատ դագաճներ (հատ)	500
Ցեմենտ (հազար տոննա)	120
Լուսամուտի ապակի (հազ. քառ. մ.)	300
Բամբակեղեն գործվածքներ (հազ.մ.)	44.800
Մետաքսեղեն գործվածքներ (հազ. մ.)	2.600
Բրդեղեն գործվածքներ (հազ. մետր)	400
Գուլպաներ (հազար գուլգ)	15.400
Կոշիկեղեն (հազար գուլգ)	2.550
Քուսակաճ յուղ (տոննա)	6.000
Շաֆար (տոննա)	6.500
Խաղողի գինի (հազար դեկալիտր)	2.000
Միս (հազար տոննա)	8,4
Կենդանական յուղ (տոննա)	800

108. Հաստատել Հայկական ՍՍՌ-ում 1946—1950 թվերի համար հիմնական աշխատանքների ծավալը 1.420 միլիոն ռուբլու չափով, այդ թվում՝ ռեսպուբլիկական տնտեսության գծով՝ 374 միլիոն ռուբլի։

109. Հնգամյակի ընթացքում հիդրոէլեկտրոկայանների կարողությունն ավելացնել 102 հազար կիլովատտով և հաշիվ գոյություն ունեցող հիդրոկայանների ընդլայնման և ջանադու գետի ափին կառուցվող նոր հիդրոկայանի առաջին հերթի գործարկման։ Կառուցել և գործարկել կաբելի գործարանը և մանր հիդրոտուրբինների գործարանը՝ տարեկան 300 տուրբինի թողարկումով։

Ապահովել Քաջարանի պղնձա-մոլիբդենային հանքաքարի հանույթը և հարստացումը, կազմակերպել ալյումինի արտա-

դրությունը, 4 անգամ ավելացնել սինթետիկ կաուչուկի արտադրությունը և 2 անգամ՝ սոդայի արտադրությունը, զգալիորեն ընդլայնել ավտոդոդերի արտադրությունը։

Ավարտել Երևանում մահուդի գործարանի շինարարությունը և Լենինականի տեքստիլ կոմբինատին կից նախշող և ներկող գործարանի շինարարությունը։ Ավարտել շաքարի գործարանի կառուցումը, կառուցել ապակե տարայի գործարանը, ընդլայնել կոնսերվների գործարանը։ Ավելացնել մրգեղեն կոնսերվների, խաղողի գինու արտադրությունը, կառուցել կոնյակի նոր գործարան։

Ռեսպուբլիկական արդյունաբերության մեջ կազմակերպել դուրյառնական մեքենաների և գույքի արտադրությունը։ Կառուցել մետաղե և ապակե ամանեղենի գործարաններ, ճենապակու գործարան և վերանորոգման մեխանիկական գործարան։

Ռեսպուբլիկական ձեռնարկություններում 1950 թվին արդյունաբերական արտադրանքի արտադրությունը սահմանել 700 միլիոն ռուբլու չափով, այդ թվում՝ տեղական պետական արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի արտադրանքը՝ 160 միլիոն ռուբլու չափով։

110. 1950 թվի համար սահմանել ցանքատարածություններ 512 հազար հեկտարի չափով, որից կոլխոզներում՝ 480 հազար հեկտար, այդ թվում հացահատիկային կուլտուրաներ՝ 332 հազար հեկտար, որից կոլխոզներում՝ 315 հազար հեկտար. տեխնիկական կուլտուրաներ՝ 40 հազար հեկտար. բոստանա-բանջարանոցային կուլտուրաներ և կարտոֆիլ՝ 41,5 հազար հեկտար, որից կոլխոզներում՝ 30 հազար հեկտար, կերաբույսեր՝ 98 հազար հեկտար, որից կոլխոզներում՝ 95 հազար հեկտար։

Սահմանել բամբակենու ցանքատարածություններ 15 հազար հեկտարի չափով, ընդլայնել բազմամյա տնկիների տարածություններ: Զարգացնել շաքարի ձակնդեղի արտադրությունը և մետաքսագործությունը: Ընդլայնել ծխախոտի ցանքատարածությունները և ավելացնել բերքատվությունը:

Շահագործման հանձնել հետևյալ ջրանցքները. Ստալինի անվան, Նորքի, Ստորին Զանգվի, Գառնիի: Իրագործել Արագոյայանի տափաստանի ոռոգումը: 1946—1950 թվերին ապահովել ջրով տարածությունների աճը 28,5 հազար հեկտարի չափով:

1950 թվի վերջերին անասունների գլխաքանակը սահմանել հետևյալ չափերով. ձիեր 32,5 հազար գլուխ, որից կոլխոզներում 25 հազար գլուխ, խոշոր եղջյուրավոր անասուններ 670 հազար գլուխ, որից կոլխոզներում 350 հազար գլուխ, ոչխար և այծ 1.680 հազար գլուխ, որից կոլխոզներում 1.100 հազար գլուխ, խոզեր 80 հազար գլու-

խ, որից կոլխոզներում 48 հազար գլուխ: Բարելավել մթերատու անասունների տեսակը և ընդլայնել նրբագեղմ ոչխարաբուծությունը:

111. 1946—1950 թվերին սահմանել Հայկական ՍՍՌ-ի քաղաքներում պետական բնակելի ֆոնդի գործարկում 284 հազար քառ. մետրի չափով, որից տեղական սովետների գծով 34 հազար քառ. մետրի չափով: Կառուցել նոր ջրմուղ, ընդլայնել կոլուզին և 15 կիլոմետրով երկարաձգել տրամվայի գիծը Երևանում, ընդլայնել Լենինականի ջրմուղը:

112. Հաստատել կուլտուրական շինարարության և առողջապահության հիմնական առաջադրանքները. 1950 թվին դպրոցների թիվը հասցնել 1.178-ի, սովորողների թիվը՝ 295 հազար մարդու և քաղաքներում ու գյուղական վայրերում հիվանդանոցային մահճակալների թիվը՝ մինչև 6.700-ի:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Հայկական ՍՍՌ Ժողովրդավարական հանրապետության տարի էլքմիածնում կառուցվում է Մեխանիկական նոր գործարան, որի վրա ծախսվելու է մեկ ու կես միլիոն ռուբլի: Գործարանի կառուցման համար արդեն առանձնացված է մեկ և կես հեկտար հողամաս:

Աշխատանքներն սկսվել են: Գործարանն ունենալու է մոտ 8 ցին, որոնց արտադրական կարողությունը կազմելու է 500 հազար ռուբլի: Գործարանը շահագործման է հանձնվելու այս տարվա վերջին:

ՀՐԱԿԱՅՈՒՆ ԱՂՅՈՒՍԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Արվարդու շրջանի Թումանյան գյուղի մոտ գտնվող կավի բազայի վրա կառուցվում է հրակայուն աղյուսի գործարան: Գործարանը, որն օրական արտադրելու է 120 տոննա հրակայուն աղյուս, գործարկվելու է առաջիկայում: Աղմկահույզ Դեբետ գետի ափին բնությունը ամբարել է թան-

կարժեք մի հանք՝ Սովետական Միության մեջ միակ շամուր, որը նման է ամերիկյան ֆլինտ-կլեին: Շամուր, որի պաշարները հասնում են մի քանի միլիոն տոննայի, անհրաժեշտ է մետաղաձուլական, քիմիական, նավթային և բրուտագործական արդյունաբերության համար:

ԿՈՄԻՏԱՍԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊՈՐՏՐԵԻ ԿՈՆԿՈՒՐՍ

Հայկական ՍՍՌ Ժողովրդավարական կից Արվեստի Գործերի վարչությունը Կոմիտասի ծննդյան 75-ամյակի առթիվ հայտարարել է Կոմիտասի լավագույն պորտրեի բաց կոնկուրս՝ գեղանկարչության, քանդակագործության և գրաֆիկայի գծով:

Գեղանկարչության գծով սահմանված է մեկ մրցանակ՝ 15 հազար ռուբլի, քանդակ-

կագործության գծով (գիպս) մեկ մրցանակ՝ 15 հազար ռուբլի, մարմարի կամ բրոնզի (նյութից) մեկ մրցանակ՝ 30 հազար ռուբլի և գրաֆիկայի գծով մեկ մրցանակ՝ 8 հազար ռուբլի:

Աշխատանքները հանձնելու ժամկետը՝ շահակված է 1946 թվի մայիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Գրողների Միության նախագահությանը Հայաստանի Գրողների Միու-

թյան նախագահ ընտրեց մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանին:

„ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ“

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նախագահության որոշմամբ և Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի ղեկավարությամբ հայ թատերական արվեստի 2000-ամյակի առթիվ պատրաստվում է հրատարակության «Ակնարկներ հայ թատրոնի պատմության» մեծածավալ գիտական աշխատությունը: Այդ աշխատությունը ընդգրկելու է Հայաստանի հին դարերից մինչև մեր օրերի թատրոնական արվեստն ու թատրոնի պատմությունը: Գրքում տեղ են գտնվում հայ արվեստագետների ու գրականագետների ուսումնասիրությունները, ինչպես օրինակ՝ արվեստի վաստակավոր գործիչ Գ. Լևոնյանի՝ «Հնագույն հայկական թատրոնը», արվեստագիտության թեկնածու Գ. Գոյանի՝ «Հայ թատրոնը Անդրկովկասում 19-րդ դարում», արվեստի վաստակավոր գործիչ Գ. Տիգրանյանի՝ «Հայկական երաժշտական թատրոնը», պրոֆ. Ա. Արշարունու՝ «Հայ թատրոնը Ռուսաստանում, Եվրոպայում, Ամերիկայում, Իրանում և Հնդկաստանում», արվեստի վաս-

տակավոր գործիչ Լ. Քալանթարի՝ «Հայ թատրոնը Անդրկովկասում 20-րդ դարում», ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Թերզիբաշյանի՝ «Թատրոնը արևմտահայերի մոտ», թատերագետ Ս. Մելիքսեթյանի՝ «Մովսեսայ թատրոնը» ուսումնասիրությունները:

Հայ թատերագրության պատմության մեջ այս աշխատությունը առաջինն է լինելու և՛ ծավալով, և՛ բնույթով: Գրքի խմբագրական կոլեգիայի մեջ են մտնում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Հ. Օրբելին, պրոֆեսոր Ա. Ջիվեղյանը, Համառուսական թատրոնական ընկերության նախագահ տեղակալ ընկ. Գ. Գոյանը, Հայկական ՍՍՌ Լուսժողով ընկ. Աղբալյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի դիրեկտոր ընկ. Խ. Սարգսյանը:

(«Մովսեսայ Հայաստան» փետրվ. 2 1946)

ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետատական Համալսարանի հրատարակությամբ լույս տեսավ Հայկական ՍՍՌ Գիտություն-

ների Ակադեմիայի իսկական անդամ Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի երկրորդ հատորը:

Ա. ՄՅԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Ա. Մյանիկյանի անվան Պետական Հանրային Գրադարանը Սովետական Հայաստանի ամենախոշորագույն գրադարանն է. գրադարանն ունի երկու միլիոն գիրք: Գրադարանը ձեռք է բերել բազմաթիվ հազվագյուտ հրատարակություններ, ինչպես օրինակ առաջին հայերեն տպագիր գիրքը՝ «Պարզատմար»-ը հրատարակված 1512 թվին Վենետիկում, «Ուրբաթագիրք»-ը՝ հրատարակված 1513 թվին: Ուշագրություն արժանի է նաև Քրիստափոր Կոլումբոսի օրագրի պատճենը: Զափազանց հետաքրքիր են այստեղ պահվող

գիրք-թղթերը և գիրք-հսկաները. մինչատուր «Ղուրան»-ը շաքարի խորանարդիկի մեծությամբ՝ փթանոց ավետարանի կողքին շատ աննշմարելի է դառնում: Մեծ գիտական արժեք են ներկայացնում Լազարյան ճեմարանի, երաժշտագետ Ղորղանյանի և այլոց արխիվները: Գրադարանն ունի մեծ ու փոքր մի շարք ընթերցասրահներ: Գրադարանն սպասարկում է հազարավոր գիտական աշխատողների և բազմահազար ուսանողության:



ԳԱՂՈՒԹԱՅԱՑ ԿՅԱՆՔ

ՊԱՀԱՆՁՆԵՐ ԱՄՆ-ՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՅՈՒ-ՅՈՐԲ, 1 փետրվարի (ՏԱՍՍ).— «Հայերի նկատմամբ արդարացի վերաբերմունքի համար պայքարող ամերիկյան կոմիտեն» Միավորված Ազգերի կազմակերպությունում ամերիկյան դեմագոգիային ուղարկել է մի դիմում, պահանջելով կատարել ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի որոշումը Հայաստանին վերադարձնելու նահանգների այն մասը, որը գրավել է թյուրքերան։

Կոմիտեն հայտարարել է, թե ինքը պաշտպանում է «Ամերիկայում Հայկական Ազգային Խորհրդի» պահանջը, հայկական տերիտորիաները վերադարձնելու և հայրենիք վերադառնալ ցանկացող բազմահազար հայերին Հայաստան վերադարձնելու մասին։ Կոմիտեն ԱՄՆ-ի դեմագոգիային կոչ է անում հայ ժողովրդի կարիքները քննարկել ամենաբարեկամական ոգով, երբ էլ որ այդ կարիքները քննարկման նյութ դառնան Միավորված Ազգերի կազմակերպության մեջ։

Մեկնաբանելով կոմիտեի դիմումը, ռադիոտեսաբան Բլեկը հայտարարել է՝ «Զկա ավելի խայտառակ բան, քան այն մեթոդները, որոնց օգնությամբ եվրոպական և ասիական երկրները առևտուր են արել և պայքարել են միմյանց դեմ հայերին օգտագործելով որպես խաղալիք։ Այդ վերաբերում է ինչպես քրիստոնեական, այնպես էլ մահմեդական ազդեցությունը, և միայն Սովետական Միությունը արդարացիորեն տվել է

իր ժողովրդին տերիտորիա, անվտանգություն, կուլտուրական ավտոնոմիա և կըրթության ու առաջադիմության միջոցներ»։ Այնուհետև Բլեկը հայտարարել է «Սովետական Հայաստանը իրոք որ աջակցել է հայ ժողովրդի կյանքի բարելավմանը։ Այդ երկիրը վայելում է Սովետական Միության պաշտպանությունը։ Այդ փաստը ընդունում են նույնիսկ կոմունիզմի քննադատները։ Նույնիսկ այն հայերը, որոնք հանդիսանում են ակտիվ նացիոնալիստներ և շահագործված չեն, որ Սովետական Միության տերիտորիան ավելանա, ընդունում են իրենց ժողովրդի անվտանգությունն ու առաջադիմությունը ժողովրդական ռեսպուբլիկաների սովետական սիստեմի օրով»։

Սակայն Բլեկի ասելով այդ ավելի լայնորեն չի լուծում բոլոր հայերին վերաբերող պրոբլեմները։ Ավելի քան մեկ միլիոն հայեր ցրված են Մերձավոր Արևելքում որպես գաղթականներ։ Նրանք մատնված են սովի և ենթարկվում են կամայականության, կողոպուտների ու սպանությունների։ Հայերի պահանջները հիմնավորված են։ ԱՄՆ-ում 200 հազար հայեր, որոնցից մի մասը գաղթականներ են, իսկ մեծամասնությունը վտարանդիներ, դեռևս ձգտում են իրենց հայրենիքը ազատագրել թյուրքական հարստահարիչներից, որոնք «մնացել են չեզոք, բայց համագործակցել են ֆաշիստների հետ»։

«ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԱՄԵՐԻԿԱՆ ԿՈՄԻՏԵ»-Ի

ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒ-ՅՈՐԲ, 22 մարտի (ՏԱՍՍ).— «Հայերի իրավունքները պաշտպանող ամերիկյան կոմիտե»-ի նախագահ Սմիտը մամուլի

ներկայացուցիչներին հայտարարեց, որ կոմիտեն «Ամերիկայում հայկական ազգային Խորհրդի» հետ համագործակցած ԱՄՆ-ի

շատ քաղաքներում անց է կացնում միտինգներ, որպեսզի Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրի մեկ միլիոնից ավելի հայերի կարիքների վրա: Այնուհետև նա ասել է, որ այդ միտինգները կվերջանան ապրիլի 28-ին Նյու-Յորքում

«Կարանեդջի խուլի» մեծ միտինգով: Միտինգի մասնակիցները կդիմեն Միավորված Ազգերի կազմակերպությանը կոչ անելով ստիպել Թյուրքիային հրաժարվել հայկական նահանգներից:

ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

1945 դեկտեմբեր 6—9 Ֆիլատելիի մեջ գումարված Ամերիկայի Հայոց Առաջնորդական Թեմի տարեկան Երեսփոխանական ժողովի որոշմամբ և հանուն նույն ժողովին, Առաջնորդ Ս. Հայրը հետևյալ հեռագրական դիմումները կատարած է Միացյալ Նահանգ

զաց նախագահին, խորհրդային Միության Գերագույն խորհուրդի նախագահին և Նեեք Մեծերու Արտափին Գործոց նախարարներուն, երբ վերջիններս խորհրդածողով ունենին Մոսկվայի մեջ:

ՄԵՄԱՊԱՏԻՎ ՀԵՐՐԻ Ս. ԹՐՈՒՄԵՆ

Նախագահ Միացյալ Նահանգաց

Ուաշինգթոն. Տ. Ք.

Հայաստանյայց Եկեղեցիի Ամերիկայի Թեմը, Ֆիլատելիի մեջ դեկտ. 6—9 կատարած իր Համագումարին մեջ, հանձնարարեց ինձ դիմել Ձեր աջակցության՝ հնարավոր ընելու հայրենիք վերադարձն այն հայերուն, որոնք տարազրկված էին անցյալ պատերազմին և որոնք տակավին չեն տեղավորված և աստանդական են շատ մը երկրներու մեջ:

Հանուն արդարության պետք է որ օտար տիրապետության տակ գտնվող մեր պատմական հողերը ազատագրվին և մեր ժողովուրդը հնարավորություն ունենա միանալու Սովետ Հայաստանի իր հայրենակիցներուն հետ և միասնաբար կազմելու հասարակաց հայրենական երկիր մը:

Ձերդ հավատարմորեն՝

ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

Առաջնորդ Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի

Դեկտեմբերի 19, 1945

ՄԵՄԱՊԱՏԻՎ ՄԻԽԱՅԻԼ ԿԱԼԻՆԻՆ

Նախագահ ՍՍՀՄ Գերագույն Սովետի Նախագահության

Մոսկվա

Հայաստանյայց Եկեղեցվո Ամերիկայի Թեմը, դեկտեմբեր 6—9-ին Ֆիլատելիի մեջ կայացած իր Համագումարին մեջ հանձնարարեց ինձ՝ մեր ժողովրդի երախտագիտությունը հայտնել Ձեր կառավարության, այն ազնիվ մատուցման համար, զոր ըրավ ան դուրացնելու համար հայրենիք վերադարձը հայերուն, որոնք հալածված և

տարագրված էին անցյալ պատերազմին և որոնք տակավին աստանդական են շատ մը երկրներու մեջ:

Համագումարը կիսնդրե, որ օտար տիրապետության տակ գտնվող մեր պատմական հողերը ազատագրվին ու միացվին Սովետ Հայաստանի՝ որպեսզի մեր ժողովուրդին համար կազմվի հասարակաց հայրենիք մը:

ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

Առաջնորդ Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի

Դեկտեմբերի 19, 1945

ՎՅԱԶՆՍԻԱՎ Մ. ՄՈՂՈՏՈՎ, Արտաֆին Կոմիսար
ՃԵՅՄԶ Ֆ. ՊԸՐՆԶ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՄՈՒՂԱՐ
ԷՐՆԵՍԹ ՊԵՎԻՆ, Արտաֆին Նախարար
Արտաֆին Գործոց Նախարարներու Խորհրդաժողով
Մոսկվա

Մեծապատիվ Տյարֆ

Հայաստանյայց Եկեղեցւոյ Ամերիկյան
թեմը, դեկտեմբեր 6—9-ին Ֆիլատելֆիո մեջ
կայացած համագումարին մեջ, աղոթամա-
տույց եղաւ Ձեր աշխատանքներու երկնա-
յին առաջնորդութեան համար հանուն երկ-
րիս վրա խաղաղութեան պահպանման և աղ-
ղաց միջև արդարութեան հաստատման:

Համագումարը կիսնդրեւ, որ հնարավոր
դաբձնեք հայրենիք վերադարձը մեր ժողո-
վուրդին, որ խստորեն հալածված և տարա-

գրված էր անցյալ պատերազմին և որ տա-
կավին չէ տեղավորված և աստանդական է
բազում երկիրներու մեջ:

Հանուն արդարութեան պետք է որ օտար
տիրապետութեան տակ գտնվող իր բնիկ եր-
կիրը ազատագրվի և իրեն վերադարձվի և
ան հնարավորութեան ունենա միանալու
Սովետ Հայաստանին՝ որպէսզի հասարակաց
հայրենական երկիր մը կազմվի մեր ժողո-
վուրդին համար:

ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

Առաջնորդ Հայաստանյայց Եկեղեցւոյ Հյուսիսային Ամերիկայի

Դեկտեմբերի 19, 1945

(«Լրաբեր» հունվ. 8 1946 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳ. ԿԱԶՄ. ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐԺ ՓԵՏՐՎ. 2 1946 թ.

Տարվույս հունվարի 21-ին Քոնկրեսին
ուղղած իր պատգամագրով նախագահ
Թրումըն հաղորդեց. «Միացյալ Ազգաց
Կազմակերպությունը... պիտի հանդիսանա
մեծ ձայն մը՝ մշտապես և պատասխանա-
տրվութեամբ խոսելու համաշխարհային գոր-
ծակցութեան և տիեզերական բարօրութեան
իմաստով»:

Խոսելով հանուն Հայկական Իրավանց Ա-
մերիկյան Հանձնախումբին, այս հաղորդա-
գրութիւնը ստորագրողներս կհավատանք,
որ նախագահ Թրումըն ճշտորեն և ուժգ-
նութեամբ սահմանած է Միացյալ Ազգաց
Կազմակերպութեան մարդկայնական նպա-
տակները և տեսութեան սահմանը: Այս նը-
կատմամբ համակարծիք լինելով մեր նա-
խագահի հայեցողութեան, հարգանք կհրա-
վիրենք ձեր ուշադրութիւնը ստիպողական
կարիքներուն վրա մեկ միլիոնն ավելի ամ-
բողջ աշխարհի մեջ ցրված Հայ տարագրե-
լալներու և փախստականներու, ինչպէս
նաև նպատակներուն վրա Հայկական Իրա-
վանց Ամերիկյան Հանձնախումբին, որուն
կեդրոնավայրը Նյու-Յորքի մեջ է:

...Նախագահ Ուիլսոնի հողային իրավա-
րարութեան վճիռը, որ տրվեցաւ Դաշնակից
Պետութեանց Գերագույն Խորհուրդի խնդ-
րանքով՝ Հայկական ավանդական շրջաննե-
րու գրավյալ նահանգներուն վերաբեր-
մամբ, կձգտեր ստեղծել բավարար չափով
մեծ Հայկական բնավայր մը, որ ատակ ըլ-
լար ապրեցնել տանջահար փախստական-
ները և անոնց զավակները, երբ անոնց
վերաբնակեցումը իրագործվեր: Ուիլսոնյան
վճիռը հնարավորութիւն պիտի տար ամ-
բողջ հայ ժողովրդին դարձալ բարգաւա-
ճելու իբրև ազգ մը և իրագործելու իր վա-
ղեմի մշակութի հարուստ ակնկալութիւն-
ները: Այս (Ուիլսոնյան) վճիռը վավերաց-
վելով Սերի Դաշնագրութեամբ, զոր ստո-
րագրած է նաև Թուրքիա, Հայաստանի
կուտար Կարսի և Արտահանի շրջանները՝
Ռուսական Հայաստանն, և Էրզրումի,
Տրապիզոնի, Վանի և Պիթիսի պատմակա-
նորեն Հայկական նահանգները:

Այդ միջոցին, Ամերիկյան դիրքը մա-
սամբ հայտարարվեցաւ Պետական Քար-
տուղար պր. Պեյնպրիճ Քուլպի կողմն, երբ

ըսավ. «...Վերջապես, երբ ուրախությամբ կճանշանք Հայաստանի անկախությունը, այսու հանդերձ Միացյալ Նահանգաց Կառավարությունը իր դիրքը կպարզե անոր սահմաններու վերջնական որոշման մասին, թե պետք է՞ գծվի առանց Ռուսաստանի համագործակցության և համաձայնության: Հայաստանի սահմանագծման պարադային Ռուսիա ոչ միայն պիտի հետաքրքրվի Հայկական նոր Պետության հողային նկատելի մեկ բաժինով, որ նախապես Ռուսիո Կայսրության կպատկաներ, այլ հավասարապես կարևոր է նաև այն իրողությունը, որ Հայաստան պետք ունի Ռուսիո բարյացակամության և պաշտպանողական բարեկամության, եթե անիկա անկախ և ազատ պիտի տևե...»:

1920-են ի վեր, Հայկական Սովետ Հանրապետությունը կվայելի «Ռուսիո բարյացակամությունն ու պաշտպանողական բարեկամությունը», մեծապես կարևոր և բա-

րերար այն գոյավիճակը, որ ակնարկված է Պետական Քարտուղար Քուլպիի հայտարարությամբ:

Սակայն, Ուիլսոնյան վճիռը, որ Հայաստանի կվերադարձնեն պատմական Հայաստանի մոտավորապես 40 առ հարյուրը, որ հափշտակված էր Թյուրքիո կողմեն, երբեք չիրականացավ:

Հայկական Իրավանց Ամերիկյան Հանձնախումբը՝ ի բոլոր սրտե կպաշտպանե Ամերիկայի Հայ Ազգային Խորհուրդի աղերսագիրը ի մասին Հայաստանի սահմաններու ընդարձակման և հարյուր հազարավոր Հայ փախստականներու վերաբնակեցման, որոնք անձկանոք կբաղձան իրենց հայրենիքը վերադառնալ, վերջ դնելով այն վըշտալի կացության, որուն այժմ ենթարկված են իրենց թշվառ և անմխիթար կյանքով Միջին Արևելքի և Եվրոպայի զանազան երկիրներուն մեջ:

Հայկ. Իրավանց Պաշտպանության Ամերիկյան Հանձնախումբ
ԷՏՈՒԻՆ Ս. ՍՄԻԹ Ատենապետ
ՎՆՐ. ՌԱՊԸՐԹ ՌԻ. ՍԸՐԼ Քարտուղար
(«Նոր օր» փետրվ. 21 1946 թ.)

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԱՅ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Հունվար 31 1946 թ.

Ամերիկայի Ազգային Խորհուրդը այս պատեհությամբ կխոստանա իր բոլորանվեր աջակցությունը Ձեր եռանդուն ջանքերուն համար, որոնցմով կձգտիք խաղաղություն և ապահովություն հաստատել ամբողջ աշխարհի մեջ:

Հետպատերազմյան այս ժամանակաշրջանին, երբ սահմաններ կվերագծվին և բռնությամբ հափշտակված երկրամասեր իրենց օրինավոր տերերուն կվերադարձվին, Հայ ժողովուրդն ալ համաշխարհային խորհրդագաժողովի օրակարգին վրա դրած է իր պատմական երկիրներու պահանջը:

Ի գնահատություն Դաշնակիցներու դատին մատուցած իր թանկագին ծառայության, մեծ պետությունք որոշ խոստումներ տվին հօգուտ Հայոց, որոնք երբեք չգործադրվեցան: 1920-ին Դաշնակից Պետությանց Գերագույն Խորհուրդը հեղինակություն տրվավ Նախագահ Ուիլսոնի, որպեսզի Հայաստանի և Թուրքիո սահմանը գծեր: Ան մեծ զսպումով և իրատեսությամբ կատարեց այս գործը, Հայաստանի տալով հետևյալ երկրամասերը.—

1. Երևանի շրջանը, որով այժմ կազմված է Սովետ Հայաստանը:

2. Կարսի և Արտահանի շրջանը, որ այն միջոցին Հայաստանի Հանրապետության մաս կկազմեր և նախապես կպատկաներ Ռուսական Հայաստանի, և

3. Կարնո, Տրապիզոնի, Վանի և Բաղեշի Թրքահայկական նահանգները:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքին, Հայերը ամենուրեք, դարձյալ կովեցան ժողովրդավար ազգերու կողքին: Միայն Ռուսական ճակատին վրա ավելի քան քառորդ միլիոն զինվորյալ հայեր կային:

Այս անգամ լիակատար իրավարարություն պետք է ըլլա դուցազնական Հայաստանին, ազատագրելով իր պատմական երկիրները, որոնք գրավուած են թուրք տիրակալներու կողմե, և միացնելով զանոնք Հայկական Սովետ Հանրապետության հետ, որպեսզի աշխարհի զանազան մասերու ավելի քան մեկ միլիոն հայ փախստականները կարենան վերադառնալ հոն, և ապրիլ իբրև միացյալ ժողովուրդ մը:

Սա ամեն տեղի Հայոց պահանջն է, ար-

դար պահանջ մը, զոր կարելի չէ ալլես անտեսել, առանց անջնջելիորեն արատալորելու ուղղամիտ մարդկության խիղճը։

Կհամարանք, որ ձեր վեհափառ կազմը

պարտ ու պատշաճ միջոցներով պիտի կարգադրեք Հայկական երկարատև հարցը, որ 1878-ին ի վեր միջազգային հարաբերության գայթակղությունը հանդիսացած է։

Առեւտրային ՊԵՏՐՈՍ ԹԵՐԶՅԱՆ
Քարտուղար ՍԵՐՈՒԱԿ ՇԱՀԵՆ

(«Նոր օր» փետրվ. 21 1946 թ.)

ՀԱՅՐԵՆԱԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆԱՑ ՄԻՈՒԹՅԱՆՑ ՆՅՈՒՅՈՐՔԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԱՑ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Նյու-Յորքի մեջ 1946 թ. հունվար 20-ին գումարվեցավ Միացյալ Նահանգաց տասն և յոթ Հայ Հայրենակցական Միությանց ներկայացուցիչներու խորհրդաժողովը։ Մեր բնիկ քաղաքները և նահանգները այժմ կը պտնվին թրքական բռնադատյալ տիրապետության ներքև և մեր հայրենակիցները, իբրև փախստականներ, Առաջին Համաշխարհային Պատերազմին ի վեր կապրին աշխարհի զանազան մասերուն մեջ։ Կղիմենք ձեզ, որպեսզի մեր հայրենակիցներու երկիրները միացվին Սովետ Հայաստանին, և պատեհություն տրվի իրենց տունները վերադառնալու՝ ազատության և անհատականության պայմաններու մեջ։

Հայերը դաշնակիցներն էին Համաշխարհային երկու Պատերազմներուն մեջ և իրենց զոհողության լիակատար մասնակցությունը տվին պատերազմի հաղթանակին համար։ Առաջին Համաշխարհային Պատերազմին մեջ ո՛չ մեկ ազգայնաբան ծանրորեն վնասվեցավ, — մեկ միլիոն բնաջնջվեցավ, մեկ միլիոն զրկվեցավ իր տունեն և ապրուստեն։ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքին, միայն Կարմիր Բանակին մեջ ավելի քան քառորդ միլիոն հայեր կային, ի շարս որոնց յոթանասուն և վեց Հայ դորավարներ։

Թուրքերը, որոնք անցյալ հիսուն տարիներու ընթացքին հայերու բնաջնջման քաղաքականություն մը կհետապնդեին, հայտնապես և գաղտնորեն թշնամվույն դաշնակից էին Համաշխարհային երկու Պատերազմներուն մեջ ևս։

Շատ երկիրներու մեջ, ուր հայերը տա-

կավին ապաստանյալներու գոյավիճակ ունին, միջազգային հարց մը կնեղկայացնեն, որ ծանրորեն կճնշե քաղաքակիրթ աշխարհի խիղճը։ Արդարության պահանջ մըն է, որ անոնք ազատության և ապահովության պայմաններով վերահաստատվին իրենց երկրին մեջ։

1920-ին, ի պատասխան Դաշնակից Գերագույն Խորհրդի հրավերին, Նախագահ Վուդրո Ուիլսոն որոշեց Հայաստանի սահմանները, որոնք վավերացվեցան Սևրի Դաշնագրով, և զոր Թուրքիան ստորագրած է։ Ուիլսոնի վճիռը կրովանդակեր Կարնո, Տրապիզոնի, Վանի և Բաղեշի Թրքականական նահանգները։ Ի վերջո, Թուրքիա ոչ միայն անտեսեց Սևրի Դաշնագրին տրամադրությունները, այլ և գրավեց Կարսի և Արտահանի շրջանները, որոնք մինչև այն ժամանակ Ռուսական Հայաստանի մասն էին։

Մենք, ներկայացուցիչներս՝ մեկ միլիոնն ավելի ապաստանյալ հայերուն, որոնք աշխարհի զանազան մասերուն վրա սփռված են, կաղերսենք Ձեր Բարձրութենեն, որպեսզի անհրաժեշտ միջոցներ ի գործ դնեք Թրքական Հայաստանի նահանգները փոխանցելու Սովետ Հայաստանի, զոնե այն երկրամասերը, որոնք Նախագահ Ուիլսոնի գծած սահմաններուն մեջ կպարփակվին, և հոն վերաբնակեցնելու մեր փախստական հայրենակիցները։

Սա համաձայն է ազգերու ինքնորոշման սկզբունքին, առանց որուն ուսմակալարությունը չի կրնար գոյություն ունենալ միջազգային հարաբերության մեջ։

Ի դիմաց Հայկական Հայրենակցական Միությանց

Առեւտրային ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՐՊԵՐՅԱՆ
Քարտուղար ԵՋՆԻԿ ՎՐԹԱՆԵՍ Կ. ԱՋՆԱԿՅԱՆ

(«Նոր օր» փետրվ. 21 1946 թ.)

ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ ԱՆԹԼԵԱՍԻ ՄԵՋ

Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի նախագահությամբ մասնավոր ընդունելություն մը տեղի ունեցավ Անթիլիասի վեհաբանին մեջ, բացումը կատարելու համար նվիրահավաքության մը, որուն արդյունքը պիտի հատկացվի արդիական սարքավորումով կոշիկի գործարանի մը՝ որպես Սուրիո, Լիբանանի և Կիպրոսի Հայության նվերը՝ Սովետ Հայաստանի 25-ամյակին առիթով։

Ողջունելի ետք ներկաները, Վեհափառ Հայրապետը ըսավ.

«Ձեզի հայտնի է, թե ինչ գաղափար, ինչ միտք և ինչ գործ մեզ համախմբած են հոս։ Քիչ ժամանակ առաջ, սփյուռքի մյուս գաղութներու նման Լիբանանի, Սուրիո և Կիպրոսի հայերն ալ տոնեցին մեր պետական կյանքի 25-ամյակը։

«25 տարին շատ կարճ ժամանակ է պետական կյանքի համար։ Բայց այս ժամանակը օգտագործված է առավելագույն չափով։ Պատգամավորները իրենց աչքով տեսան թե մեր փոքր բայց թանկագին հայրենիքը ինչպես է բարձրացրել իր գլուխը ավերակներից և կերտել է երկիրը։ Այժմ ապրում ենք պետական կյանք, ստեղծագործական կյանք, նյութական, մշակութային և շինարարական տեսակետներով։

«Բայց երբ եկավ պատերազմը, մեր երկրին ու ժողովրդին նշանաբանը դարձավ. «Ամեն ինչ ճակատի և հաղթանակի համար»։

Չորս տարիներն ի վեր, մեր ժողովրդին կյանքը չէր կրնար զարգանալ խաղաղության ժամանակվան պես։ Հիմա վերադարձած է խաղաղությունը, և մեր ժողովուրդն ու կառավարությունը, պետական ամբողջ կազմը, լարել են իրենց ուժերը։ Սփյուռքի հայ զանգվածներն ալ պատրաստ են իրենց բաժինը բերելու ստեղծագործ մեծ գործին»։

Ի վերջո Վեհափառ Հայրապետը կոչ ըրավ ներկաներուն լայնորեն մասնակցել հայրենիքին ըլլալիք նվերին։

Այնուհետև սկսավ հանգանակությունը և խանդավառ մթնոլորտի մը մեջ հավաքվեցավ 31,200 լ. ոսկի։

Հանգանակությունը պիտի շարունակվի։

Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսի Հայրապետական հրահանգին համաձայն Սովետական Հայաստանի մեջ կոշիկի գործարանի մը մեքենական սարքավորման համար Դամասկոսում կազմված է նվիրահավաք հանձնախումբ մը, նախագահությամբ Կաթողիկոսական Փոխանորդ Գեր. Տ. Նփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունիի։

Հանգանակության բացումը կատարվեցավ 1946 թ. հունվարի 27-ին։

Նվիրահավաքությունից գոյացավ 3110 սուր. ոսկիի գումար մը։

Նվիրահավաքությունը շարունակվում է։ («Ժողովուրդի ձայն» հունվ. 1 և 30 1946 թ.)

ՀԱՅՐԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՎԵԼԻ ԶԵՆՆԱՐԿ ՄԸ

Սովետ Հայաստանի շինարարական կյանքին որևէ տեսակի մասնակցություն Ամերիկահայոց կողմեն՝ որքան մեծ ըլլան, այնքան շատ պատվաբեր է մեր այս գաղութին համար։

Այս մասնակցությունը պետք է բերենք այն գիտակցությամբ, որ թեև Հայաստանի շինարարության մեջ Սովետ Իշխանությանց ներդրած հսկայական գումարներուն հետ համեմատած խիստ փոքր է մեր Ամերիկահայ կամ ամբողջ արտասահմանի Հայոց կողմեն եղած օգնության քանակը, սակայն անոր որակը, բարոյական արժեքն ու նշանակությունը շատ մեծ է և բարձրորեն կը գնահատվի մայր երկրի ժողովուրդի և Սովետ կառավարության կողմեն։

Սովետ Հայաստանի շինարարության և

տեքնիքական հառաչդիմության աշխատանքներուն մեջ Ամերիկահայոց մասնակցության տեսակետեն՝ շատ գովելի նախաձեռնություն մը ստանձնած է պ. Հայկ Գավուրճյանը, կոչ ընելով բոլոր հայ ֆոթո-ինկրեյվլըրներուն՝ միասնական ջանքերով Հայաստանին նվիրելու լուսափորագրության գործարան մը, որ պիտի կրն «Ամերիկյան Զինկոկրաֆի գործարան» անունը։

Ասիկա շատ զնահատելի առաջադրություն մըն է, և անոր իրագործումը պատվաբեր գործ մը պիտի ըլլա անոր մասնակից բոլոր հայ ֆոթո-ինկրեյվլըրներուն։

Հայկ Գավուրճյան, որ էջմիածնի եկեղեցական ժողովի մասնակցող պատգամավորներն մեկն էր, և Նյու-Յորքի մեջ ֆոթո-ինկրեյվլիկի ծանոթ գործարանատեր մը, իր

Հայաստան գտնված ժամանակ տեսած է, որ Ամերիկյան թեքնիկի վերջին խոսքով լուսափորագրական նոր գործարանի մը հաստատումը Նրեանի մեջ խիստ օգտակար նվեր մը պիտի ըլլա մեր մայր ժողովրդին և արժեքավոր ներդրում մը Հայաստանի տպագրական գործի մեջ:

Վերջին տարիներուն, պատերազմական պոնտերու արշավներու կազմակերպման և հայրենասիրական այլ ձեռնարկումներու մեջ պ. Հայկ Գավուրճյան հանդես եկավ որպէս լավ կազմակերպիչ մը և նվիրված աշխատող մը: Ան ավելի շատ գործի մարդ է քան խոսքի: Ամերիկահայ ֆոթո-ինկրեյվլըները, արհեստավորներ թե գործատերեր, որոնք բավական խոշոր թիվ մը կկազմեն Ամերիկայի մասնավանդ Նյու-Յորքի մեջ,

բարեբախտութիւն մը պետք է սեպեն, որ պ. Գավուրճյանի պես ձեռներեց և գործնական աղագասեր անձ մը, և մեկը որ կհասկանա ֆոթո-ինկրեյվլինկի գործը, նախա-ձեռնութիւնը ստանձնած է Սովետ Հայաստանին զինկրաֆի գործարան մը նվիրելու գործին:

Կհավատանք, որ բոլոր հայ ֆոթո-ինկրեյվլըները, արհեստավորներ և գործատերեր, միասնաբար, հավաքական ջանքերով պիտի հաջողին առաջագրված գործը ի գլուխ հանել կարճ ժամանակի մը ընթացքին, և Նրեանի մեջ հաստատել իրենց բոլորին պատիվ բերող «Ամերիկյան Զինկրաֆի գործարանը»:

(«Լուսփեր» հունվ. 10 1946 թ.)

ՄԵԿ ՇԻՇ «ԱՐԱՐԱՍ» ՔՈՆՅԱՔ 20.000 ՏՈԼԱՐԻ

Էջմիածնա Ազգային Եկեղեցական ժողովի Հարավ Ամերիկայի պատգամավոր Պ. Պահլեճյանի, իր հայրենակից ընկ. Պետրոս Տրդատյանի (Հայֆա) գրած նամակէն կարտատպենք հետևյալ շահեկան հատվածը.

«Նոյեմբերի 4-ին հասա Պրահայի. հոն 6 օր մնացի. մեծ խանդավառութիւն ստեղծուեցավ միթինկներով ևն:

Նոյեմբերի 16-ին հասա Պոլենոս-Ալբես մեծ եռուղեռի մեջ: Առաջին միթինկին մեկ շիշ (Արարատ) քոնյաք ածուրդի դրի և

20.000 (քսան հազար) տոլարի բարձրացավ:

Միևնույն աշխատանքը տարի նաև Պրահի, Մոնթեվիտեո և Գորտոպա, ուրտեղ խոշոր գումարներ գոյացան, որոնցմով հագուստեղեն գնելով՝ Հայաստան պիտի ղերկվի: Ի տես այս հաջողութեանց, Հայաստանի երդույալ թշնամիները կատղած են և աղտոտ պայքարի սկսած»:

(«Միութիւն» փետրվ. 10 1946 թ.)

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԸ

Հունաստանէն ստացված տեղեկութեանց համաձայն, ներկայիս Հունաստանի հայերուն թիվը շուրջ 28.000 է, որոնցմէ 4.000 բարեկեցիկ, 7.000-ը ինքնաբաւ, իսկ 17.000 հոգին բոլորովին կարոտ են անմիջական

նպաստի: Անոնք ոչինչ ունին և ցնցոտի են: րու մեջ ըլլալով՝ պետք ունին հագուստի, ներքնազգեստի և կոշիկի:

(«Միութիւն» հունվ. 6 1946 թ.)

ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՑՈՒՑԱՆԱԴԵՍԸ

«Աստուած ա՛լ վերջակետը դրած է մեր տանջանքներին.— Լիբանանահայ գաղութը, լիահույս եմ, մոտ ապագայում, իր կենդանի աշքերով կտեսնեն հոս ցուցադրված տեսարանները»:

Մեծի Տանն Կիլիկիոյ ժերոմազարդ Հայրապետ՝ Ն. Ս. Օ. Տ. Գրեգորի Ա Կաթողիկոս այս խանդավառ խոսքերով բացավ 7 փետրվար 1946 երեկոյան ժամը 4-ին, Սովետ Հայաստանի Լիբանանի Բարեկամներու Ընկերակցութեան սարքած և մեր հայրենիքի խորհրդայնացման 25-ամյակին նվիրված պատկերավոր ցուցահանդեսը՝ Վե-

րածնունդ Միութեան Ակումբին մեջ: Վեհափառը կշրջապատեին Գեր. Խաղ. և Արտավազդ Սրբազանները, քահանա հայրեր, Հայ Ազգ. Իշխանութեանց և հայ մամուլի ներկայացուցիչներ և հայ առևտրական դասու ներկայացուցիչներ: Բացման հանդիսութեանց ներկա էին նաև Սովետ Միութեան հյուպատոս պ. Ահարոնով և արաբ քաղաքական դեմքեր և մտավորականներ: Սրահը դրոշազարդված էր Լիբանանյան դուշնե-րով:

Ցուցահանդեսին պատվո տեղը հատկաց-

ված է հայրենական պատերազմի հերոսներուն: Հարկաբաժինին կեդրոնը զարգարված է տաղանդավոր նկարիչ Կալենցի վրձիններն ելած գունավոր և լայնօրհամաստ քարտեռով մը, ուր նշանակված են Սովետ Հայաստանի գլխավոր գործարանները, ճարտարարվեստի կարևոր կեդրոնները: Քարտեռին վրա մշտարթուն և աշխուրջ կհսկեն Սպարապետ Ստալին, իր կողքին ունենալով Ա. Միկոյան, Գրիգոր Հարությունյան և Նախագահ Պապյան: Ձախ թևին վրա իրենց սեգ ճակատով կանգնած են հայրենական պատերազմի հերոսները: Ու հոն է հայ զորավարներու ավագանին Սպարապետ Ստալինի արծուաբեր և հոգածու նայուածքին տակ հասակ քաշած: Հոն է զորավար Բաղրամյան, ահեղ դուշագնամարտերու անվահեր առյուծը: Հոն է. Ն. Սաֆարյան՝ 89-րդ Թամանյան—Պերլինյան զորաբաժնի հրամանատարը: Հոն այս ցուցատախտակին վրային քեզի կխոսին մեր 63 զորավարները, Սովետ Միության 96 հերոսները և 35.000 պարգևատրված մարտիկները...

Աչին փոված է լուսասփյուռ մայրաքաղաքը՝ Երևանը. Ստալինյան պողոտա, Շահումյան հրապարակ, Տերյան փողոց, հոյակերտ պալատներ, հայ աշխատավորին օրհնյալ քրտինքով ծլած, հայ բանվորին ժիր բազուկներով ծաղկած քաղաք մըն է դիմացդ, որ իր դյուքական տեսքով կրնա ժամերով արձանացնել քեզ իր առջև, բայց այցելուներու բազմութենեն հրմշտկված կըքալես տեղդ գիշելով ուրիշներուն:

Նրբանցքին մեջ խուռն բազմություն մը կարոտագին կդիտեն ակադեմականները՝ Օրբելի, Մալխասյան, Տերտերյան, Բունիաթյան, Աճառյան...

Ակադեմականներուն դրացի են գիրի վարպետները՝ Հայ բանաստեղծության վաստակաշատ վարպետ Ավ. Իսահակյան, տաղանդաշատ Գուրգեն Բորյան, Սիլվա Կապուտիկյանը, «Մեր աշխարհի Առաջնորդն է ձեզ կանչում տուն» երգող Աղավնին, անխոնջ քերթող Գեղամ Սարյանը, աննման Արազին:

Հանկարծ արդյունաբերության մարզին մեջ կիլնաս: Սինթեթիք քառուղկի գործարան, ուր 13.000 բանվորներ կաշխատին, շինանյութերու տասներկու գործարաններ՝ շիմենթո, տուֆ, կղմինդր, աղյուս, ապակի... արտադրող: Ահա պղնձահանքեր, Արարատ գինեգործարանը, ջրաէլեկտրակայաններ, որոնք տարեկան 380 միլիոն քիլովատ ժամույժ կհալթայթեն մեր ժողովուր-

դին: Ուշադրություն կգրավեն կաշիի գործարանը. «Վալբերաններ» կմոլտամ բնագրաբար: Պահ մը կհիշեմ կոշիկի գործարանի հանգանակության օրերուն կարգ մը վարձկան հուշարարներու շնչած սուտերը. Հայաստան կաշի չկա, Հայաստան կոշիկի գործարան չկա... Հայաստան կոշիկ հագնող ալ չկա, պիտի ըսեին, եթե չխաչեին: «Իշխանաձուլը տես» կծայեն քովիկես բարեկամ մը: Կնաչիմ, տարեկան 900 թռի իշխանաձուլի պահածո կարտադրե Սեան: Քիչ անդին սիկարեթի գործարան մը «Սասունցի Դավիթ», «Արմենիա» ընտիր գլանիկներ արտադրող. Ձեթ-օճառի գործարանը նվազ կարևոր չէ, լենինականի հյուսվածեղենի մանարանը հսկա մըն է արդեն 63.000 իլիկներով... Քառորդ դարու ընթացքին 23,4 անգամ բարձրացած է Հայաստանի արդյունաբերության մակարդակը:

Հապա գյուղատնտեսությունը: Այսօրվան հայ գեղջուկը հնամաշ մանգաղին ու կոտրած արորին տեղ տրաքթորի, շարքացանի և այլ կատարելագործված մեքենաներու կոթնած, առավելագույն բերքը կը վերցնեն հողեն: Պերճախոս են թվանշանները: Պողատու այգիներու տարածությունը 1.500 հեթար էր 1919-ին և 19.800-ի բարձրացած է 1943-ին: Խաղողի այգիներու տարածությունը նույն շրջանին անցած է 5.100-են 23.000-ի, բամբակինը՝ 3.900-են 16.000-ի, ցորենինը՝ 60.000-են 400.000-ի, մանր եղջյուրավորներու տոկոսը 325.000-են 1.700.000-ի հասած է:

«Միայն Սովետ Իշխանության գաղափարը Հայաստանի բերավ խաղաղության և ազգային վերածնունդի հնարավորություն» բուսած չէ՞ր Ստալին:

Մակընթացություն և տեղատվություն: Դարձյալ նրբանցքին մեջ եմ: Այս անգամ երգահաններու, երաժիշտներու, նկարիչների դիմացն եմ: Պրոֆ. Սառաչյան տնորեն երաժշտանոցին— երգահան Տիգրանյան, որուն անունին տակը գրած են «Ճաստ տարեկան հասակեն կույր»: Ձեմ զարմանար ամենակին: Գիտեմ թե Սովետ Հայաստանի մեջ կույրն ալ, հաշմանդամն ալ, կաղն ու կուզն ալ կծառայեն հայրենիքին և իրենց ֆիզիկական թերությունը երբեք արգելք չի հանդիսանար իրենց ստեղծագործությանը: Տեր-Ղևոնդյան, Գյուրջյան և ահա Մարտիրոս Սաղյանը՝ Արարատի ստորոտը նըստած, անոր երկնամերձ գագաթը կուղվագծեն պաստառին վրա:

Քիչ մը ալ կհառաջանամ: Սունդուկյան

տրամաթիկ, Սպենդիարյան օրերա, Հայկական ֆիլհարմոնիա, Թատերական ինստիտուտ, Երևանի ռուսական թատրոն...

Անկյունը ապակեդարան մը՝ Հայաստանեն ստացված հրատարակություններով բեռնավոր-բազմագույն կողքեր, գեղատիպ խորագիրներ, գեղարվեստական տպագրություն: «Այս գրքին տպված է քսան հազար օրինակ», կկարդամ գրքին վերջին էջին վրա: «Այս գրքին տպված է երեսուն հազար օրինակ» մեկ ուրիշ մատյանի մեջ... Երանելի գրողներ, արտասահմանի ձեր գրչեղբայրները հաճախ սնտուկներու խորշերուն մեջ կթաղեն իրենց ձեռագիրները, որոնց հրատարակությունը եթե հանձն առնե «բարերար» մը, հասույթը կծառայի շիրմաքար մը կանգնելու իրենց հողմակույտին վրա: Հոս տակավին ի գործ է «գնա մեռի, եկուր սիրեմ»-ի սնամեջ սկզբունքը:

Կանգ կառնեմ համալսարանի շենքին առջև: Տեղ մը պատկառազու պրոֆեսորներ առույգ ու կայտառ ուսանողներուն կղթափանդեն: Ուրիշ տեղ մը գիտական դասախոսներ գրույց կրնեն անոնց հետ. և կամ-փոփեմ՝ 68 մասնագիտական հաստատություններ, իննը ինստիտուտներ, 1134 դպրոցներ, 250 հազար աշակերտություն, 12.000 ուսուցիչներ, թվանշաններ են ու փաստեր՝ թե հերոսական ազգը ի հեճուկս լողանի մեջ հայ ժողովուրդը թաղել փոքր-ծողներուն անմահ է և կստեղծագործե:

Ինքզինքս կգտնեմ էջմիածնի առջև: Հոն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Կատաբերեմ անոր ազգու կողը Երեք Մեծերուն ուղղված: Ահա Պոլյանսկին: Կտեսնեմ Ճոնսոնը, որուն հիացումը չափ ու սահման չճանչցավ Սովետական Հայաստանի և անոր երջանիկ ժողովուրդին հանդեպ, ու ահա Տանն Կիլիկիո ալևոր Հայրապետը, միշտ կորովի ու կայտառ, միշտ երիտասարդ պիտի ըսեի, քանի որ հակառակ ութսուն տարիներու բեռան, ինքզինքը ձեր չնկատեց Իսահակյանի հոբելյանական հանդեսին խոսած փակման ճառին մեջ: Կխորհրդածեմ իր քիչ առաջ ըսած խոսքերուն. — «Հաստատ կերպով կհավատամ, թե Լիբանանահայ գաղութը մոտ ապագայում կարժանանա Սովետական Հայաստանի յուսալայծառ ու կենսատու արևը ողջունելու բախտին»:

Հայրենիքին հրավերը սրտագին է ու ան-

կեղծ. «Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը հույսերով, մեր հոգիները անձկալի կարոտով ու մեր ձեռքերը ծաղկեպսակներով լցված, սպասում ենք ձեզ» կգրե պրոֆ. Աճառյան. «Թողեք հեռու աշխարհներին որբությունը, եկեք իմ անտուններ, հայրենի տան դռներն են բաց» կձայնակցի Աղավնի:

Այո, կուզանք, տասնյակ հազարներով խառնելու և ձեզի հետ մեր անսահման երախտագիտությունը հայտնելու այս բոլոր նվաճումներուն ակնադբյուրը եղող Հայ Ժողովրդի հայր Ստալինին: Մենք կուզանք ձեզի հետ կողք կողքի ծառայելու մեր հայրենիքին:

Պիտի գանք, մոտ է ժամը ողջագուրումի՝
Վ. Ա.

Փակվեցավ Սովետ Հայաստանի ցուցահանդեսը:

Ցուցահանդեսի տևողության 17 օրերու ընթացքին այցելողներու թիվը հասավ 75 հազար հոգի:

Կրնանք ըսել թե ամբողջ Պելլոթա հայությունը, այր թե կին, մեծ թե փոքր առանց բացառության այցելեցին ցուցահանդեսը: Մեծ թվով արաբներ ևս հիացմունքով այցելեցին ցուցահանդեսը:

Այս ցուցահանդեսը սովորական և աննշան ցուցադրություն մը չէր, այլ հայրենասիրական կարևոր ձեռնարկ մը, որ անախարիթաց հայրենասիրությամբ վարակեց զայն տեսողները, Ամեն անոնք, որոնք ցուցահանդեսին դուրս կելլեին, իրենց հոգիներուն մեջ կզգային հպարտանք մը, որ հայրենիքին ներկա իրականությունը կը պատկերացներ: Շատեր աղոթքով ու երկյուղածությամբ կմտնեին սրահեն ներս, զգալով որ իրենց առջև պիտի գտնեն մայր հայրենիքը՝ իր նվաճումներովը և նախանձելի կյանքովը: Ոչ մեկ գիրք կամ թերթ, ոչ մեկ բանասիրություն կամ հանդես պիտի չկրնար այնքան կենդանություն և հետաքրքրություն ստեղծել Սովետական Հայաստանի հանդեպ, որքան այս ցուցահանդեսը, որ անախարիթաց հաջողություն մը եղավ Սովետ Հայաստանի Բարեկամներու Ընկերակցության համար՝ իր առաքինությունը լավագույն կերպով կատարելու տեսակետին:

(«Ժողովուրդի ձայն» փետրվ. 10 և
26 1946 թ.)